

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ

ԵՎ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ


•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

1(26)

2022



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ

Ավետիսյան Յու. Ս., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ. Վ., Կատվայան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Մոհամմադի Մ. Ս. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սարգսյան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Аветисян Ю. С., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Катвалян В. Л., Кортландт Ф. (Нидерланды), Мохаммади М. М. (ИРИ), Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулус (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Avetisyan Yu. S., Brutyan L. G., Donabédian-Demopoulos A. (France), Galstyan A. S. (deputy chiefeditor), Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Khachatryan G. K., Kortlandt F. (Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sakayan D. G. (Canada), Sargsyan A. E., Sargsyan M. A. (editorial secretary), Simonyan N. M. (deputy chief editor), Ter-Merkeryan R. (France), Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն 2022

ՀԱՅ ԼԵԶՎԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Մ.Ա. Սարգսյան

Ականավոր լեզվաբան-փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադ. Էդուարդ Աթայանը ծնվել է 1932թ. փետրվարի 10-ին, Երևանում: Դպրոցական կրթությունն ավարտել է ոսկե մեդալով, բուհականը՝ գերազանցության դիպլոմով: Բուհական կրթությունը ստացել է Երևանի օտար լեզուների ինստիտուտում, այնուհետև սովորել ասպիրանտուրայում՝ ընդհանուր լեզվաբանություն մասնագիտացմամբ: Ասպիրանտուրան ավարտելուց հետո անցել է դասախոսական աշխատանքի՝ դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: Դասախոսական աշխատանքը Աթայանի գիտամանկավարժական գործունեության անքակտելի մասն էր. մինչև կյանքի վերջը գիտնականն աշխատել է Երևանի պետական համալսարանում:

Էդ. Աթայանը գիտական և դասախոսական աշխատանքը հմտորեն զուգակցել է կրթության կազմակերպման գործին՝ ղեկավարելով Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի լեզվաբանության ամբիոնը, այնուհետև Երևան պետական համալսարանի ռումանագերմանական բանասիրության, լեզուների տիպաբանության, ռուսաց լեզվի տեսության և մեթոդիկայի ամբիոնները:

1965թ., հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը, Էդ. Աթայանին շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1984թ., մեծ լեզվաբանը, ընդլայնելով իր գիտական հետաքրքրությունների շրջանակը, պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Լեզվական և արտալեզվական իրա-

կանության փոխհարաբերության կարգային-մեթոդաբանական քննություն» թեմայով (ռուսերեն)՝ ստանալով փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նրա այդ և մյուս աշխատությունների վերաբերյալ բարձր կարծիք են հայտնի աշխարհահռչակ գիտնականներ Լ. Ելմսլեր, Ա. Լոսեր և ուրիշներ: Պաշտպանությունից երկու տարի անց (1986թ.) Աթայանն ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ տասը տարի անց (1996թ.)՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Էդ. Աթայանի գիտական ժառանգությունն իր ուրույն տեղն ունի ոչ միայն հայ, այլև համաշխարհային լեզվաբանության և հատկապես լեզվափիլիսոփայության մեջ: Գիտնականը թողել է գիտական և մշակութաբանական-հրապարակախոսական հարուստ ժառանգություն՝ բազմաթիվ մենագրություններ և շուրջ վեց տասնյակ հոդվածներ: Նրա լեզվաբանական ուսումնասիրությունները վերաբերում են լեզվի կառուցվածքային շարահյուսությանը, արտալեզվական իրականության և մարդկային գործունեության տարբեր դրսևորումների և լեզվի կառուցվածքի փոխհարաբերությանը:

Առավել արժեքավոր են Էդ. Աթայանի «Կառուցվածքային շարահյուսության առարկան և հիմնական հասկացությունները» (Ե., 1968, ռուսերեն), «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառության հայեցակերպերը» (Ե., 1976, ռուսերեն), «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» (Ե., 1981), «Լեզու և արտալեզվական իրականություն. գոյաբանական համեմատության փորձ» (Ե., 1987, ռուսերեն), «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն» (Ե., 1992, ռուսերեն) մենագրությունները:

Գիտության մեջ յուրահատուկ մտածողության տեր լեզվաբան-փիլիսոփայի առաջին գիրքը կառուցվածքային լեզվաբանության վերաբերյալ յուրատեսակ աշխատություն է: Նրանում արդեն իսկ ընդգծվում է աթայանական մտածողության յուրահատկությունը, հայտնի փաստերից տարբերվող տեսակետների առաջաշումը, հինը, տիպիկը, հայտնին նորովի մատուցելու բացառիկ կա-

րողությունը: Էդ. Աթայանը, հավատարիմ մնալով կառուցվածքային լեզվաբանության տերմինաբանությանը, այնուամենայնիվ շեղվում է ընդհանուր օրինաչափությունից, առաջ է քաշում լեզվաբանության ուսումնասիրության նոր մեթոդ և դրանով իսկ կանխորոշում իր գործունեության ողջ ընթացքը և ուրույն ուղին: Պատահական չէ, որ հեղինակը նշում է. «Ես երբեք չէի ասի հայտնի բան, եթե հնարավոր լիներ ասել նորը, արդեն ասվածը կրկնելը կհամարեի ձանձրալի և անիմաստ»¹:

Լեզվի բնույթի հարցերի քննություննից էլ սկսվում են Էդ. Աթայանի լեզվափիլիսոփայական դիտարկումները: Հեղինակն իր հայացքներով կարծես նոր շունչ է տալիս հումբոլդտյան շրջանի լեզվամտածողությանը, կառուցվածքային լեզվաբանության և ժամանակակից մեթոդաբանությամբ հարստացնում է լեզվաբանության՝ իր ժամանակի ըմբռնումները: Լեզվափիլիսոփայական հայացքները հեղինակը աստիճանաբար զարգացնում է իր հաջորդ մենագրություններում՝ «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառության հայեցակերպերը», «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը», «Լեզու և արտալեզվական իրականություն. գոյաբանական համեմատության փորձ»: Հիշատակելի է, որ Աթայանը բնական և ընդունելի էր համարում լեզվաբանականի և փիլիսոփայականի փոխներթափանցումը: Այսպես, օրինակ՝ կարծում էր, որ լեզուն ոչ միայն աշխարհում է, այլև աշխարհի մի մասն է, բացի այդ՝ որոշ դեպքերում աշխարհն ինքն է համարվում լեզու:

Այդ աշխատություններով Էդ. Աթայանը հայ փիլիսոփայության մեջ բերում է նոր մտածողություն՝ շաղախված «լեզվական աշխարհի ներքին կերպավորման և արտաքին վերաբերության» հետ: Աշխարհը դիտարկելով որպես *Ոլորտների ոլորտ*՝ հեղինակը առանձնացնում է լեզվական և ոչ լեզվական ոլորտները: Ըստ այդմ՝ լեզվական ոլորտը՝ որպես էություն, հակադրվում է ոչ լեզվականին, բայց միևնույն ժամանակ նրա հետ կազմում է մեկ ամբողջություն:

¹ Э. Атаян, Душа и ее отображения, М., 2012, с. 18.

Հենց այստեղ է դրսևորվում Աթայան փիլիսոփայի դիալեկտիկական մտածողությունը, երբ լեզուն և արտալեզվական իրականությունը ներկայացվում են դիալեկտիկական հակադրամիասնության մեջ, ճիշտ այնպես, ինչպես օբյեկտը և սուբյեկտը, արտաքինը և ներքինը և այլն:

Էդ. Աթայանի աշխատությունների ինքնատիպությունը պայմանավորված է երևույթների քննության նոր եղանակով, ինչպես ինքն է կոչում, *հայեցակերպային* մոտեցմամբ: Ինչպես գիտենք, սուսյուրյան հայտնի երկատումները դեռ երկար ժամանակ գերիշխող էին: Լեզվաբանական աշխատություններում երևույթների քննության մեջ կիրառվում էին այդ երկատումները, ինչպես, օրինակ՝ լեզու և խոսք, բովանդակություն և արտահայտություն, հարացույց և շարակարգ, նշանակիչ և նշանակյալ և այլն: Աթայանը, սակայն, հավատարիմ իր սկզբունքին, փորձեց հաղթահարել իշխող այս դիրքորոշումը և առաջարկել հայեցակերպային իր մոտեցումը: Հեղինակը համոզված է, որ հնարավոր է ի մի բերել նաև երկատումների բևեռային բաղադրիչների կոնկրետ միասնությունը ներկայացնող միջանկյալ օղակները: Հակադիր հայեցակերպերի և դրանք կապակցող օղակների դիտարկումը, Աթայանի կարծիքով, լեզվաբանության պատմության ընթացքում անտեսվել է, մինչդեռ հենց դա է դժվար ըմբռնելի և որոշիչ²:

Էդ. Աթայանը համարվում է հայ նշանագիտության հիմնադիրը: Նրա նշանագիտական դիտարկումները գերազանցապես տարբերվում են նշանագիտական ընդհանուր դիտարկումներից ու պատկերացումներից: Աթայանը այստեղ ևս դուրս է գալիս ավանդականի շրջանակից՝ ստեղծելով նշանագիտական յուրատեսակ համակարգ: Եթե ավանդական նշանագիտության մեջ ընդունված էր նշանակիչ և նշանակյալ երկատումը, ապա Աթայանը առաջար-

² Էդ. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981, էջ 34: Մեր աշխատանքներից մեկում, իբրև մի կապող օղակ՝ լեզվի և խոսքի միջև, դրվում է ոճը: Տե՛ս. Վ. Գ. Համբարձումյան, Լեզու, ոճ, խոսք // «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182-191 (ծանոթ. խմբ.):

կում է հաշվի առնել նաև տարբեր միավորների մեջ չափումների գուգակցումը, քանի որ վերջիններս ևս նշանային բնույթ ունեն և տվյալ միավորների մեջ հանդես են գալիս որպես առանձին նշան կամ ենթանշան, ինչպես Աթայանն է բնորոշում, *նշան՝ նշանի մեջ կամ ներքին նշան*: Այսպիսով՝ դիտարկելով նաև այդ չափումների միահյուսումը՝ Աթայանը միավորը համարում է նշանային միկրո-համակարգ, իսկ գուգակցումները հաշվարկում է արտաձական ե-դանակով: Ըստ այդմ՝ առանձնացվում են ոչ միայն առանձին բովանդակություն և արտահայտություն, դրանից անկախ էլ *լեզու և խոսք*, այլև *լեզվական բովանդակություն, խոսքային բովանդակություն, լեզվական արտահայտություն, խոսքային արտահայտություն*: Վերջիններիս շարժման ուղղություններով էլ պայմանավորված՝ առաջանում են համապատասխան «ներքին նշանները»՝ գոյաբանական կամ իմացաբանական:

Անվանի լեզվաբան-փիլիսոփայի աշխատությունները յուրա-հատուկ ձևով են շարադրված. դրանք կարծես լրացնում ու շարունակում են մեկը մյուսին: Հեղինակի հայացքները աստիճանաբար խորանում ու փոխլրացվում են նոր գաղափարներով, նախորդ աշխատության դիտարկումները նոր եզրահանգումների են հանգեցնում: Երբեմն թվում է՝ հեղինակը տվյալ աշխատության մեջ լիովին չի բացահայտել իր դիրքորոշումը, որպեսզի ընթերցողն այդ բացահայտումը փնտրի հաջորդ աշխատության մեջ: Այսպես, օրինակ՝ «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» աշխատության վերջին հատվածում՝ հավելվածում, Աթայանն արդեն իսկ ուրվագծում է իր նոր գրքի գաղափարները, ակնարկում ազատության փիլիսոփայության մասին, այդ թվում՝ ստեղծագործական ազատության. «Ճանաչողության համար ճանաչողությունը ինքն իրենից հրաժարվող, դեպի կյանքը նպատակաուղղված, բուն ճանաչողության այլասերված փոխակերպույթն է, որն ստեղծագործական հիմունքի հավելյալ արգասիք է միայն. մարդու մեջ իսկական մարդկայինը ոչ թե Homo Sapiens-ը

կամ Homo Cognoscens-ն է, այլ Homo Creator-ը՝ կերտող՝ ոչ թե արդյունքի, այլ որոնման մարդը...»³:

Ինչպես ինքը՝ Աթայանն է բնորոշում, իր աշխատություններում, անդրադառնալով և ընդգրկելով նորանոր *ոլորտների ոլորտները*, լեզվաբանությունից աստիճանաբար անցում է կատարում դեպի լեզվի փիլիսոփայության բնագավառ, իսկ լեզվափիլիսոփայությունից էլ՝ արդեն բուն փիլիսոփայությունը: Աթայանի փիլիսոփայական հայացքների կիզակետում ազատության փիլիսոփայությունն է, ազգային ինքնագիտակցությունը, անազատության հոգեբանությունը: Ազատության և անազատության փիլիսոփայության քննությունը հեղինակը լրացնում է հոգեբանական դիտարկումներով, քանի որ համոզված է, որ ազատությունը առաջին հերթին հոգեբանական կարգ է:

Աթայանը անհագ հետազոտող էր, նրան շարունակ նոր հորիզոններ էին հետաքրքրում, նոր բացահայտումներ: Ինչպես ինքն է նշում. «Այժմ ինձ համար բացահայտումների մի այնպիսի շրջան է սկսվել, որի համեմատ իմ նախկին կյանքի ամբողջ ընթացքը կարող է համեմատվել կրիայի քայլի հետ: Ամեն անգամ մենք հայտնվում ենք մի նոր և մարդկանց դեռևս անճանաչելի տեղում: Եվ այդ թռիչքն ինձ համար այնքան թանկ է, քանի որ ինձ հետ է իմ ոգեշնչումը, իմ կիսատ, անօգնական և այդքան համառ ոգեշնչումը, որն ինքը պիտի որոշի՝ մնալ առկա կարգավիճակում, թե տեղափոխվել հեռակա»⁴:

Աթայան գիտնականի մասին խոսելիս չպետք է մոռանալ նաև մի այլ բնագավառ՝ *տերմինաբանությունը*: Աթայանը՝ որպես նորի ջատագով և մեծ նորարար, չէր կարող անմասն մնալ տերմինաստեղծման գործընթացից: Փաստ է, որ լեզվափիլիսոփայության ոլորտը հարստացել է նոր տերմիններով, որոնցից շատերը, իհարկե, հեղինակային կիրառության սահմաններում են, բայց նայնպես յուրատիպ և աթայանական շնչով լի: Նշենք, որ ինչպես Աթայան

³ *Էդ. Աթայան*, նշվ. աշխ., էջ 386:

⁴ *Չ. Ադայան*. Указ. соч., с. 18:

լեզվափիլիսոփայի հայացքները, այնպես էլ այս ոլորտը դեռևս լիարժեք ուսումնասիրության չի ենթարկվել, դեռևս չկա հստակ հաշվարկ, վիճակագրություն, տերմինների վերլուծություն: Նշենք, սակայն, դրանցից մի քանիսը: Այսպես, օրինակ՝ *բառային սկզբնաբուն* դատարկ հնչյուն՝ դատարկաբանություն իմաստով, *բառային մոյլացիա*՝ եթե ոչ դատարկ, ապա անհոդաբաշխ հնչյուն իմաստով, *նշանակցում*՝ կոննոտացիա կամ նշանակություն իմաստով, *ներակա*՝ ներլեզվական իմաստով, *անդրանցական*՝ արտալեզվական իմաստով և այլն:

Կյանքի վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում՝ 1985-1990-ական թթ. Աթայանը հաջողությամբ հանդես է եկել նաև որպես *հրապարակախոս*՝ գրելով բազմաթիվ հոդվածներ այն օրերի հրատապ իրադարձությունների մասին:

Մեծ լեզվաբանը, փիլիսոփան չի սահմանափակվել իր գիտական և գիտամանկավարժական գործունեությամբ: Քչերը գիտեն, որ էդ. Աթայանը զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ՝ հայերեն թարգմանելով եվրոպական և ռուս հայտնի գրողների և փիլիսոփաների աշխատանքներ, երբեմն էլ՝ դրանցից կարևոր պատահիկներ: Հիշատակելի է, որ դրանց մի մասը դեռևս տպագրված չէ:

Իր վերջին գիրքը՝ «Հոգին և նրա արտացոլումները», հեղինակը գրում էր զուգահեռաբար երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն, որը, սակայն, այդպես էլ չհասցրեց ավարտել: Գիրքը լույս տեսավ հետմահու՝ 2012 թ. Մոսկվայում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կարող ենք փաստել, որ Աթայանի գիտական ժառանգությունը հիմնարար նշանակություն ունի գիտության տարբեր բնագավառների՝ բուն լեզվաբանության և փիլիսոփայության, լեզվափիլիսոփայության, լեզվանշանագիտության համար:

Պետք է նշել, որ Է. Աթայանի գործունեությունը ըստ արժանվույն գնահատվել է. նա պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մե-

դալով: Թե՛ կենդանության օրոք, թե՛ հետմահու անվանի լեզվաբանի, փիլիսոփայի մասին խոր ակնածանքով և պատկառանքով են արտահայտվել նրա ժամանակակիցները, նրա հետևորդները, գիտության ճանապարհի ուսուցիչները և աշակերտները: Հիշատակելի են Աթայանի դոկտորական ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, Աթայան լեզվափիլիսոփայի մեծ ուսուցիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Լոսևի խոսքերը. «Էդ. Աթայանը ոչ միայն մեծ աշխատանք է կատարել, այլև մի հսկայական առաջընթաց քայլ է արել ամենաբարդ գիտակարգերից մեկի ուսումնասիրության և տեսության մեջ: Աթայանի դոկտորական ատենախոսության պաշտպանությունը որոշակի տոնակատարություն է մեր խորհրդային գիտության մեջ»⁵:

Անվանի գիտնական Էդ. Աթայանի ինքնօրինակ փիլիսոփայական հումանիզմը և լեզվաբանական աշխարհընկալման տեսությունը հետագայում ևս լինելու են նույնքան կարևոր և անկրկնելի:

⁵ Э. Атаян, Указ. соч., с. 238.

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր . Ց Դ Ա Դ Ի . A R T I C L E S .

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՇԽԱՐՀԻ ՇԵՐՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
(ըստ Էդ. Աթայանի՝ մարդկության կյանքի մակրոփուլերի
տեսության)

Քանասիր. գիտ. թեկնածու Ս. Գ. Հովհաննիսյան

Հիմնաբառեր: Լեզու, լեզվի զարգացում, ներքին աշխարհ, օբյեկտիվ իրականություն, անհատական լեզվաշխարհի զարգացման փուլեր:

Լեզուն՝ որպես իրականության հնչյունային վերարտադրություն, մարդուց դուրս հնարավոր չէ դիտարկել: Մյուս կողմից՝ ժամանակակից մարդու համար այն իսկապես գոյություն ունի նաև իրենից դուրս՝ որպես օբյեկտիվ իրականության անքակտելի մի բաղադրիչ, որպես ընդհանուր, վերացարկված կամ վերացարկելի մի գոյություն, որը կիրառականություն, գործառնություն է ստանում այդ իրականության այլ բաղադրիչների միջև որոշակի հարաբերություններ առաջանալուն գուգահեռ:

Այստեղ «ժամանակակից մարդ» արտահայտությունը պայմանականորեն ենք գործածում՝ նկատի ունենալով օբյեկտիվ իրականության մասին առնվազն կենսական տարրական գիտելիքներ ունեցող մարդուն, այսինքն՝ նախամարդկային հասարակարգի փուլը արդեն հաղթահարած մարդ արարածին: Այս առումով հանդիպադրելի են ժամանակակից մարդու և ընդհանրապես մարդկային ցեղի լեզվաշխարհի ձևավորման ու զարգացման ընթացքները: Ցանկացած իրողության զարգացման ընթացք կարելի է առնվազն պայմանականորեն բաժանել որոշակի փուլերի, որոնց շնորհիվ մատչելի է դառնում տվյալ իրողության կայացման դիտարկումը: Էդ. Աթայանի՝ մարդկության կյանքի մակրոփուլերի տեսությունն ըստ էության կարելի է պատճենել նաև մարդկային լեզվի զարգացման ընթացքի վրա, և սա այնքան էլ զարմանալի չպիտի թվա, քանի

որ լեզվի զարգացումն ուղղակիորեն կախված է մարդու՝ որպես օրգանիզմի և բանական էակի զարգացումից¹:

Մարդկային հասարակությունը, իր առաջացման նախնական փուլերում հայտնվելով չբացահայտված-չբացատրված միջավայրում կամ իրականության մեջ, ասես ակամա ստիպված է լինում մասնիկ առ մասնիկ ճանաչելու և ընկալելու այդ իրականությունը՝ առաջին հերթին մի տեսակ բնագոյով փորձելով ապահովել իր գուտ ֆիզիկական ապահովությունն ու գոյությունը, հետո միայն անցնում է այդ իրականության վերլուծությանը (ընդ որում իրականության վերլուծության գործընթացը կարող է ընթանալ իրականության վերաբերյալ արդեն ամբարված գիտելիքի սահմաններում)²: Եվ դա հետաքրքիր մեխանիզմ է այնքանով, որ սեփական գիտելիքի սահմաններում վերլուծելով իրականությունը՝ յուրացվում են նաև այլ, նոր տեղեկատվություն-միավորներ: Այդ նոր տեղեկատվություն-միավորները կարող են լինել ներքին հիմնական վերլուծությանը զուգահեռ ընթացող ընդհատական կամ ամբողջական՝ ձևաբովանդակային առումով չտարորոշված, և կարող են լինել հիմնական վերլուծությանը անմիջաբար կամ որևէ միջարկումով հաջորդող, դարձյալ ընդհատական կամ ամբողջական՝ ձևաբովանդակային առումով տարորոշված: Սա նշանակում է, որ դեռևս չնյութականացած լեզուն, այն լեզուն, որը դեռևս անվանում է անհատական ներքին իրականությունը՝ իր բոլոր հնարավոր զարգացումներով, ներունակ է մի տեսակ «ինքնասնման»՝ սեփական առկա տարրերից նոր միավորների ծնունդ տալու ճանապարհով, այսինքն՝ ցանկացած տեղեկատվություն, որը արդեն առկա է մարդու ներքին իրականության մեջ, կարող է հիմք դառնալ այլ տեղեկատվության գոյացման համար, օրինակ՝ ինչ-որ մեկին ասված ընդամենը մեկ

¹ Ст' у Э. Атаян, Душа и ее отображение, Москва, 2012, էջ 93 և հջ.:

² «Արդեն ամբարված գիտելիք» արտահայտությամբ նկատի ունենք տեղեկատվության այն ամբողջությունը, որ մինչև տվյալ վերլուծության պահը անհատի ենթագիտակցության մեջ առկա է, ընդ որում մի կողմից՝ իրեն մինչ այդ տրված կենսագործունեության ընթացքի ու միջավայրի, մյուս կողմից՝ այդ պահին վերլուծվելու ենթակա իրականության վերաբերյալ եղածը:

բառն իսկ բավարար է ընկալողի ներքին վերլուծության, այսինքն՝ լեզվական նոր միավորների առաջացման համար, ընդ որում այդ նոր միավորները կարող են ծավալային առումով կա՛մ համընկնել, կա՛մ չհամընկնել «ծնող» միավորի հետ: Այլ կերպ ասած՝ որպես տեղեկատվություն փոխանցված մեկ բառային միավորի վերլուծությունը կարող է դարձյալ մեկ բառ լինել կամ մի ամբողջ կապակցված միտք՝ նախադասությունից ընդհուպ մինչև տեքստ: Այնուամենայնիվ, այդ ինքնասնման գործընթացը ենթադրում է ձևախմբաստային գոնե հարաբերական որոշակիություն³ ունեցող այնպիսի տարրեր, որոնք կարող են որպես ելակետ ծառայել առավել խոշոր միավորների ձևավորման համար: Այս առումով՝ անհատական ներքին վերլուծությունների ծավալն ու որակը ուղղակիորեն կախված են տվյալ անհատի լեզվական աշխարհը բաղադրող ձևախմբաստային տարրերի քանակից և որակից: Այդ տարրերի իմաստային դաշտի ճկունության չափից է կախված դրանց՝ նոր միավորներ ձևավորելու հնարավորությունը: Օրինակ՝ եթե տվյալ բառը չի կարող կիրառություն ստանալ իր ուղիղ իմաստից տարբեր որևէ այլ իմաստով, ապա այդ բառից բաղադրվող ավելի խոշոր տեղեկատվական միավորները հիմնված կլինեն միայն նրա ուղիղ իմաստի վրա. սա բնականաբար սահմանափակում է տվյալ բառի գործածության հնարավորությունները: Եվ հանուն արդարության՝ արժե ընդունել, որ լեզվի արտահայտչականության անսահմանափակ հնարավորությունները պայմանավորված են ոչ այնքան կամ նույնիսկ ոչ թե բառերի ձևային քանակությամբ, այլ բառերի իմաստային դաշտի ճկունության չափով. չկան բացարձակ մենիմաստ բառեր, նույնիսկ ամենանեղ նշանակության մասնագիտական բառը կարելի է կիրառել՝ հիմնական իմաստին հավելելով որևէ այլ իմաստային երանգ:

³ Այստեղ վերապահորեն ենք խոսում բառի ձևիմաստային որոշակիության մասին՝ հաշվի առնելով այս միավորի իմաստային դաշտի հարափոփոխ լինելը (սկսած դիպվածայնորեն ներդրված իմաստներից ընդհուպ մինչև պատմական իմաստափոխություն) և նրա ձևի՝ հնչյունակազմի՝ ժամանակի ընթացքում զարգացման հակումը:

Ցանկացած անհատի (սկսած մարդկային հասարակության նախահայր առաջին առանձնյակից ընդհուպ մինչև ժամանակակից նորածինը) լեզվական աշխարհը սկիզբ է առնում սեփական ներքին և արտաքին օբյեկտիվ իրականությունների միջև իր համար որպես «կամուրջ» առաջացած ընդամենը մեկ բառից՝ այն առաջին անվանումից, որը ազդակ է դառնում գիտակցության նախատրամադրվածության՝ բուն գիտակցության վերածվելու համար: Եվ միայն այդ ժամանակամիջոցում է, որ բառը՝ որպես անվանող միավոր, կարող է ունենալ ընդամենը մեկ իմաստ կամ նշանակություն. միևնույն հնչյունային ձևը, յուրաքանչյուր անգամ կիրառվելով, ձեռք է բերում իր նախնական իմաստին գումարված այլևայլ հավելումներ՝ գերակշռորեն կամ նվազագույնս պահպանելով իր նախնական նշանակությունը: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ անհատի ներքին և արտաքին իրականությունների միջև առաջին կամուրջը՝ այն, ինչը «բառ» անվանեցինք, ձևային առումով համագործածական, հնչյունական «կայացած», հողաբաշխ տեսքով չէ ի հայտ գալիս:

Ուրեմն ամբարված գիտելիքը՝ սկսած իրականության բացահայտված-բացատրված միավորներից մինչև դրանց վերլուծությունները, ամբազրվում է լեզվական միավորների և դրանց միջև հարաբերությունների միջոցով: Սա հիմք է դառնում լեզվաաշխարհի ձևավորման համար, որը որոշակի շերտավորում, սահմանների ընդլայնման և իր իսկ սահմաններում զարգացման ներուժ ունեցող միշտ վերացական, աննյութեղեն գոյություն է՝ պարբերաբար գործնականություն, նյութեղենություն դրսևորելով՝ կախված տվյալ տարածաժամանակային պահանջներից, արտաքին գործոններից: Այս գործընթացը հենվում և կարգավորվում է «լեզվի երկու հիմնական յուրահատկություններով՝ ստեղծել բառեր, իսկ բառերից՝ նախադասություններ»⁴ :

⁴F. Armstrong, W. Stokoe, Sh. Wilcox, *Gesture and the Nature of Language*, Cambridge, 1995, p. 15:

Լեզվաշխարհի առանձին շերտերի ձևավորումը կախված է ճանաչողական գործընթացում ստացվող, հավաքվող միավորների որակից ու քանակից: Այդ շերտերն ըստ էության չեն կարող միաչափ զարգացած լինել և չեն կարող միևնույն չափն ունենալ: Լեզվաշխարհի շերտերի ծավալային հարաբերակցությունը ուղիղ համեմատական է ճանաչողական գործընթացին, այդ գործընթացի շրջանակներում ստացվող գիտելիքային միավորների արժևորմանը և վերլուծությանը, ինչպես նաև եղած գիտելիքի հետագա շրջանառման, կիրառության հաճախականությանը կամ պարբերականությանը: Անհատական լեզվաշխարհը ձևավորվում և զարգանում է գործնականում նույն մեխանիզմով, ինչ որ ընդհանրապես մարդկային լեզուն, սակայն մի էական տարբերությամբ. եթե մարդկությունը լեզվի, լեզվաշխարհի ձևավորման համար անցել է մի ամբողջ պատմություն՝ տարածաժամանակային հսկայական վայրիվերումներով և շրջապտույտներով, ապա անհատի լեզվաշխարհի ձևավորման և զարգացման համար պահանջվում է անհամեմատ փոքր ժամանակահատված: Նոր աշխարհ եկած մարդուն բառացիորեն մատուցվում են ֆիզիկական գոյության համար անհրաժեշտ իրականության հիմնական մասնիկները՝ իրենց հնչյունային վերարտադրությամբ՝ այդպիսով կրճատելով այն բարդ գործընթացը, որ ստիպված էր լինելու անցնել անհատը, եթե ինքնուրունաբար հաղթահարեր այդ ճանաչման, տարբերակման ընթացքը: Ժամանակակից անհատը ասես ազատված է իրականության մասնիկների վերաբերյալ տարրական գիտելիքները սեփական փորձով հավաքելու «բեռից», և նրան մնում է միայն անցնել լեզվաշխարհի զարգացման և ընդլայնման գործին կամ, ինչպես երբևէ ասվել է, զարգանալ ճիշից մինչև խոսք⁵: Անհատական լեզվաշխարհի զարգացումն ու ընդլայնումը կախված է տվյալ անհատի՝ իրականության արժևորման և իր իսկ գործունեության նպատակայնությունից, և ահա թե ինչու է տվյալ անհատի լեզվական աշխարհը վե-

⁵ Տե՛ս *O. Jespersen, Language: Its Nature, Development and Origin, Copenhagen, 1922, էջ 105:*

րացականորեն և ակամա մարդուն տրված լեզուն վերածվում «անձնական միտք-գաղափարի, որ ենթակա չէ բացատրության, թե ինչու հենց այդպիսին»⁶, դժվար է բացատրել: Այդ արժևորման ու գործունեության ձևը և որակն են թելադրում, թե տվյալ անհատի լեզվաշխարհը բաղադրող ո՞ր շերտը կլինի առավել կամ նվազ գերիշխող, և թե լեզվական ինչպիսի դրսևորումներ կլինեն առաջնային կամ երկրորդական կիրառության: Ըստ այդմ՝ լեզվական այս կամ այն դրսևորումները կարող են ունենալ դրսևորման, կիրառման մեծ հաճախականություն կամ պարզապես լինել պասիվ վիճակում՝ մնալով ասես պահեստային գիտելիքի հնարավոր արտահայտության ձև: Եթե մարդկության պատմության կտրվածքով ընդհանուր, վերացարկված կամ վերացարկելի լեզվաշխարհը ընդհանուր առմամբ նույն կառուցվածքն ու ծավալն ունի, ապա անհատական լեզվաշխարհների կառուցվածքն ու ծավալները երբեք չեն կարող կադապարային կամ ճշգրիտ կերպով համընկնել: Դրանք կարող են ընդամենը մոտ լինել իրար այն շերտերի առումներով, որոնցով որ սերտորեն առնչվում են միմյանց հետ: Ավելին, միևնույն անհատի լեզվաշխարհի շերտերի միջև գերիշխման դերերը և դրանց ծավալները ինքնին փոփոխական են՝ կախված տարածաժամանակային առանձին, անհատական կամ փոքր հատույթում տվյալ անհատի ունեցած գործունեությունից, իրականության վերլուծության ձևից ու որակից, ինչպես նաև նրա նպատակներից: Յուրաքանչյուր անհատ ապրում է կենսաբանորեն իրեն հասանելի իրականությունը՝ նախ կարևորելով իրականության պարզագույն մասնիկները, սովորելով ընդամենը ֆիզիկապես ապրել, և այդ ընթացքում ձևավորվում է նրա լեզվաշխարհի նախնական, հիմնական շերտը՝ ապահովելով առողջ կամուրջ իր ներքին և իրեն տրված արտաքին աշխարհի միջև, այնուհետև տեղի է ունենում վերելք դեպի լեզվաշխարհի մյուս շերտի ձևավորում, երբ անհատը արդեն արժեքներ ու գնահատականներ է տալիս իր հավաքած այդ տարրական գիտելիքներին՝ այդպիսով ակամա մեկուսացնելով, հետին պլան թողնելով այն

⁶ J. Hurford, *The Origins of Language*. Oxford, 2014, p. 28:

գիտելիքները, որոնք ընդամենը իր կենսական գոյությունն են ապահովում: Մրան հաջորդում է լեզվաշխարհի վերին շերտի ձևավորումը, որը իրականանում է տվյալ անհատի ներքին ու իրեն տրված արտաքին աշխարհի ոչ թե կամ ոչ այնքան բաղադրող միավորների, մասնիկների ճանաչման ու ամբարման հաշվին, այլ հենց այն կամրջի տեսակի, որակի, ծավալի գնահատման ու վերլուծության հաշվին: Օրինակ՝ մարդը ծնվում է կենսաբանական ծարավի զգացման նախատրամադրվածությամբ, դեռ չի ճանաչում ջուրը՝ որպես իրականության մասնիկ, նրան սովորեցնում են տվյալ կենսաբանական պահանջը բավարարելու ձևը և այն լեզվական միավորը, որով կարող է հետագայում ապահովել ծարավը հագեցնելու կենսական պահանջը, այդ պահին նրա համար ջուրը որպես արևոյթ և նրա անվանումը դեռ կարևորված են, սակայն իր զարգացման ընթացքում և՛ բառը, և՛ այդ կենսական պահանջը վերածվում են երկրորդականի՝ զրկվելով հատուկ ուշադրությունից՝ մնալով անհատի ընդհանուր գործունեության մի տեսակ երկրորդ ժապավենում: Ջրի մասին այդ տարրական գիտելիքը կարող է վերլուծվել՝ առաջացնելով լեզվաշխարհի երկրորդ մակարդակը, որտեղ անհատն արդեն գիտակցում է ջրի ու մյուս տարրերի տարբերությունը, դրանց միջև հարաբերությունները և այլն: Մրան հաջորդում է լեզվաշխարհի վերին մակարդակի առաջացումը, երբ մարդու համար ջուրը այլևս միայն ծարավ հագեցնելու ձև չէ, այդ բառի մեջ անհատն արդեն կարող է այլ որակի տեղեկատվություն փնտրել կամ տեղադրել (հիշենք, օրինակ, բառի բազմիմաստության, փոխաբերական իմաստով գործածվելու, կայուն դարձվածային կամ հեղինակային դարձվածներ կազմելու հնարավորությունները): Սա լեզվական միջավայրին անհատի վերջնականորեն հարմարվելու և իր տեղը գտնելու ընթացքն է, որի նախնական կամ տարրական մեխանիզմը հասկանալն ու բացատրելը կարծես թե հնարավոր է որոշակի փորձերի միջոցով⁷: Եվ այն հավերժական

⁷ Տե՛ս *М. Тимофеева*, Введение в экспериментальную когнитивную лингвистику, Новосибирск, 2010, էջ 72 և հջ.:

հարցը, թե ինչով է մարդը տարբերվում բնության մյուս օրգանիզմներից, կարծես թե կարելի է բացատրել լեզվաշխարհի նշված վերին շերտի գոյությամբ կամ գոյության նախադրյալով: Մարդու համար բավարար չէ ընդամենը կենսական պահանջների հիման վրա իրականության մասնիկների տարբերակումը, մարդը փնտրելու և արժևորելու անընդհատական գործընթացի մեջ է, և փաստորեն գերազանցապես ապրում է լեզվաշխարհի վերին շերտում կամ գուցե ապրում է այդ շերտի շնորհիվ:

Բնականաբար, այդ շերտերը միմյանցից խստորեն անջրպետված չեն, դրանք անընդհատ փոխադարձ անցումներ են ունենում, զանազան արտաքին գործոնների ազդեցությամբ պարբերաբար մի շերտը դառնում է մյուսների հանդեպ գերիշխող կամ՝ ընդհակառակը և այլն: Այսպիսի անցումների հաճախականությունն ու լեզվաշխարհի շերտերի հարաբերակցությունը ևս կախված է տվյալ անհատի կամ հասարակության կենսագործունեության որակից: Այսպես, օրինակ, մարդկության պատմության տարբեր ժամանակափուլերում տեխնիկական կամ մշակութային տարբեր խտություններ են գոյություն ունեցել, և այդ խտություններից կախված՝ մարդկային լեզուն ընդլայնվել և լրացվել է համապատասխան անվանողական միավորներով: Ճիշտ այսպես էլ անհատական լեզվաշխարհի առումով է. կյանքի տարբեր փուլերում միևնույն անհատի լեզվական աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ՝ կախված տվյալ փուլում նրա գործունեությունից: Վաղ մանկության շրջանում նրա խոսքը բաղկացած է թոթովանքներից, որոնք ընդամենը անվանում են նրա համար կենսականորեն անհրաժեշտ իրերը և հարաբերությունները, աստիճանաբար խոսքի որակը հղկվում, և լեզվաշխարհն ընդլայնվում է՝ ձեռք բերելով անկրկնելիություն՝ այդպիսով ասես նույնանալով տվյալ անհատի հետ այնքան, որ նույնիսկ խոսքային որոշակի միավորների շնորհիվ կարելի է որսալ այս կամ այն անձնավորության դիմագիծը, թե. «Նա այդպիսի բան ասած չէր լինի, որովհետև նա այդպես չի խոսում», կամ՝ «Գիտեի, որ այդպես կպատասխանի, դա նրա բառն է»:

Շնորհանուր մարդկային լեզվաշխարհը երանգային կամ արտահայտության որակների առումով չեզոք է, իսկ անհատական լեզվաշխարհի յուրաքանչյուր շերտը կարող է ունենալ երանգային կամ որակային տարբեր դրսևորումներ (խոսքը ոճերի մասին է), որոնք գերազանցապես պայմանավորված են դարձյալ արտաքին գործոններով: Լեզվական աշխարհի զարգացման մեջ կարելի է տարբերակել 3 փուլ, որոնցից առաջինը պարզապես լեզվական գիտելիքի ամբարման փուլն է, որին զուգահեռ տեղի է ունենում մարդու իրականության ճանաչման գործընթացը, երկրորդը՝ այդ գիտելիքի ամրակայման ընթացքն է, իսկ երրորդը ամբարված գիտելիքի վերլուծության և օտարման փուլն է, որի շնորհիվ տեղի է ունենում մարդու հոգեմտավոր և լեզվամտածական աշխարհների կատարելագործումը ընդհուպ մինչև մշակութային արժեքի վերածվելը:

Ключевые слова: язык, развитие языка, внутренний мир, объективная реальность, этапы развития личного языкового мира.

Ս. Գ. Օգանեսյան - Проявления слоев индивидуального языкового мира (по теории Э. Атаяна о макроэтапах человеческой жизни).- В развитии языкового мира можно выделить 3 этапа, первый из которых-просто этап накопления языковых знаний, параллельно с которым происходит процесс познания действительности человека, второй-процесс укрепления этого знания, а третий-этап анализа и отчуждения накопленного знания, благодаря которому происходит совершенствование психического и языкового миров человека вплоть до его превращения в культурную ценность.

Keywords: language, language development, inner world, objective reality, stages of development of personal language world.

S. G. Hovhannisyan - Layered Manifestations of the Individual Language World (According to E. Atayan's Theory of Macro stages of Human Life).- There are 3 stages in the development of the language world, the first of which is simply the stage of accumulation of elementary knowledge through the language signs, in parallel with which the process of cognition of human reality

takes place, the second is the process of strengthening this knowledge, and the third is the stage of analysis and alienation of accumulated knowledge, thanks to which the psychical and language worlds of a person are improved up to its transformation into a cultural value.

**«ՄԱՀ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Բանասիր. գիտ. դոկտոր Հ. Հ. Մեսրոպյան

Հիմնաբառեր: Հայերեն, բարբառ, մահ, համարժեք, տարածագործառական տարբերակ, հնչյունական զուգաբանություն, հոմանիշ, դարձվածք:

«Մահվան առեղծվածը միշտ էլ հրապուրիչ նյութ է ծառայել փիլիսոփայական և առօրյա խորհրդածությունների համար», - գրում է Ա. Նալչաջյանը¹: Կյանքի և մահվան հակադրությունն ազդել է մարդու մտածելակերպի վրա՝ պատճառ դառնալով համապատասխան բառաշերտի ստեղծման, բառերի տերմինացման, իմաստափոխության և ոճավորման: Քանի որ «ավանդական հայ հասարակությունում մեռածների հարգումն արժեք է»², ուստի հայերենի բարբառային բառապաշարը հարուստ է մարդու վախճանը հատկանշող «մահ» և հարակից հասկացություններ բնորոշող բառաշերտով, դարձվածքներով, նկարագրական արտահայտություններով, առած-ասացվածքներով և լեզվական այլ միավորներով:

Թեմային առնչվող բարբառաբանությունների շտեմարան են «Ազգագրական հանդէսի» քսանվեց հատորները, որոնցում տեղ գտած բարբառային ծավալուն նյութը վերաբերում է մարդու մահվանից հետո հոգու տեղափոխման հավատալիքին, թաղման ծիսակարգին, մերձավորների մխիթարությանն ու սգահանությանը, քրիստոնեական դավանանքով և նախապաշարմունքով պայմանավորված արարողակարգերին: Համաձայն հավատալիքի՝ մարդը կազմված է մահկանացու մարմնից և անմեռ հոգուց: Երբ հոգին

¹ Ա. Ա. Նալչաջյան, Մահվան հոգեբանություն, կամ ինչպես է հոգին հեռանում մարմնից, Ե., 1992, էջ 3:

² Բ. Շ. Գիշյան, Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների համեմատության փորձ // «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, 2 (113), էջ 108: (http://www.yasu.am/files/12B_Gishyan.pdf)

հեռանում է մարմնից, մարդը մահանում է: Սուրբ Հովհան Ոսկեբերանը մահվան մասին իր ճառում ասում է, որ «Մահը արդար կյանքով ապրած մարդու համար դեպի լավագույնը փոփոխություն է, հեռացում է էլ առավել գերազանցը, ձգտում է առ հատուցում»³: Այդպիսի վիճակում գտնվող մարդուն հայերենի տարածքային տարբերակներում հիմնականում բնորոշում են *մեռել* (գրաբարյան *մեռեալ*) բառով:

Քրիստոնեական դավանանքի համաձայն՝ «Գերեզմանի հանգիստը մինչև հարություն ժամանակավոր քուն է, իսկ մահացողը՝ ննջեցյալ և ոչ թե մեռյալ»⁴:

Ըստ Հ. Աճառյանի՝ *մահ* արմատի հնագույն ձևը *մարհ* անհայտ ծագմամբ բառն է, որի ստուգաբանությանն անդրադարձել են անցյալ դարի մի շարք լեզվաբաններ՝ չհանգելով սակայն վերջնական հիմնավորման⁵: Գ. Ջահուկյանը նախընտրում է Հ. Աճառյանի նշած վարկածներից մեկը՝ գրելով. «Իրանական փոխառություն է, չնայած համապատասխան իրանական ձևը չի հավաստվում»⁶: *Մահ* բառն առկա ստուգաբանություններում առնչակից է հնդեվրոպական նախալեզվի *mer* «մեռնիլ» արմատին⁷: Մենք չենք բացառում կապը պարսկերեն *مړ* (մահ) «լուսին» բառի հետ՝ դիտարկելով այն որպես արևի ու լույսի վախճան:

Արարատյան, Արցախի, Դերսիմի, Երզնկայի, Մալաթիայի, Բուրդուրի և բազմաթիվ այլ բարբառախոս վայրերում գործածվում է *մահ* գրական տարբերակը: Հանդիպում են նաև *մախ* (Վան, Մոկս, Ոզմ, Շատախ և այլն), *մայ* (Մուշ և այլն), *մ^օ հ* (Տիգրանակերտ) հնչատարբերակները⁸: Մի շարք վայրերում *մահ* գոյականը չի գոր-

³ Սուրբ Հովհան Ոսկեբերան, Ճառերի ընտրանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 202:

⁴ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., էջ 595:

⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ., Ե., 1977, էջ 233-234:

⁶ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 502:

⁷ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 233:

⁸ Համապատասխան տվյալները ըստ Ս. վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան» (Թիֆլիս, 1912), Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» (հհ. Ա-Դ, Ե., 1971-1979), նաև «Հայերեն գաւառական բառարան» (Թիֆլիս, 1913), ՀՀ ԳԱԱ

ծածվում. այդ իմաստն արտահայտվում է *մեռ*⁹ բնիկ հայերեն արմատով կազմված *մըռնէլ* (Արամո), *միռնիլ* (Քաբուսիե), *մ^օ ռնիլ* (Եդեսիա) բայերով:

Մահ արմատով են կազմված *մահաքըրտինք* (Ղարաբաղ), *մահենիք* (Արարատյան, Թբիլիսի - «հուղարկավորություն»), *մահտեր*, *մահտուն*, *մահվան հոց* (Ագուլիս) և այլ բարբառաբանություններ:

Պոլսի բարբառին բնորոշ են *մահս բանի*¹, *մահս ելլա*² կամ *մահս-ցե՛ցս բանի*, *մահս-ցե՛ցս ելլա*, *մահս տա՛նի* արտահայտությունները՝ որպես արգահատանք դրսևորելու միջոց: Նույն տարածքի *մահը աչքը առնել*, *մահը գլխովը առնել* դարձվածքները նշանակում են «մահն անտեսելով՝ վտանգի մեջ նետվել», իսկ *մահվան դողերու բերել* կամ *հանդիպցնել*³ «սարսափեցնել»: *Մահ-մահ ընել* (Պոլիս) դարձվածքն ունի «փափագել», *մահ տալ* (Արարատյան)⁴ «սպանել» իմաստները:

Մարդու մահամերձ վիճակը ժողովուրդը բնորոշում է մի շարք նախապաշարումներով պայմանավորած բառաշերտով: Զանգեզուրի տարածքում *մահամերձ* բառին հոմանիշ է *նեղած* բայաձևը: Մուշի բարբառի Բուլանըխի խոսվածքի *հոգեքանդում* և *տուրքու տափ* կազմություններով բնորոշվում է հոգեվարքը: Մահամերձ վիճակ են նշում նույն տարածքում գրառված *քիթը սրկեցեր է*, *աչքերը գբեր է*, *չօքերի խուղումը կոտրեր է* նկարագրական արտահայտությունները: Իմաստային այս դաշտին են հարում *հոգու հետ կռիվ տալ* (Քանաքեռ), *մօքուլ տալ* («3 օրով կյանքը երկարացնել,

լեզվի ինստիտուտի «Հայերենի բարբառային բառարան» (հհ. Ա-Է, Ե., 2001-2012), Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (Երևան, 2017) աշխատություններից, նաև «Ազգագրական հանդես»-ից (Թիֆլիս, 1895-1899), ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի, ազգագրության և հնագիտության ինստիտուտի բարբառային ձեռագիր նյութերից, լեզվի ինստիտուտի՝ բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրին համապատասխան շուրջ 500 բնակավայրերի բարբառային գրանցումներով տետրերից, վերջապես՝ հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերի բառամթերքն ընդգրկող բառարաններից:

⁹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 304:

հոգեդարձ անել»¹⁰, *հոգու ճրագ* (Բուլանըխ, «մեռնողի հոգու համար վառվող ճրագ»), *հրեշտակը գլխին պըտիտ գալ* (Լոռի), *մահվան դուռը երթալլ հասնիլ* (Պոլիս) և այլ բաղադրություններ:

Ըստ հավատալիքի՝ մահվան ժամանակը որոշում են փոքրիկ, սուր գդակ ունեցող ոգիները, որոնց Ջավախքի տարածքում անվանում են *ցավեր*: Դրանք ձեռքներին ունեն սև, սպիտակ և կարմիր մտրակներ: «Նախ նայում են Աստուծութիւնից իրենց յանձնուած «դարձարին» և ում որ սև չպիտով խփեն, նա կը մեռնի, իսկ ում՝ կարմիրով կամ սպիտակով, միայն կը հիւանդանայ»¹¹:

Ջավախքի տարածքին բնորոշ է *կյանքի պուտուկ* բառակապակցությունը, որի հիմքում ընկած է այն հավատալիքը, համաձայն որի՝ երկնքում գտնվում է մի պուտուկ, որի մեջ թեփ է լցված. երբ թեփը պրծնի, մարդը կմեռնի¹²: Ըստ այդմ էլ ջավախեցիներն ասում են՝ *հըլը թեփը չէ պարպէ*, այսինքն՝ «դեռ վախճանը չի մոտեցել»:

Բազմաթիվ տարածքներում մարդու վախճան է նշվում նաև *աճալը գալ* հարադիր բայով: «Ժողովրդեան կարծիքով ամեն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ նրա «աճալը» - վախճանը, որ նախահինամութիւնից որոշուած է, գայ, այդ աստղը կընկնի, և մարդը 40 օրից յետոյ կը մեռնի»¹³:

Վախճանական իմաստ ունեն *մաննա* («նվեր, ընծա, անարյուն պատարագ») ¹⁴, *պատարագ* («գոհ») փոխաբերությունները, *քըսմը-ձաղիկ* (Երզնկա, «նորածիններ գողացող չար ոգի»), *հոգեառ* (Բուլանըխ, «հոգին առնող տանող հրեշտակ»), *հրեշտակակոխ* (Արարատյան, Վան, Ղազախ, Լոռի, Աստապատ, «հոգեառ հրեշտակից զարնված»), *ավագ ուրբաթ, գ ըրօղի ծոցը* (Կարին) բարդություններ:

¹⁰ Քահանան մրմնջում է. «Նաբոնդոն, Դաբիա, Միլոն (հրեշտակներ են) ցուցեք գնշան ճակատին». Եթե ճակատի վրա սև նշան է երևում, ուրեմն հիվանդը կմեռնի: Տե՛ս «Ազգագրական հանդես», 1895, էջ 172:

¹¹ Նույն տեղում, էջ 308:

¹² Նույն տեղում, էջ 308-319:

¹³ Նույն տեղում, էջ 308:

¹⁴ Գ. Ալետիքեան, Խ. Միրմիլեան, Մ. Ալգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 2, 1837, էջ 206:

րը և *հրեշտակակոխ ըլնել, խացին հասնել* (Վան, «մահը չտեսնել, միայն հոգեհացին հասնել») հարադրությունները:

Վանի բարբառում *ագրայիլ // ագրահիլ* բառով հատկանշվում է հեթանոս հայերի գրողը, նաև մահմեդականների Գաբրիել հրեշտակը, որը մահվան հունձն է կատարում: *Ագրահիլ* փոխաբերաբար նշանակում է «անսանձ, անընկճելի, նաև դիվահար»: Օրինակ՝ «*Ագրայիլ է տ° րցե մեր կըլխին*»:

Մարդ և *մահ, մեռնել* հարաբերակից ռեալությունը բնորոշող բազմիմաստություն է արձանագրել Հ. Թուրջյանը Վանի բարբառում, որտեղ *մեռնել* բայն ունի 24 հոմանիշ և գրեթե նույնքան իմաստային տարբերակ: *Մեռավ* ասում էին սովորական մահվան դեպքում, *նազաստան ինզավ մեռավ*, երբ հանկարծամահության դեպք էր, *վախճանվեց* - հոգևորականը կամ բարեպաշտ անձը, *խանգավ* կամ *ննջեց* - խոր ծերության հասած առաքինի մարդը, *խանգըստացավ* - երկարատև հիվանդությունից տառապածը, *մեռցրին* - ասում էին ընտանեկան վատ պայմանների հետևանքով տեղի ունեցած մահվան դեպքում, *ծեռից կընաց* - անտերության ու անփութության գոհը, *տան սունն ինզավ* - տան միակ կերակրողը, *ճըրաքը մարեց* - ընտանիքի վերջին ներկայացուցիչը, *դարդավարամ էլավ* - վշտահարը, *Հիսուս կանչեց*- բողոքականը:

Մի շարք բայաձևեր այս տարածքում արտահայտում են անարգական իմաստ, ինչպես, օրինակ՝ *խոկին տըվեց* - ոչ առաքինի մեկը, *պաղեց, ոտները փրոեց, ճոչ քուն քընեց* - մահվան լուրը հայտնողի կողմից չսիրված մեկը, *սատկեց* - անասունը, թուրքը կամ վատորդի հայր, *խատավ* - քուրդը, նաև թուրքը, *ճըմեց*- մեծահարուստ վատ հայր, *շանսատակ էլավ* - գողը, ավազակը, *թընջկաց, պըթաց* - տեռորի ենթարկվեց տմարդին¹⁵:

Արցախի բարբառախոս տարածքի Մարտակերտի Կիչան գյուղի խոսվածքին բնորոշ է *փչանալ* մեղմասացությունը՝ որպես «մեռնել» բայի համարժեք («*Մըր հըրելվան Անուշին կիսուրը փչա-*

¹⁵ Հ. Թուրջյան, Բառարան Վանի բարբառի, Ե., 2018, էջ 18-19:

ցալ ա»): Դերսիմի բարբառային տարածքի Բերրիի խոսվածքում «մեռնել» հասկացությունն արտահայտվում է *օղբէրը չըթէլ* դարձվածքով, որն ունի անարգական նրբիմաստ¹⁶:

Հանգուցյալը հայերենի տարածքային տարբերակներում հիմնականում բնորոշվում է *մեռել* բառով: Գործածվում են նաև հոմանիշներ՝ *ննջեցալ, մ° ռոսա* (Եդեսիա), *վօղորմած* (Արարատյան) // *օղորմած* (Մարաղա, Ադանա) // *օղորմ° ձ* (Տիգրանակերտ) // *ուղուրմօձ* (Բեյլան), *ողորմածիկ* (Երևան, Լոռի, Կարս, Ղազախ, Նոր Բայազետ, Թիֆլիս) // *օղորմածիգ* (Մուշ) // *ըղորմածիկ* // *ղորմածիկ* (Լոռի) // *ըղըրմածիկ* (Տավուշ), *ողորմածհոգի* (Աժտարխան, Երևան, Հնդկահայք, Ղարաբաղ, Նոր Նախիջևան, Պոլիս, Թիֆլիս) // *օղորմածհոքի* (Մուչավա, Նոր Նախիջևան, Պոլիս, Թբիլիսի) // *ըղորմած հոքի* (Լոռի), *լուսահօքի* «բարեհիշատակ, գթացող» (Կարին) և այլն: Բազմաթիվ բարբառախոսներ տարբերակում են *ազիգ մեռել* հասկացությունը՝ որպես բնորոշում նշանավոր, անվանի հանգուցյալի:

Հանուն հայրենիքի, վեհ գաղափարի համար ընկածներին անվանում են *նահատակ, մարտիրոս*, նաև *վկա*: *Նահատակ* բառի գրական ձևը գործածական է Ախալցխայում, Երևանում, Կարինում, Շամախիում, Սալմաստում և այլ վայրերում: Բարբառային զուգաձևություններից են՝ *նահադագ* (Ալաշկերտ, Ռոդոսթո) // *նահադագ*, (Մալաթիա) // *նըհտակ* (Գորիս, Ղարաբաղ) // *նըհադագ* (Սեբաստիա) // *նահադոգ* // *նահադոգ* (Զեյթուն) // *ն° հ° դ° գ* (Տիգրանակերտ) և այլն: *Նահատակ* բառով են կազմված *նահատակ անիլ* (Թիֆլիս), «չարչարել», *նըհադգել* (Բուլանուխ, Մուշ), «նախատել, հանդիմանել» բայերը: Նույն իմաստն ունի *մադադ ըլլալ* (Երզնկա) հարադիր բայը:

Արհամարհական իմաստ ունեն *էշ նահադագ* (Պոլիս) // *էշէք նահադագ* (Անկարա), *էշնահադոգ* (Բեյլան), «գուր տեղը նահատակված, չարչարված» բաղադրյալ կազմությունները:

¹⁶ Ռ. Բաղրասյան, Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., 1960, էջ 162:

Հանուն հավատքի նահատակվածները կոչվում են *վկա*: *Վրկա* գրական արտասանական ձևն է գրանցված Կարնո, Ախալցխայի, Կարսի Քյուրագոարայի, Մոկսի, Մարադայի, Ջուդայի, Մամաստի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Գորիսի, Խոյից եկածներով բնակեցված Էջմիածնի Արագածի բարբառախոս բնակավայրերում: Մյուս տարածքներից հայտնի են հետևյալ հնչատարբերակները՝ *վրգա* (Մուշ, Ալաշկերտ, Մուշ-Ալաշկերտից ներգաղթածներով բնակեցված Ապարանի Ղալայչի, Արագած, Ատմա, Բուլանուխի Գյարոլներ և Շերվանշեխ, Ասլանբեկ, Պոլիս, Ռոդոսթո, Սեբաստիա, Սուչավա, Նոր Նախիջևան, Երևան, Շամախի, Ստեփանավանի Կուրթան) // *վրզը* (Մասունի Տավորիկ և Իրցանք) // *վրզ*° (Փսանքի Մըշկեդ) // *վրզը*° (Մասունի Հոսներից եկածներով վերաբնակեցված Թալինի Ներքին Մասնաշեն) // *ուգա* (Նոր Նախիջևան) // *վրկո* (Ագուլիս) // *վոզո* // *վոզո* (Զեյթուն) և այլն: Բաղեշի Վերին ՀՕրՕքից գաղթածներով բնակեցված Ուշիի խոսվածքում գործածական է արաբերենից փոխառյալ *շրհ*° *դ* բառային զուգաբանությունը:

Ննջեցյալի հոգու համար Աստծու ողորմությունը խնդրում են «Աստված ողորմի հոգուն» ասելով, նաև ամփոփ ձևով՝ *ողորմիս* (Նոր Նախիջևան, Պոլիս) // *ողորմի* (Տիգրանակերտ) // *ղորմի* (Կոզեն, Ստեփանավանի Սվերդով) // *ողորմի* (Մոկս, Երևան) // *ղնրմի* (Կարճևան, Մեղրի) // *ըղորմի* (Լոռի) և այլն: Անկարայի թրքախոս հայերի շրջանում տարածված է *ողորմիս* ձևը, որից էլ՝ *ողորմիս չխարմաք*, այսինքն՝ «աստված ողորմի՛ ասել»): Բարբառային խոսքին բնորոշ են *ողորմի՛ նրա կողքին մեռելներին* (Երևան), *ողորմիսը քովեն անցնի* (Պոլիս) և այլ արտահայտություններ, որոնք ասվում են վատ հիշատակ թողած ննջեցյալների հասցեին:

Անարգական իմաստ ունի *գոնափշտիկ* բառը, որով բնորոշվում է շան, կատվի, քերծեի և այլ կերպարանքով գիշերով գերեզմանից դուրս եկող ոչ քրիստոնյա մեռելը: «Գոռ (քրդ.) կը նշանակե

գերեզման, իսկ փշտիկը փշտկալ (ելնել, ցայտել, թոնել, օր. այլուրի և նման առարկաներու) ժողովրդական բայի մի արմատն է»¹⁷:

«Մահ» հասկացությանը վերաբերող բառերից են՝ *մեռել(ա)-տեր* (Արարատյան, Ղազախ, Ղարաբաղ, Թբիլիսի), *մեռել(ա)տուն* (Բաբերդ, Արարատյան), *մեռլաջուր*, *նաժ* (Վարանդա), *խրզմալի* (Վան), *ճաղբ* (Բուլանըխ) «կարպետով փաթաթած ննջեցյալին մեջը դնելու հարմարանք», *դիագարդ* (Արցախ), *երեսքաշ* (Արարատյան, Մուշ, Շիրակ, Սիսիան) «դագաղը կամ նաժը ծածկող շոր», որը երիտասարդի համար «կարմիր գիլի չթից էր, միջահասակինը՝ սպիտակառախն, սևագոյն կտորից, իսկ ծերինը՝ լաստիկ շարժ-սև կտորներից»¹⁸, *կուփե* («խփել») նախապաշարում, համաձայն որի եթե գյուղում ննջեցյալ կա, գլուխ չեն լվանում, լվացք չեն անում՝ հրեշտակահար չլինելու համար¹⁹: Համշենի բարբառին բնորոշ է *խօրթաղ* բառը. «Կատուն որ մեռելի վրայից անցնի, մեռելը խօրթաղ կը դառնայ»²⁰:

Բուլանըխում ծխատեր քահանային որպես թաղման վարձ տրվող գումար են նշում *թաղմեղե* և *սգահան* բառերը: Քահանային, ժամկոչին և աղքատներին տրվող մեռելի շորերը անվանում են *կոդոպուտ*:

Վարանդայի տարածքում *ժամհար* և *ժամկոչ* կրոնական կեղեցական բառերը իմաստային նեղացման են ենթարկվել և նշանակում են «գերեզմանափոք», մասնավորաբար քաղաքում, քանի որ գյուղերում գերեզմանը փորում են հարազատները կամ հարևանները: *ժամակոչը* նաև հանգուցյալ տղամարդուն լողացնողն էր, իսկ կնոջը լողացնողին անվանում էին *քելվանի* (Կարնո բարբառի Ջավախքի խոսվածք):

¹⁷«Ազգագրական հանդես», Պատկերագրող, 4-րդ տարի, Ե գիրք, Թիֆլիս, 1899, թ. 1: *Բենսե*, Բուլանըխ կամ Հարք գաւառ (ձեռագիր) «75. Ընտանեկան կեանք» - ընդհանուր խորագիր «155. Մահ և թաղումն», էջ 181:

¹⁸«Ազգագրական հանդես», 1898, էջ 100-105:

¹⁹Նույն տեղում, էջ 184:

²⁰Նույն տեղում, էջ 401-406:

Ջավախքի տարածքում *մուշուրպա* «ջրաման» բառը տերմինացվել է՝ ձեռք բերելով հասկապես «ննջեցյալին լողացնելուց հետո կոտրելու ենթակա աման» իմաստը: Մուշուրպան կոտրում էին, որպեսզի այդ տնից հաջորդ մարդը չմեռներ²¹: Նույն տարածքում «մահ» հասկացությանը վերաբերող տերմինի արժեք է ձեռք բերել նաև *թաբախ* «աման» բառը, քանի որ այն դնում էին ննջեցյալի կրծքին՝ գանձ ասելիս քահանայի համար գումար հավաքելու նպատակով²²: *Գանձ ասել* հարադրությունը բնորոշ է հասկապես Արցախի, Ջավախքի և այլ տարածքների:

Ուշագրավ հարադրություններից են *բարև բոնեցնել* «Ջավախք, հանգուցյալի ձեռքերը կրծքի վրա խաչել», *թողապրիս գալ* «ննջեցյալի հարազատներին մխիթարելու գալ», *հոգոց ասել տալ* «թաղման օրը քահանային կարգ անել տալ», *սրտինը սրտում մնալ* «Ջավախք, ասվում է չար մարդու մահվան դեպքում, երբ նա չի կարողանում ցանկացածն ասել», *հրեշտակը փակ չթողնել* «մարդու մեռնելուց հետո դուռը բացել, որպեսզի հոգու հետ ազատ շրջի»²³, *աթլա չտալ* (Մուշ-Բուլանրիս) «մեղավորի հոգին անմիջապես առնել, իսկուս տալու ժամանակ չտալ», *պատարագով թաղել*, Ջավախք, «շաբաթ օրը մեռնողին եկեղեցում մի օր պահել» երբ մարդը մեռնում է, և կիրակի պատարագով թաղում, իսկ եթե մի ուրիշ օր է մեռնում, եկեղեցի դնելն ու վերցնելը մեկ են անում²⁴: «*Գաբրիել կը գաբի վրր բոկին, աթլայ չիտա, կառնէ տանէ դժոխք, չուրի գալուստնի Քրիստոսին, որ կիգայ ըննաուտի կալ*»²⁵:

Բավականին ընդարձակ է հանգուցյալի երկրային ներկայությանը հաջորդող իրողությանն առնչվող բառաշերտը: Միայն *այգողք* և *հոգեհաց* հասկացությունները բնորոշող հումանիշային շարքերի և բարբառային հնչատարբերակների մասին կարելի է ընդարձակ ուսումնասիրություն կատարել, ուստի այդ բառերին չենք անդրա-

²¹ «Ազգագրական հանդես», 1895, էջ 309:

²² Նույն տեղում, էջ 309:

²³ Նույն տեղում, 1898, էջ 243:

²⁴ Նույն տեղում, 1895, էջ 311:

²⁵ Նույն տեղում, 1899, էջ 182:

դառնում: Նշենք միայն, որ *մեռ* արմատով կազմված *մեռելահաց* բարդությունն ունի մոտ 30 տարբերակ և բնորոշ է բազմաթիվ բնակավայրերի [օրինակ՝ *մեռլի խաց* (Աբովյանի Ակունք), *մեռլըխաց* (Խոյից եկածներով բնակեցված Մասիսի Այնթափ), *մըռլահաց* (Դաշքեսանի Բանանց, Կարմիրի Վերին Ճամբարակ, Շամխորի Մարտունի, Գորիսի Վերինշեն և Բոուն, Իջևանի Ծաղկավան, Խանլար, Ելենսդորֆ, Շահումյանի Բուզլուխ, Կիրովաբադ), *մեռլի ճաշ* (Ցածի Թիմարի Քյոջանի), *մեռլի պաղարաք* (Ղարադաղի Վինան), *մեռելժամ* (Չենկիլեր), *մըռլի հաց* (Գորիսի Շինուհայր), *մեռելօցի հաց* (Շամախու Սաղյան), *մեռլի ժամ* (Գավաշի Հարպերտ) և այլն]:

Դատաստան, դրախտ և *դժոխք* բառերի քննությանն անդրադարձել ենք մեր «Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում» գրքում²⁶:

Մեծաթիվ են նաև այս թեմայով կերտված առած-ասացվածքները, երդման, օրհնության, բարեմաղթանքի բանաձևերը, նաև անեծքները: Ներկայացնենք դրանցից մի երկուսը՝ «*Մարդուն՝ սուֆրա-սեղան, կնկան՝ կանած փողան*» (Դեռ մարդու հոգեհաց են տալիս, կնոջ մուշտարիները լցվել են տան սրահներն ու փողանները, *Բուլանըխ*): «*Մահավ ըղնիք մաքրվիք Տանավ տեղավ թըմըզվիք*» (Ղարաբադ)²⁷, *ապավամեռ* (Վան), *մազտ մկրատը* (Ջավախք) և այլն: Վերջին անեծքը ծագել է հանգուցյալ կնոջ մազերը կտրելու սովորույթից:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդկային կյանքի անխուսափելի ավարտը նշող *մահ* և վերջինիս առնչակից հասկացությունները նշող բառերն ու արտահայտությունները բավականին մեծ թիվ են կազմում: Հայերենի տարածքային տարբերակներում կան մահը հատկանշող բազմաթիվ բառեր, հնչյունական և բառային զուգաբանություններ, հոմանիշներ, դարձվածքներ,

²⁶ Տե՛ս Հ. Հ. Մեսրոպյան, Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Ե., 2016:

²⁷ Լ. Հարությունյան, Նշխարքներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 312:

նկարագրական կառույցներ, որոնք արտահայտվում են հայերենի բառակազմական հայտնի միջոցներով:

Ключевые слова: армянский, диалект, смерть, эквивалент, территориально-функциональный, вариант, фонетический, диалектный аналог, синоним, фразеологизм.

А. О. Месропян - Общее описание диалектной лексики связанной с понятием «смерть».- Тайна смерти, противоречие жизни и смерти влияют на мысли людей и являются причиной для создания соответствующей лексики, переосмыслений и терминологизации общеупотребительных слов, имеет непосредственное отношение к *образованию стилей*.

Традиции и ритуалы, связанные с окончанием земной жизни, определяются в трех основных этапах: 1) агония, 2) похоронный ритуал, 3) церемонии поминовения умершего. Диалекты армянского языка имеют слишком богатый лексический пласт, который описывает эти три этапы. В статье представлен лексический пласт относящимися третьего этапа, то есть памяти умершего, особенно диалектные названия понятия “*մահ*” (смерть).

Исследованы диалектные фонетические эквиваленты понятия “*մահ*”, связанное с ритуалом, обозначающий неизбежная кончина человеческой жизни, выражается в региональных вариантах армянского языка многочисленными словами, фонетическими и лексическими аналогиями, синонимами, речевыми оборотами, описательными конструкциями, которые выражаются всеми словообразовательными средствами армянского языка.

Keywords: Armenian, dialect, death, equivalent, territorial-functional, version, phonetic, dialectal analogue, synonym, idiom.

H.H. Mesropyan - General description of the dialect vocabulary associated with the concept of "death".- The mystery of death, the influence of contrary between life and death on people's mentality has become a reason for creation of appropriate vocabulary, word terminology and for the change of meaning and styling of the vocabulary.

Traditions and rituals related to the end of earthly life are defined in three main stages: agony, 2) funeral ritual, 3) commemoration ceremonies of the deceased.

The Armenian dialects are rich of vocabularies identifying these three phases. In this article it is represented the vocabulary concerning to the third stage: the ceremonies of dead's commemoration, especially to the dialectical names of the meaning “*մահ*” (“death”).

We have collected and investigated words that mention the phonetic and vocabular word- combinations of that commemoration ceremony, also Christian denominations and dialects with prejudice, the expressions formed on the basis of popular perceptions, descriptive expressions, sayings and other linguistic units.

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Բանասիր. գիտ. թեկնածու Է. Ջ. Միրզոյան

Հիմնաբառեր: Արևմտահայերեն. թուրքերեն, հայերեն բառեր, հայերեն բառեր թուրքերենում, լեզուների առնչություն, լեզվական փոխառություններ, լեզվական կապեր:

Աշխարհաբարը կամ արդի հայերենն այսօր ներկայանում է երկու գրական տարբերակներով՝ արևելահայ և արևմտահայ: Արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ էր թուրքերենի, իսկ ավելի ուշ՝ XIX դ. կեսերից սկսած, ֆրանսերենի ազդեցությունը: Դա նկատվում է ինչպես բառապաշարի, այնպես էլ առանձին քերականական ձևերի կազմության մեջ¹: «Տաճիկ գրականությունը այնքան ողորմելի էր, որ ամոթ էր համարվում նրանով զբաղվել: Իսկ ֆրանսերենը ուսման կատարելագույն աստիճանն էր համարվում»²:

Հարկ է նշել, որ այս երևույթը միակողմանի չի եղել. հայերենը ևս իր ազդեցությունն է ունեցել ժողովրդախոսակցական թուրքերենի վրա (գլխավորապես բառապաշարում): Այդ իսկ պատճառով հայերեն-թուրքերեն առնչությունների ուսումնասիրությունը լեզվաբանական տեսանկյունից մեծ հետաքրքրության է արժանացել և շարունակում ուշադրության առարկա լինել ինչպես հայագետների, այնպես էլ թուրքագետների կողմից:

Իսկ մինչև ո՞ր էին հասնում թուրքերեն տարրերի գործածության սահմանները XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին. Հ. Աճառյանն այս հարցի շուրջ հետևյալ դասակարգումն է արել.

¹Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Ե., 2007, էջ 8:

²Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 572:

1. Հայեր, որոնք ենթարկվել են լեզվական ձուլումի և խոսում են միայն թուրքերեն: Փոքր Ասիայի ոչ թուրք բնակչության հարկադրական լեզվական ձուլումի մասին բազմաթիվ վկայություններ կան հատկապես XIX դ. 30-ական թթ.: Ռուս լեզվաբան, տեղագրագետ Մ. Վրոնչենկոն այս մասին գրում է. «Անկարայում հայերը հայերեն չգիտեն... Իզմիրից ու Բուրսայից բացի՝ հայ հոգևորականները ոչ մի տեղ հայերեն չգիտեն, և ծիսակատարությունները կատարվում են թուրքերեն՝ հայկական տառերով տպագրված գրքերով»³: Մեկ այլ հեղինակ՝ ռուս կովկասագետ, ճանապարհորդ, ազգագրագետ Ե. Վեյդենբաումը գրում է. «Արդվինում բոլոր հայերն առանց բացառության խոսում են թուրքերեն և իրենց սովորությունների մեջ այնքան են թրքացել, որ նույնիսկ միմյանց հանդիպելիս ողջունում են մուսուլմանական ձևով»⁴:

2. Հայեր, որոնց բառամթերքում գերակշռում են առավելաբար թուրքերեն, քան հայերեն բառերը (հաշվելի քանակով): Լեզվաբան-արևելագետ Ն. Մկրտչյանը նշում է. «Վարդենիքի (Ակնա շրջակայքի գյուղերից մեկը, որ մինչև XIX դ. դեռևս պահպանում էր իր հայկական անունը, այսօր արդեն կրում է Բաշ Վարդենիք անունը) մեջ խաչողիների (քրիստոնյաների՝ խաչի որդիներ) ընտանիքը դեռևս հայերեն էր գործածում՝ *գրպան, խաչքար, Նեռը տանի, վայր վրադ, սատկին* և այլն»⁵: Նման դեպքերում դա դիտվում էր ոչ թե զուտ հայերեն, այլ այսպես կոչված «հայավարի/հայեվար» խոսակցություն:

3. Հայեր, որոնց բառամթերքում թուրքերենից փոխառյալ բառերն այդքան էլ զգալի թիվ չեն կազմում. օր.՝ «Չինքի գրոց շարադրութին է, փոքր տղայքն կամ այլք, որ տահա գրոց լեզուն չեն գի-

³М. Вронченко, Обзорение Малой Азии в нынешнем ее состоянии, / составленное русским путешественником М.В., ч. 2. СПб., 1840, с. 29, 241. տե՛ս նաև Д. Еремеев, Этногенез турок, М., 1971, էջ 172-173:

⁴Г. Երևսեն, Թուրքերի ծագումը, Ե., 1975, էջ 227, տե՛ս նաև Е. Вейденбаум, От Батума до Арвина. Путевые заметки // ИКОИРГО, 1879-1881, т. VI, էջ 186:

⁵Տե՛ս М. Кочар, Турецкие элементы в языке константинопольских армян, Е., 1981, էջ 19:

տեր, դիժարկեկ կու հասկնան» (= Քանի որ գրերի շարադրություն է, մանկահասակ տղաները կամ նրանք, որոնք դեռ գրերի լեզուն չգիտեն, դժվարությամբ են հասկանում)⁶:

Թուրքերենի որոշակի ազդեցությունն են կրել ոչ միայն այն բարբառները, որոնցով խոսել են Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող հայերը, այլև այն բարբառները, որոնցով խոսել են Ղրիմի, Նոր Նախիջևանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Եգիպտոսի հայերը⁷:

Թուրքերեն տարրերի գործածության սահմանները, սակայն, հայերենի բարբառներում նույնակերպ չեն տարածվել: Դրանք առավելապես նկատելի են Փոքր Ասիայի և Բալկանյան թերակղզու հարավային հատվածների բարբառներում, մասնավորապես պոլսահայ (ստամբուլահայ) բարբառում: Այս մասին Աճառյանը նշում է. «Եթե ի նկատի առնենք մեր արդի ժողովրդական բարբառը՝ կը տեսնենք թե ամենէն աւելի զօրեղ մասը կը ներկայացնէ թրքական տարրը»⁸:

Պոլսաբնակ հայերի խոսակցական լեզվում թուրքերեն տարրերի լայն կիրառումը, ըստ արևելագետ Մ. Քոչարի, մեկնաբանվել է հետևյալ կերպ. «Այստեղի (Կոստանդնուպոլսի/Ստամբուլի հայերը) երկլեզվախոսներ էին. տիրապետում էին թուրքերենին այնքան լավ, որքան հայերենին, և թուրքերեն տարրերի կիրարկումը բնավ էլ կապված չէր այն բանի հետ, թե հայերենում դրանց համարժեքները չկային... Վերջիններիս երկլեզվախոսության մասին է վկայում հայատառ թուրքերենով գրված հարուստ գրականությունը»⁹:

Փաստորեն, թուրքերենի ազդեցության վտանգը թուրքաբնակ հայերի համար XVIII-XIX դդ. ստեղծել էր լեզվի գոյությանը սպառնացող մեծ վտանգ, քանի որ «ծնվում էին թրքախոս հայության զանգվածներ, հանդես էին գալիս թրքախոս հայ աշուղներ, բանաս-

⁶ Պաղտասար Դպիր, Գիրք քերականութեան, Կ. Պոլիս, 1760, էջ 2:

⁷ Ավելի մանրամասն տե՛ս *Մ. Կոչար*, նշվ. աշխ., էջ 4:

⁸ *Ն. Աճառյան*, Թուրքերենի փոխառեալ բառեր հայերենի մեջ // «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 4:

⁹ Տե՛ս *Մ. Կոչար*, նշվ. աշխ., էջ 5:

տեղծներ...»¹⁰, այսինքն՝ կա՛մ խոսում էին «թրքացած» արևմտահայերենով, կա՛մ թուրքերենով: Եվ լեզվի անաղարտությունը պահպանելու համար աշխարհաբարով մի շարք աշխատություններ են գրվում: Առաջին հեղինակներից են Պաղտասար Դպիրը, Մխ. Մեբաստացին, Հակ. Նայյանը, Հովհ. Կարնեցին: Թեև նպատակն էր լեզուն մաքրել օտար տարրերից, սակայն նրանց գործերն էլ մաքուր աշխարհաբարով չէին շարադրված: Օր.՝ «Ասա թե հիչ մեկ պատճառ մի, կամ սեպեպ մի կայ»¹¹: Այստեղ *սեպեպ* բառը դրված է համապատասխան հայերեն անվանումից հետո որպես բացատրություն (թուրքերեն և հայերեն նույնանիշների միաժամանակյա գործածություն): Պաղտասար Դպիրը նույնիսկ հեղինակել է թուրքերեն բանաստեղծություններ: Իսկ Հակոբ Նայյանի մոտ նկատվում են առանձին արաբերեն և թուրքերեն բառեր՝ *շերպեթ* (օջարակ), *ճիկեր* (թոք) և այլն¹²:

XIX դ. թուրքերենի ազդեցություն է նկատվում նաև արևմտահայ հեղինակների գործերում, բայց դա ունեցել է առավելապես ոճական-արտահայտչական արժեք: Նույն նպատակներով թուրքերենին են դիմում նաև ավելի ուշ շրջանի հեղինակները: Օր.՝ «Վարդան, ինձի նայե, *կեչեն* ուրբաթ *կյունի* պարոն Սերոբն Էվինտե գեղեցիկ աղջիկ *կեորտյում*: Ինձի նայե, *կեերեվլենմեք* կուզես, ես ֆիքս կրնեմ: *Տագաթ*»¹³:

Այս վտանգը հաղթահարելու համար էր նաև այն, որ XVIII դ. փորձ արվեց վերականգնելու գրաբարը և այն ճանաչելու որպես համազգային գրական լեզու: 1850-1860-ական թթ. լեզվի մաքրման համար պայքարն առավել ուժգին դրսևորվում է մամուլում և գեղարվեստական գրականության մեջ: Պոլսում «Ծաղիկ» հանդեսը դարձավ մամուլում մաքուր արևմտահայ աշխարհաբարի առաջին օրինակը: Անհրաժեշտ է նշել, որ 1855 թ. հունվարի 25-ին Պոլսի

¹⁰ Շ. Նազարյան, Պետրոս Ղափանցի, Ե., 1969, էջ 160-161, տե՛ս նաև Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Ե., 1946, էջ 438:

¹¹ ՀՆԶ, 1757, էջ 12:

¹² Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Ե., 2002, էջ 44-46:

¹³ Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Ե., 1989, էջ 79:

պատրիարքարանը արևմտահայ աշխարհաբարի՝ օտար բառերը հայերեն բառերով փոխարինելու մասին պաշտոնական հայտարարություն է անում: Իսկ ավելի ուշ՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբներին, արևմտահայերենը վերջնականապես կանոնարկվեց և գրական լեզու դարձավ մի խումբ տաղանդավոր գրողների ջանքերով՝ Ա. Արփիարյան, Լ. Բաշալյան, Երվ. Օսյան, Գ. Զոհրապ, Ինտրա և ուրիշներ¹⁴:

Արևմտահայերեն-թուրքերեն առնչություններն առկա են լեզվի գրեթե բոլոր մակարդակներում: Թեև այդ առնչություններն առավել ակնառու են բառապաշարում, սակայն հնչյունական համակարգում և երականության մեջ դրանք խիստ մասնակի դրսևորումներ ունեցան:

Արևմտահայերենում պայթական բաղաձայնների գրաբարյան եռաստիճան համակարգը վերածվել է երկաստիճան իլլագուրկ համակարգի. բոլոր խուլ պայթականներն արտասանվում են որպես ձայնեղներ, իսկ բոլոր ձայնեղ պայթականները՝ որպես շնչեղ խուլեր¹⁵: Բաղաձայնների համակարգին բնորոշ այս առանձնահատկությունը, հատուկ լինելով նաև թուրքերենին, հիմք է տալիս ենթադրելու, որ թուրքերենի որոշակի ազդեցությունը միայն նպաստել է այս երևույթի տարածմանը, քանի որ հայերենում այն առկա է եղել դեռ շատ վաղուց: Այդ են վկայում V-XI դդ. հայկական ձեռագրերի հիշատակարաններում պահպանված և Գ. Ջահուկյանի արձանագրած ձայնեղների իլլացման առանձին դեպքերը (*մանկունք* բառը գրված է *մանգունք*, *դագաղ-դաքաղ*, *գահակից-քահակից*): Հետևաբար պետք է ենթադրել, որ մինչև թուրքերենի որոշակի ազդեցությունը հայերենում այս երևույթն առկա է եղել¹⁶:

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր լեզվի քերականական համակարգ առավել փակ է օտար լեզվական տարրերի ներթափանցման համար, սակայն պոլլաահայ բարբառում ձևաբանական դիտա-

¹⁴ Վ. Աճեմյան, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1971, էջ 169:

¹⁵ Լ. Մաքսպետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 11:

¹⁶ Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, էջ 15:

կետից հաճախ են նկատվում թուրքերենի քերականական ձևերի ներթափանցումներ, որոնց մի մասն անցել է արևմտահայ խոսակցական լեզվին՝ իր անձուկ տեղը գտնելով նաև գրական արևմտահայերենում:

Այսպես՝ թուրքերենում ածականի համեմատական աստիճանը լինում է *daha* բառի միջոցով¹⁷: *Daha+ածական*, ինչպես նաև *en* (թուրքերենում ածականի գերադրական աստիճանի ցուցիչ)+ *ածական* կառույցը բնորոշ է արևմտահայ ժողովրդախոսակցական լեզվին: Արևմտահայերենում դեռևս XX դ. սկզբից *en+ածական* կառույցը գրական բարձր ոճերում մերժելի է համարվել: Գրավոր խոսքում հանդիպում է հազվադեպ և ոչ բոլոր հեղինակների լեզվում՝ «Ու *էն* մեծ մասն...» (Դ. Վարուժան), «Գեղուհիներու *էն* գեղանին» (Միամանթո)¹⁸:

Արևմտահայ գրական ունի նաև ածականի գերադրական աստիճանի նորօրինակ մասնիկներ, որոնք, ինչպես նշում է Հ. Աճառյանը, «ձևացած են թուրքերեն լեզվի ոճով, բայց թուրքերեն չեն»¹⁹, օր.՝ *լեփ-լեցուն*, *ճեփ-ճերմակ*, *կաս-կապույտ*: Խոսակցական տարբերակում հանդիպում են նաև *ճեփս-ճերմակ*, *կափս-կապույտ* ձևերը: Արևելահայերենում այս ձևերը գործածական չեն, սակայն աստիճանաբար մուտք են գործում:

Գրական արևմտահայերեն ներթափանցած թուրքերենի քերականական ազդեցությունը ցուցահանող մի այլ օրինակ է թրք. *imis* (եղել է) մասնիկով կազմվող «պատմողական եղանակը» (Աճառյանն առաջարկում է այն պատմողական եղանակ կոչել): Արևելագետ Մ. Քոչարը կատարում է եզրույթիորոշ ճշգրտում՝ հիշյալ ձևը անվանելով ոչ թե եղանակ, այլ եղանակավորում, սակայն, ինչպես նշում է Ռ. Սաքապետոյանը, այս եղանակը ընդունում են ոչ բոլոր քերականները: Քերականական այս ձևը հաճախ հանդիպում

¹⁷ Ա.Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոբմազրոզյան, Թուրքերենի դասագիրք, Ե., 2001, էջ 56:

¹⁸ Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, էջ 92:

¹⁹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 288:

է արևմտահայ հեղինակների երկերում. «Դեռ առաջին անգամ է, որ կհագնի եղեր» (ԵՕ²⁰): Նշենք նաև, որ մեր օրերում ևս այսպիսի օրինակներ կարող ենք լսել նաև պոլսահայոց ուսյալ շրջանակների խոսքում, օր.՝ «Ունի եղեր հայրս²¹»:

Ա. Այտընյանը նկատում է արևմտահայ խոսակցական լեզվում հետաքրքիր քերականական մի ձև. այր բառի եզակի թիվը չի հոլովվում, սակայն այս դեպքում օգտագործվում է թուրքերեն *երկան* (տղամարդ, այր) բառը: Օրինակ՝ *երկան, երկանե, երկանով*, ինչպես նաև երբեմն՝ *երկան-մարդու, երկան- մարդե*²²: Բառի ծագման մասին կխոսենք ավելի ուշ:

Համշենի խոսակցականում հաճախ օգտագործվող ձևերից է հետևյալ կառույցը՝ *բայսահիւք+ւս(ուշ)* ածանցը: Օր.՝ *խմուշ եմ, ուտուշ եմ, գալուշ եմ* (խմել եմ - խմած եմ, կերել եմ-կերած եմ, եկել եմ-եկած եմ): Արևելահայ խոսակցականում բարբառային այս ձևից մի օրինակ՝ ուտուշ-խմուշ քարացած ձևը կարծես թե համատարած բնույթ է ստացել:

Հետազոտության այս համատեքստում հատուկ պետք է նշել նաև լեզվական մի իրողության մասին, որն առանձին ուսումնասիրության թեմա է՝ իր թողած հարուստ լեզվապատմական ավանդությամբ. արևմտահայերենի և նրա որոշակի առանձնահատկությունների պահպանման ուղղությամբ արված քայլերից հարկ է առանձնացնել մի յուրահատուկ և պարբերական հոդվածաշար, որը հավաքված է պոլսահայ կիսամյա գեղարվեստական/թատերական «Քուլիս» հանդեսի «Լուցիքա Տուտուին Շաբաթը» ընդհանուր խորագրի տակ՝ սկիզբ դրված 1968 թ.²³: Դրանք հոդվածներ են, որոնք գրված են ժողովրդախոսակցական արևմտահայերենով, կամ, այսպես կոչված, «պոլսո հայեվար»-ով: Մի յուրահատուկ գե-

²⁰ Ե. Օսյան, Ընտանիք, պատիւ, բարոյական, Կ. Պոլիս, 1929:

²¹ Հայրս ունեցել է:

²² Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 15:

²³ «Քուլիս», Կ. Պոլիս, 1968, թիվ 3 (507): Տե՛ս նաև Kulis, editör Fisun Yalçınkaya, Istanbul, 2020:

դագիտական հոսանք համարվող «հայեվար»-ով կիսատերգիծական հոդվածաշարի հիմնադիրը պոլսահայ հայտնի մտավորական, մշակույթի վաստակավոր գործիչ, «Քուլիս» հանդեսի հիմնադիր-խմբագիր Հակոբ Այվազն է, որի՝ այդ ուղղությամբ գործը հաջողությամբ շարունակվում է պոլսահայ երկլեզու (հայերեն և թուրքերեն) շաբաթաթերթ «Ակոս»-ի էջերում: Այս խոսակցական լեզվի մեջ միավորված են արևմտահայերեն և թուրքերեն բառամթերքը, քերականական ձևերը, և, ցավոք, արտացոլում է այն իրականությունը, որը տիրում է պոլսահայ համայնքում՝ լեզվական խնդրի առնչությամբ: «Ակոս»-ը նկատում է, որ մի կողմից հնարավոր չէ անտեսել հայության այն զանգվածը, որը խոսում է «հայեվար»-ով, իսկ մյուս կողմից՝ «Լուցիքա Տուտու»ի խօսակցությունը, շօշափած նիւթերն ու գործածած բացատրությունները այնքան դրական ու շինիչ են, որ իր դիտարկումները երբեմն կը յիշեցնեն փոքրիկ տղուն զարմանքը թագաւորին մերկութեան ի տես եւ կամ պալատներու համարձակախօս հտպիտները, որոնց ըսածները թէւ ոմանց կողմէ լուրջի չեն առնուիր, բայց անոնք յաճախ իմաստուն խորհրդատուներէն անգամ կ'ըլլան աւելի օգտակար»²⁴: Օր.՝ «Աս տավերթիյէները մեր մաթպայայէն ելած են» [= Այս կոչնագրերը (հրավիրագրերը) մեր տպարանից են դուրս եկել]²⁵:

Այսպես, ինչպես նշել ենք, հայերենի և թուրքերենի փոխհարաբերությունն առավել ցայտուն դրսևորվել է և՛ արևմտահայերենի, և՛ թուրքերենի բառապաշարում: Որքան էլ թուրքերենն առաջին հերթին դիմել է արաբերենից և ֆարսերենից (պարսկերեն) փոխառյալ բառերին(արաբերենը Ղուրանի լեզուն էր, իսկ պարսկերենը՝ պոեզիայի)²⁶, այնուամենայնիվ նրան չի հաջողվել զերծ մնալ հայերենի ազդեցությունից, քանի որ սեփական, ազգային ոչ կանոնարկված լեզվի բացակայության դեպքում բնականաբար այդպես էլ

²⁴ «Ակոս», թիվ 95, 23 հունվարի 1998:

²⁵ Թուրք.՝ *davetiye* «հրավիրագիր, կոչնագիր» (տե՛ս *Türkçe-Ermenice Sözlük, աշխատ. հ. Արիստակես վրդ. Պոհճալեան*, Istanbul, 1996, էջ 82), թուրք.՝ *matbaa*-տպարան «մաթպայայ(էն) / տպարանից» (տե՛ս նույն տեղում, էջ 321):

²⁶ Դ. *Երեսեն*, Թուրքերի ծագումը, Ե., 1975, էջ 201:

պետք է լիներ: Չնայած որոշ թուրք լեզվաբաններ թերահավատ են այդ իրողությանը, սակայն, ինչպես նշում է Ն. Մկրտչյանը, հայերեն կամ հայերենի միջոցով (այսպես կոչված «հայացածօտար բառեր») շուրջ երկու հազար բառ անցել է գրական թուրքերենին և բարբառներին, որոնց մի զգալի մասը փոխարինելի չէ այլ համարժեքներով²⁷:

Հ. Աճառյանը 1902 թ. հրատարակել է «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. թուրքերենէ փոխառեալ բառերը հայերենի մէջ» ուսումնասիրությունը, որտեղ խոսում է հայերենին անցած թուրքերեն չորս հազար բառերի մասին, որոնցից գործածական է համարում հարյուր յոթանասունը, իսկ գրականին անցած թիվը քսանից էլ չի անցնում²⁸: Սակայն հակառակ ուղղությամբ փոխառության մասին ամբողջական ուսումնասիրության որևէ փորձ չի արվել, մինչև որ Ն. Մկրտչյանը 2007 թ. գրեց «Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում» խորագրով ընդարձակ ուսումնասիրությունը²⁹: Աճառյանի բառարանում ամփոփվել են միայն մամուլում հրապարակված հայերեն բառերը, որոնք կիրառվում են թուրքերենի այս կամ այն բարբառում³⁰:

Պոլսի բարբառում և խոսակցական լեզվում թուրքերեն տարրերի քննությանն է վերաբերում Մ. Քոչարի աշխատությունը³¹:

Հարկ ենք համարում նշել հայերենից խոսակցական թուրքերենին անցած բառերի մասին առաջին հրապարակումներից մի քանիսը: Թուրքերենին (օսմաներեն) հայերենից անցած բառերի մասին առաջին հիշատակողներից մեկն էր XVII դ. թուրք պատմաբան-ճանապարհորդ Էվլիա Չելեբին, որը ճանապարհորդել է Սոլ-

²⁷ Միայն հայերենից փոխառյալ չորս հարյուր բառ թուրքերենի բարբառներում Ն. Մկրտչյանի ուսումնասիրության մեջ են նշված (տե՛ս Ն. Մկրտչյան, Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում, Ե., 2007):

²⁸ Հ. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալբառեր հայերենի մէջ // «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

²⁹ Ն. Մկրտչյան, նշվ. աշխ.:

³⁰ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, հ. 4, Ե., 1979:

³¹ *М. Кочар*, Турецкие элементы в языке константинопольских армян», Е., 1981:

դովայից մինչև Պարսկաստան՝ ուղևորությունների ընթացքում արձանագրելովերեք տասնյակից ավելի հայերեն բառեր, օր.՝ *şenlik* (sen+lik՝ թուրք. գոյականակերտ ածանց) «շինություն», *çermik* «ջերմուկ», *çörtten* «ջրհորդան», *hopan* «խոպան», *keran* «գերան» և այլն³²:

XIX դ. 2-րդ կեսից և XX դ. սկզբին այս թեմայի շուրջ խոսել են նաև բազմաթիվ թուրքագետներ, ինչպես Ք. Պատկանյանը, Վլ. Գորդլևսկին, Է. Սևորոյանը: Այդ շրջանում հայ մամուլում թուրքերեն խոսակցական լեզվին անցած (փոխառյալ) բառերի վերաբերյալ մեծ հետաքրքրություն սկսվեց: Այսպես, 1898 թ. «Բիրակն» հանդեսում Աճառյանի ջանքերի և կոչերի շնորհիվ սկսեցին հրատարակվել բառացանկեր ժողովրդախոսակցական թուրքերենում գործածվող հայերեն բառերի մասին³³: Հ. Աճառյանը, նախորդների և իր իսկ հավաքած նյութերն ամբողջացնելով, հրատարակեց նախ 1913 թ. «Գաւառական բառարանում»³⁴, ապա «Հայերեն արմատականում» հայերենից թուրքերեն խոսակցական լեզվին անցած շուրջ 230 բառ: Հայ լեզվաբան Հովհ. Գազանճյանը հատուկ հոդված հրատարակեց՝ նվիրված այս թեմային³⁵: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ *այր* բառին: Հեղինակը հայերենից փոխառյալ է համարում թուրքերեն *er* (տղամարդ) և սրանով կազմված *erkek* (արական), *erkeci* (արու այծ) նմանատիպ բառերը: Սակայն Հ. Աճառյանը նշում է, որ դրանք միայն պատահական նմանություն ունեն մեր բառերի հետ³⁶: Մենք համամիտ ենք Գազանճյանի հետ, քանի որ *erik* բառը *er+ik* (իկ՝ փաղաքշական մասնիկ) ձևից է առաջացել: Իսկ ահա *er* բառը հավանաբար *այր* բառն է, որը *այ>է* հնչյունափոխության արդյունք է:

³² Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 3: Աճառյանը բառարանում *ջեր(ւ)* արմատի տակ նշում է հայ. (Եվդ. բրբռ.) *ջերմուկ* «ջերմուկ», որ այլ մտածողության շեմ է բացում (*ծանոթ. խմբ.*)

³³ Հ. Աճառեան. Հայերեն փոխառեալ բառերու կոչ մը գաւառացի բանահաւաքներուն // «Բիրակն», Կ.Պոլիս, 1898, էջ 385-387:

³⁴ Հ. Աճառեան., Գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

³⁵ Յովհ. Գազանճեան, Հայերեն փոխառեալ բառեր թուրքերենի մէջ, Վիեննա, 1911:

³⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 172-175:

Կան հեղինակներ, որոնք նշում են թուրքերեն խոսակցական լեզվում միայն մի շարք հայերեն բառերի գոյության մասին: Է. Սևորդյանը կարծում է, որ *քիրվե* բառը առաջացել է հայերեն *քավոր* բառից: *Քիրվեն* մուսուլմանների մոտ շատ հարգալից և մեծ հեղինակություն ունեցող անձնավորություն էր, որը ներկա էր լինում երեխայի թլփատման արարողությանը և մոգական մի շարք ծեսեր էր կատարում: Այնուհետև նա ամբողջ կյանքում պիտի խնամարկեր նրան³⁷:

Առաջիններից մեկն էր նաև թուրքագետ Ա. Ջաֆերօղլուն, որ 1951 թ. հրատարակեց «Անադոլուի գավառներից բերանացի քաղվածքներ»³⁸: Ներկայացնենք մի քանի բառ նրա հրատարակած ցանկից. *ախպար-ahbar* «եղբայր», *անիկ-anik* «անիկա», *գեդին-gedin* «գետին», *գա-ga* «գայ», *արի-ari* «ատի (ատնել)» և այլն: Հայերեն բառեր են գործածվել նույնիսկ թուրքական էպոսում՝ «Dede Korkud»-ում (*թագավոր, սուր* և այլն)³⁹:

1980-ական թթ. լույս են տեսնում Խ. Ամիրյանի աշխատանքները⁴⁰: Այս ամբողջ գրականությունը շեշտում է այն փաստը, որ թուրքերենի բառապաշարում հայերենից փոխառյալ բառերն ակնհայտ են և թույլ են տալիս դրանց մասին խոսելու:

1. Հայերեն բառերից կազմված թուրքերեն բառեր և դարձվածքներ. *egav* («եկավ»)–*egavlamak*, *getal boc* («գդալ+պոչ»)-միջատի տեսակ (բառը հայերենի ոչ մի գրավոր աղբյուրում չենք հանդիպում), *gom* («գոմ»)–*kömlmek* («անասուններին հավաքել մի տեղում»): Այս և շատ այլ բառեր հանդես են գալիս գրական թուրքերենում որպես ծածկալեզվի(արգո կամ պայմանական լեզու) բառեր⁴¹:

³⁷ Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 5:

³⁸ Caferolğu, Alacam //Bolu/Elekcileri diline ait bazı kelimeler/2, Istanbul, 1951.

³⁹ Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 7:

⁴⁰ Խ. Ամիրյան, Հայերենից փոխառյալ բառեր ժամանակակից թուրքերենում // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, 4 (484), էջ 81-87: Իսկ 1985 թ. լույս տեսավ հեղինակի «Հայերենից փոխառյալ բառերը արդի թուրքերենում» ընդարձակ հոդվածը, որը որոշ փոփոխություններով հրատարակվեց որպես մենագրություն (Ե., 1996):

⁴¹ Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 33:

2. Արևմտահայերենում թուրքերենից պատճենված դարձվածքներ. *պատշար-duvar örmek* (գործածական է գրական արևմտահայերենում), *սիկարա խմել-sigara içmek* (գործածական է խոսակցական արևմտահայերենում), *նոնաման-ayakkabi* (գործածական է գրական արևմտահայերենում), *երկըննալ-uzanmak*, *աֆ ընել-afetmek* (գործածական է խոսակցական արևմտահայերենում, նկատվում է 1980-ական թթ. պոլսահայ մամուլում)⁴²:

Թուրքերենին անցած հայերեն բառերն իրենց ճիշտ արտասանությամբ չեն փոխանցվել, քանի որ դրանք նախ փոխառել են տեղի թուրքերենի բարբառները, այնուհետև անցել են խոսակցական լեզվին, որից հետո թուրքերի կողմից վերագրվել են որպես թուրքերեն բառեր: Եվ վերջինի բարբառները, անշուշտ, տարբերվում են իրենց հնչյունական առանձնահատկություններով: Ինչպես նշում է Ն. Մկրտչյանը, հայերեն նույն բառը թուրքերենի տարբեր բարբառներում հայտնվում է տարբեր` 2-3, նույնիսկ 8-10 աղավաղված տարբերակներով, օր.` *քուռակ* (ՀԱԲ, 4, 594) -*kurruk, kirrik, kurik, kuri* (DS 2822, 2330, 3046, 4572)⁴³:

Հայերենից թուրքերենին անցած բառերի համար միասնական հնչյունական օրենքներ սահմանել, թերևս, հնարավոր չէ: Առավել ակնհայտ են հետևյալ հնչյունափոխական երևույթները, բոլոր խուլ պայթականները դարձել են ձայնեղներ (*ավելուկ-avelik* (ելելիք), *հատիկ-hetik* (հեղիք), բոլոր ձայնեղները` խուլ պայթականներ (*գաթա-kete* (քեթե), *բազուկ-պեզիկ* (փեզիք), իսկ մեծ թվով բառերի ձայնավորները ենթարկվել են փոխառող լեզվի ձայնավորների ներդաշնակությանը (*ավելուկ-avelik(e>i)*):

Բերենք մի քանի օրինակ հնչյունափոխված տարբերակով արևմտահայերենից թուրքերենին անցած բառերից` *օրինակ* (ՀԱԲ, հ. 4, Ե. 1979, էջ 618) - *örnek* (Большой турецко-русский словарь, М., 2006, с. 604), *զաճաճ* «կարճահասակ, կարճլիկ, պնդարմատ» (ԳԲ,

⁴² Ն. Աղբալյան, «Քասիմ - Կեանքի տեսարաններ», Թիֆլիս, 1897, էջ 166: Տե՛ս նաև Քասիմ, Կեանքի տեսարաններ, Իսթանպուլ, 2009:

⁴³ Տե՛ս նաև R. Dankoff, Armenian Loanwords in Turkish, Wiesbaden, 1995:

925/DS 682) – bücür (BAS 37), *պգտիկ*-bizdik, *խաչ*-haç⁴⁴: Մի քանի օրինակ էլ՝ արևմտահայերենում թուրքերենից հնչյունափոխված փոխառյալ բառերից՝ *վախիթ* (ժամանակ)-վաքիթ, *սըխը* (խիտ)–սըք (օրինակները՝ 1880-ական թթ. մամուլից՝ «Քասիմ-Կեանքի տեսարաններ», Ն. Աղբալյան, Թիֆլիս, 1897, էջ 166):

Ն. Մկրտչյանը տարբերակել է քսանից ավելի մշակութային բառեր գրական թուրքերենում, որոնց անվանումները հայերեն են (այդպես էլ կոչվում են՝ էրմենի բարլարը - Հայկական պարեր)՝ *Աղջկա պար*-Ահչըք բար, *Ծաղիկ պար*-Չեփիկ բար, *Հոյ նար*-Օյնար (ենթարկվել է բաղարկության, այսինքն՝ գիտակցվում է որպես թուրքերենի *oyunak*՝ «խաղալ, պարել» բառից կազմված *oyun*՝ «շարժուն, շարժվող» մի ձև)⁴⁵:

Թուրքերենում արհեստ ցույց տալու համար գործածվող *ci* մասնիկով կազմված բառերն այսօր հայերենում գործածվում են որպես ազգանուններ, օր.՝ *Ղեսիրճյան*, *Ղազանջյան* և այլն: Նման օրինակներ են *li* մասնիկով կազմված այն բառերը, որոնք «բնակվող, ունեցող» իմաստն են արտահայտում: Այս ձևերը գործածվում են որպես ազգանուններ, ինչպես օրինակ՝ Իզմիրյան, Բուրսալյան, Մարաշիյան և այլն: Խոր ուսումնասիրություն են պահանջում հայկական այն տեղանունների անվանումները, որոնք տեղաբնակ մուսուլմանների կողմից խեղաթյուրվել են. *Վարդենիք*–*Բաշ*-(վերին) *Վարդենիք*, *Ավերակ*-*Ավարեկ*, *Բազմաշեն*-*Պզմշեն* և այլն:

Այսպիսով՝ արևմտահայերեն-թուրքերեն առնչությունը դրսևավորվում է երկու լեզվի գրեթե բոլոր շերտերում: Փոխազդեցությունը երկկողմանի է, որն իր զարգացման և ծավալման գործընթացում աստիճանաբար ավելի է զգալի դարձել: Նշենք նաև, որ հատկապես պոլսահայ բանավոր լեզվում, առավել բառապաշարում թուրքերեն փոխառություններն էին գերակշռող, ապա արդեն խոսքի կառուցվածքին առանձնահատկություններն էլ գլխավորա-

⁴⁴ Ս. Խաչ, *խաչերություն*, Թրքերեն-հայերեն առձեռն բառարան, Հ. Արիստակես վրդ. Պոհճալեան, Վիեննա, 1996, էջ 179:

⁴⁵ Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 49:

պէս թուրքերէնի լեզվակառուցվածքինէն բնորոշ⁴⁶: Կան թուրքերէնում զգալի չափով արևմտահայերէնից փոխառյալ բառեր, որ հայտնի ժխտողական պայմաններում չեն համարվում ընդունելի:

Ключевые слова: западноармянский, турецкий, армянские слова в турецком языке, взаимодействие языков, [ЯЗЫКОВЫЕ ЗАЙМСТВОВАНИЯ](#), [ЯЗЫКОВЫЕ КОНТАКТЫ](#).

Э.З. Мирзоян. Взаимодействие западноармянского и турецкого языков. - В статье предпринята попытка продолжить исследование об армянских заимствованных элементах в турецком языке, начатое академиком Р. Ачаряном еще в конце XIX в. Как было отмечено академиком, этот процесс касался большей частью «устных заимствований». В современной лингвистической науке проведено много исследований, касающихся влияния турецкого языка на армянский язык, в целом, и, в частности, использования заимствованных турецких слов, грамматических форм и языковых выражений, и наоборот.

Проведенное нами исследование доказывает этот факт и показывает, что в настоящее время число заимствованных слов из западноармянского языка в турецком языке увеличивается. Часть армянских слов, вошедших в свое время в говоры турецкого языка, сегодня постепенно входит в активное пользование, фиксируется в словарях и используется в современной турецкой литературе. Таким образом, в результате проведенного исследования, делается вывод, что взаимодействие западноармянского и турецкого языков проявляется практически во всех аспектах рассматриваемых языков, и этот процесс постепенно становится более значимым.

Keywords: Western Armenian language, Turkish language. Armenian words in Turkish, Interaction between languages, borrower linguistic, linguistic contacts.

E.Z. Mirzoyan - Interaction of western armenian and turkish languages. - In this article, we have made an attempt to continue the study of Armenian borrowed elements in Turkish, begun by academician H. Acharyan at the end of the 19th century. As noted by the academician, this process concerned mostly “oral borrowings”. In modern linguistic science, many studies have been carried out regarding the influence of Turkish language on Armenian language in general, and,

⁴⁶ Է. Միրզոյան, Պոլսահայ համայնքի լեզվական խնդիրների արտացոլումը «Ալփոս» շաբաթաթերթի էջերում // «Արևելագիտության հարցեր», VII, Ե., 2014, էջ 252-257:

in particular, the use of borrowed Turkish words, grammatical forms and linguistic expressions, and vice versa.

Our research proves this fact and shows that at present the number of words borrowed from Western Armenian language in Turkish language is increasing. Some of Armenian words that once entered the dialects of Turkish language are gradually entering into active use today, being recorded in dictionaries and used in modern Turkish literature.

Thus, as a result of this research, we came to the conclusion that the interaction of Western Armenian and Turkish languages is manifested in almost all aspects of the languages under consideration, and this process is gradually becoming more significant.

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И
ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ս. Գալստյան

Հիմնաբառեր: Նորակազմ բառ, մասնագիտություն, զբաղմունք արտահայտող բառ, իմաստաթեմատիկ խումբ, նորաստեղծ ժամանականիշ բառեր, նորաստեղծ սխալ կազմություններ:

Հայերենի բառապաշարը անընդհատ համալրվում է նորաստեղծ բառերով և արտահայտություններով՝ հասարակական կյանքի փոփոխություններին համընթաց: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսած «Նոր բառեր» բառարանի Ա - Ջ պրակների հավաքած նյութը հնարավորություն է տալիս քննելու արդի հայերենում բառաստեղծման իմաստային և կառուցվածքային որոշակի միտումներ և օրինաչափություններ:

Է. Բ. Աղայանը գրում է. «Բառապաշարի զարգացումը ամբողջությունն է լեզվի բառային կազմում տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների, որոնք ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին: Չարգացման այս ընդհանուր գործընթացն իրացվում է բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով»¹:

Իսկ «Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին» հոդվածում խոսելով տերմինների գնահատման և բնութագրման հա-

¹ Է. Բ. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003, էջ 263:

մար կարևոր երկու չափանիշի մասին՝ արգասավորություն և համակարգայնություն, Է. Աղայանը նշում է, որ գործածության մեջ դրվող բառի կենսունակությունը պայմանավորված է նրա՝ նոր բաղադրություններ կազմելու հատկությամբ: «Եթե մենք օտար տերմինը փոխարինում ենք հայերենով, ապա պետք է մտածենք նաև այն մասին, որ դրանից կարողանանք ստանալ բոլոր անհրաժեշտ հարակից բառերը, հակառակ դեպքում մեկ առանձին տերմինի հայացումը, առանց հարակից բառերի, չի արդարանում»²:

Որպես օրինակ բերվում է այն ժամանակ գործածության մեջ նոր մտնող *գրոսաշրջիկ* բառը և նշվում է. «Օրինակ՝ վերջերս մեզ մոտ գործածում են *գրոսաշրջիկ* բառը, որ, մեր խորին համոզմունքով, երբեք էլ հաստատուն արմատներ չի գտնելու և չի փոխարինելու *տուրիստ* բառին. այդ բառի կենսունակությանը խանգարում է ոչ միայն իմաստային ոչ լիարժեքությունը, այլև արգասավորության ու համակարգայնության բացակայությունը...»³:

Կարող ենք նշել, որ, հակառակ այս հիմնավորման, *գրոսաշրջիկ* բառը այսօրվա հայերենում լայն կիրառություն ունի. գործածվում են նաև *գրոսաշրջություն, գրոսաշրջային, էկոգրոսաշրջային, էկոգրոսաշրջություն* կազմությունները: Ի դեպ, «Նոր բառեր»-ի Դ պրակում արձանագրված է *գրոսաշրջիկ* իմաստով մեկ այլ բառ՝ *շրջեկ*: Գործածության օրինակը «Գրական թերթից» Է. Հայլենդի գոյությունը վիթխարի զարկ է տալու գրոսաշրջիկությանը, *շրջեկների* հոսք կարող է բերել Մերձավոր Արևելքի, ԱՊՀ, Հայաստանի հարեվան ու նաև հեռավոր երկրներից (ԳԹ, 13.04.2018):

Անցնենք մասնագիտություն, զբաղմունք, որևէ գործունեությանը զբաղվող անձ նշանակությամբ նոր բառերի քննությանը: Այս ոլորտի կազմություններում գործուն են *-գործ, -բան, -գետ* բաղադրիչները⁴: *-Գործ* բաղադրիչով բառարանագրվել են *չրագործ, շոկոլադագործ, շապկագործ, ընթացագործ, զգեստագործ, թոնրագործ,*

² Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 180:

³ Նույն տեղում:

⁴ Օրինակները բերվում են «Նոր բառերի» Ա- Զ պրակներից:

խաչքարագործ, թունելագործ նորակազմ բառերը⁵ : -Բան ածանցակերպով կազմվել են *ներգատարան, դաջվածքարան, թմրարան, մշակութարան, սննդարան, քնարան, գոյավերլուծարան, հնամարդարան, հեռուստատեսարան, ողնաշարարան, մոլորակարան, երկրաձևարան, ժառանգարան, չղջիկարան, բժշկակենսարան, աստղակենսարան, ֆոտոպատմարան, լեզվագործարան, լեզվաճանաչողարան*: Օտար հիմքերով կազմված են *ալերգարան, ստրեսարան* բառերը: -Գետ ածանցակերպով «Նոր բառերում» արձանագրված են՝ *միջնադարագետ, նախիջևանագետ, շումերագետ, թալիշագետ, սառցագետ, ցեղասպանագետ, ռազմավարագետ, գազանագետ, քարանձավագետ, սփյուռքագետ, մեդիամասնագետ, մեդիափորձագետ, հուշարձանագետ, էթնոպարագետ, ամենինչագետ (դիպլ., հեզն.), մահագետ, ահաբեկչագետ, ապագայագետ, ֆիլմագետ* և այլն:

Արձանագրենք, որ ժամանակի ընթացքում *-գետ* և *-բան* ածանցակերպներով ստեղծված մի քանի բառեր իմաստով սահմանագատվել են և այժմ ունեն տարբերակված գործառույթ: Հմնտ. պատմագետ – պատմարան, լեզվագետ – լեզվաբան, աստղագետ – աստղաբան, արվեստագետ – արվեստաբան, տերմինագիտություն – տերմինաբանություն, իրավագիտություն – իրավաբանություն: Ի դեպ, երբեմն լեզվակիրների ընկալման մեջ պատահում են թյուրըմբռնումներ. այսպես՝ հնագետ և հնէաբան բառերի բաղարկությամբ ստեղծում են հնէագետ սխալ կազմությունը:

Գործուն են նաև *-նկարիչ, -վաճառ, - վար, -բույծ, -բույժ, -ող* բաղադրիչներով կազմությունները: Թվարկենք մի քանիսը. *մարմնանկարիչ, զգեստանկարիչ, գրքանկարիչ, ավազանկարչ(ուհի), նկարավաճառ, ծրագրավաճառ, աճուրդավար, հանդիսավար, խնջույքավար, մղանավար, ցուցակավար, հեռուստավար, խամաճիկավար, հարցազրուցավար, ջայլամաբույծ, շինշիլաբույծ, նյար-*

⁵ Բառակազմական կաղապարների մասին տե՛ս *Ս. Ա. Գալստյան*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե, 1978:

դավիթաբույժ, սրտավիթաբույժ, դատահոգեբույժ, սողայաբույժ և այլն:

-Ող բաղադրիչով նորաստեղծ բառերի ներդրող, ներկրող, համադրող, դրոշմավորող կառույցների շարքում առանձնացնում ենք տարածում ստացած և հաճախ օգտագործվող *ավտոներկրող, ավտոներմուծող, ավտոարտադրող, կինոներմուծող, կինովավերագրող* բառակազմական «ուղիղ ինդիք-ստորոգյալ» բանաձևն ունեցող բառերը: Նույն բանաձևն ունեն նաև՝ *ագրովերամշակող, ջրօգտագործող, ընդերքօգտագործող, կոնյակարտադրող, հանքարտադրող, ֆիլմարտադրող, տուրիստականարգող, հողօգտագործող, դեղարտադրող, կրիպտաներդրող* բառերը: Մի քանի գիտաճյուղերի հատույթում ստեղծված մասնագիտությունների և համապատասխան մասնագետների անվանումներում առկա է լինում երկու, երեք, նույնիսկ չորս արմատ՝ *էթնոհոգեկեզվաբան, հոգեսոցիոլոգիկաբան, աստղակենսաբան, լեզվաճանաչողաբան, լեզվագործաբան* և այլն:

Մի քանի դիտարկում մեկ այլ թեմատիկ խմբի նորակազմ բառերի մասին: -*Երգ, -նկար, -արվեստ* վերջնաբաղադրիչներով կազմությունները բազմաթիվ են (նշենք, որ առայժմ սակավաթիվ են կամ գրեթե չեն հանդիպում իմաստային նույն դաշտին վերաբերող, -*պար, -քանդակ, -պատկեր, -արձան* վերջնաբաղադրիչներով նորակերտ բառերը):

-*Երգ* վերջնաբաղադրիչով բառերից նշենք՝ *հաշվերգ, ողջերգ, ահերգ, պարզերգ, որսերգ, գիներգ, վրեժերգ, հնչերգ, թռչներգ, կալերգ, հավքաերգ*:

-*Նկար* վերջնաբաղադրիչով նորակերտ բառերից նշենք՝ *անձավանկար, կազմանկար, տեսանկար, գիշերանկար, հողանկար, վանդականկար, տպագրանկար, քաղաքանկար, հայանկար, մահանկար, փայտանկար, քարոզչանկար, բառանկար, եվրահեռանկար, թատերախճանկար, պոռնոլուսանկար, ֆոտոդիմանկար*⁶:

⁶ Տե՛ս նաև Հ. Լ. Ջաքարյան, Հայերեն էլեկտրոնային բառարանի ինքնազարգացման մի եղանակ // «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկ-

Այս կաղապարով ստեղծված եռաբաղադրիչ (վերջին չորսը) կազմություններում նորաբանություններ են կազմվում *-նկար* վերջնաբաղադրիչն արդեն ունեցող բառերին (*հեռանկար, խճանկար, դիմանկար, լուսանկար*) *եվրա-*, *թատերա-*, *պոռնո-*, *ֆոտո-* սկզբնաբաղադրիչների հավելումով):

-*Արվեստ* բաղադրիչով նորաստեղծ կազմություններ են՝ *ռճարվեստ, դդմարվեստ, ճոճարվեստ, գրքարվեստ, կեղծարվեստ, ժայռարվեստ, հողարվեստ, ֆոտոարվեստ, քանդակարվեստ, ֆոտոգեղարվեստ, լռարվեստ, թափոնարվեստ* և այլն:

Հաճախադեպ են նաև *-ոլորտ, -դաշտ, -աշխարհ* վերջնաբաղադրիչներով կազմված բառերը: Սրանցից «Նոր բառերի» վեց պրակներում արձանագրված են հետևյալները՝ *թախծաշխարհ, տեխնոաշխարհ, մեդիաաշխարհ, ֆիլմաշխարհ, զուգաշխարհ, տեսլաշխարհ, ձկնաշխարհ, երագաշխարհ, գոյաշխարհ, լրատվաշխարհ, մեդիաոլորտ, նշանոլորտ, բլոգոլորտ, գյուղոլորտ, կինոլորտ, հեռուստաոլորտ, կիրեռոլորտ, դեղոլորտ, գոյամթնոլորտ, գունամթնոլորտ, լրատվադաշտ, մեդիադաշտ, հեռուստադաշտ, աշխատադաշտ, արժեդաշտ*: Նկատենք, որ *-դաշտ, -աշխարհ* բաղադրիչները բաղադրությունների կազմությանը մասնակցում են փոխաբերական իմաստով:

Այժմ անդրադառնանք *-համ, -հոտ, -բույր* իմաստաթեմատիկ խմբին: *-Բույր* բաղադրիչով «Նոր բառեր» բառարանաշարում արձանագրված են բազմաթիվ նորակազմություններ՝ *անխոնաբույր, ավշաբույր, բարկաբույր, խոտաբույր, ծխախոտաբույր, ճոռոմաբույր, հարսնաբույր, հրաշաբույր, մարիխուանաբույր, օփիոմաբույր, դառնաբույր, մարմնաբույր, նշխարաբույր, վատաբույր, գյուղաբույր, լավաշաբույր, ծիրանաբույր, փաթիլաբույր, հասմիկաբույր, շնչաբույր, սառնաբույր, տնաբույր, գրաբարաբույր, կարոտաբույր, ծխաբույր, օդաբույր* և այլն, *-հոտ* բաղադրիչով՝ *քարածխահոտ, ուրցահոտ, նավթալինահոտ, արևահոտ, ծովահոտ, սնկահոտ,*

ման հիմնախնդիրներ». Հանրապետական գիտաժողով, 18 դեկտ., 2019 (հողվածների ժողովածու), Ե., 2020, էջ 55-56:

ցեխահոտ, կաշեհոտ, մտքահոտ, միահոտ, կեղևահոտ, տամկահոտ, թոնրահոտ, հագարահոտ, մեղվահոտ, մրգահոտ, նշահոտ, - համ բաղադրիչով՝ մոխրահամ, սրճահամ, սարահամ, մարդահամ (մարդահամ գալ կապակցության մեջ), տհաճահամ և այլն: Այս թեմատիկ խմբում հաճախադեպ են փոխաբերական գործածությունները, նաև բանաստեղծական բառերը՝ անրջաբույր (օրորոց), աշնանահամ (անձրև), արևահոտ, բառահամ (փխբ.), սատանայաբույր (փխբ.) չարաբույր, դաժան), աստվածահամ (փխբ.), հաղթաբույր (փխբ.):

Անդրադառնանք նաև նորաստեղծ ժամանականիշ բառերի քննությանը: *Գարնանագալ, ճաշավերջ, օրաշար, դարավարտ, օրակես, պատմափուլ, պեղաշրջան, հարահավերժ, լուսնագալ, տոնաշրջան, օրածեզ, օրավարտ, ընթացածամանակ, ընթացափուլ* օրինակները բաղադրյալ կազմություններ են: Դրանց մի մասը բանաստեղծական, հուզական երանգ պարունակող բառեր են: Ժամանակի իմաստը նորակազմ բառերում կարող է արտահայտվել նաև բառակազմական այլ միջոցներով (նախածանցում, վերջածանցում): *Մինչ-, նախ-, վեր-, հետ-* նախածանցներով կազմված նորակերտ բազմաթիվ բառերից նշենք մի քանիսը միայն՝ *նախագեղագիտական, նախամրցույթային, վերժամանակյա, հետզինադադարյան, մինչճգնաժամային, մինչվաղորդյան* և այլն:

Մի քանի խոսք նորակազմությունների ստեղծման ժամանակի հայտ եկող որոշ սխալների, անճշտությունների մասին: Դրանք գործածության ժամանակ նկատվելու դեպքում կա՛մ շտկվում են, կա՛մ փոխարինվում են այլ կառույցներով: Ավելորդ չէ այս մասին մեկ-երկու վկայություն բերել: Խոսքը վերաբերում է *-հենք* և *-հեն* բաղադրիչներով կազմություններին: *Գիտելիքահենք* («գիտելիքի վրա հենված»), *համայնքահենք* («համայնքի վրա հիմնված»), *փաստահենք* («փաստերի վրա հիմնված») կիրառությունների բառարանային նմուշները համապատասխանում են լեզվական գործող կաղապարին: Այսպես, «Նախագահն ու վարչապետը անցած տարիների ընթացքում պարբերաբար խոսում են գիտական ներուժի օգտա-

գործման, *գիտելիքահենք* ոլորտի զարգացման, այս ոլորտի առաջնահերթության մասին (Ազգ, 28.03.2014)», «Այն կազմակերպվում է «Համայնքահենք էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում» ծրագրի շրջանակներում (ՀՀ, 30.07.2019)»: «Կենտրոնը մի շարք պիլոտային փորձարկումների օգնությամբ *փաստահենք* առաջարկներ է ներկայացրել կառավարությանը (Հմց.): Շրջանառության մեջ են նաև *ծրագրահեն, ցանցահեն* բառերը՝ կազմված *ծովահենի* համաբանությամբ: «Նոր բառեր»-ի Ե պրակում գրանցված է նաև *բաստահեն* դիպվածային բառը՝ «բառը՝ խոսքը յուրացնող, գողացող» նշանակությամբ: Այսպիսով, *հեն* և *հենք* արմատները հարանուններ են և բառեր կազմելիս պետք է տարբերակվեն: Այս առումով *արժեքահեն* բառը, որ վկայված է «Նոր բառեր»-ի Ե պրակում, ակնհայտորեն անհաջող կազմություն է [«Նոր կրթությունը պետք է լինի ապակենտրոն, *արժեքահեն, կիրառական* և ստեղծարար (Հմց.)»]:

Բառարանում ընդգրկված նյութի վերլուծությունը կարելի է շարունակել՝ առանձնացնելով իմաստային նոր խմբեր (հասարակական-քաղաքական ոլորտին, բժշկությանը, աշխատանքային գործիքներին, բնությանը վերաբերող բառեր և տերմիններ)՝ իրենց կառուցվածքային բնորոշ կաղապարներով:

Սմփոփում: Նորակազմ բառերի բառակազմական կաղապարների, հիմքերի ու ածանցների կապակցության քննությունը ի հայտ է բերում իմաստակառուցվածքային որոշակի առանձնահատկություններ:

Սույն հոդվածում ներկայացվում են նորաստեղծ բառերի առաջացման և տարածման որոշակի միտումներ ու օրինաչափություններ: Բառերի մի քանի իմաստային (թեմատիկ) խմբերի դիտարկման միջոցով վերհանվում է որոշակի ածանցների և ածանցակերպների գործունակացման երևույթը: Դիտարկվում են մի շարք նորակերտ ժամանակակից բառեր: Ուշադրության առարկա են դարձել հատկապես մասնագիտություն, զբաղմունք նշանակող նորակերտ բառերը: Անդրադարձ է կատարվում նաև նոր կազմու-

թյունների ստեղծման ժամանակ նկատվող որոշ անճիշտ ձևերին: Հոդվածում քննվող փաստական նյութը «Նոր բառեր» բառարանի պրակներում ընդգրկված բառերն են:

Ключевые слова - новообразование, слова, обозначающие профессию, занятие, тематическая группа, новые слова, обозначающие время, неправильные образования.

А. С. Галстян - Вопросы семантико-структурного анализа новых слов в современном армянском языке.- Исследование словообразовательных моделей, связей суффиксов и основ новых слов в современном армянском языке выявляет определенные закономерности семантико-структурного характера. В данной статье исследуются тенденции и закономерности возникновения и распространения новых слов. Рассмотрения некоторых семантико-тематических групп слов выявляется тенденции активизации некоторых суффиксов и суффиксидов. Рассматриваются новые слова, обозначающие время в современном армянском языке. Особое внимание уделяется анализу новых слов, обозначающих профессию, занятие. Отмечаются также некоторые отклонения от словообразовательных норм. В статье использован фактический материал выпусков словарей «Новые слова».

Keywords: new formation, occupation words, thematic group, new words, denoting time, irregular formations.

A. S. Galstyan - Issues of semantic-structural analysis of new words in the modern Armenian language.- The study of word-formation patterns, the relations of suffixes and bases of new words in the modern Armenian language reveals certain regularities of semantic-structural nature. The present article explores the tendencies and regularities of the emergence and spread of new words. By means of consideration of some semantic-thematic groups of words some tendencies of activation of some suffixes and suffixoids are revealed. New words denoting time in modern Armenian are examined. Special attention is paid to the analysis of new words denoting profession and occupation. Some deviations from the word-formation norms are also pointed out. The article is based on the factual material of the "New Words" dictionaries.

**ԲԱՂԱԶԱՅՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՅՆԱՎՈՐԻ ՎՐԱ
ԲԱՂԱԶԱՅՆ-ՁԱՅՆԱՎՈՐ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(փորձառական հետազոտություն)**

Բանասիր. գիտ. թեկնածու Գ. Գ. Գրիգորյան

Հիմնաբառեր: Ձայնավոր, բաղաձայն, հնչյունակապակցություն, ձայնեղություն-խլություն-շնչեղություն, հնչյունական շրջապատ, տևողություն, ուժգնություն:

Մարդկային հաղորդակցման գործընթացում խոսքի հնչյունները արտասանվում են ոչ թե առանձին-առանձին, այլ հնչյունակապակցություններով, որտեղ բաղադրիչ հնչյունները գտնվում են ամենասերտ փոխկապակցության և փոխազդեցության մեջ: Ինչպես ասում էր ռուս լեզվաբան Լ. Բուլանինը իր «Фонетика современного русского языка» աշխատության մեջ, հնչող խոսքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ և՛ արտաբերական, և՛ ձայնաբանական առումներով անհնար է խոսքի հոսքը բաժանել այնպիսի հատվածների, որոնք ճշգրտորեն համապատասխանեն առանձին հնչյունների¹: «Մարդը վարժված է հնչելու բառը իբրև մի ամբողջություն, առանց արտասանելու նրա կազմիչ տարրերը, այն է՝ առանձին ձայները», - հաստատում էր Աճառյանը իր «Լիակատար քերականության» մեջ²:

Ձայնավորները հնչյունական տեսակետից ավելի «կայուն» են, քանի որ կարող են արտասանվել առանձին: Այս դեպքում, ինչպես նշում է Լ. Վ. Բոնդարկոն, ձայնավորը հնչման ողջ ընթացքում իրենից ներկայացնում է համասեռ մի բան: Սակայն հատուկ փորձերը ցույց են տվել, որ ձայնավորի սպեկտրում նկատվում է հնչման

¹ Լ. Լ. Буланин, Фонетика современного русского языка, М., с. 206.

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. 6, Ե., 1971, էջ 53:

անհամասեռություն, եթե նույնիսկ ձայնավորի հնչյունական կախվածությունը մոտենում է զրոյի³:

Մեր կողմից իրականացված փորձառական հնչյունաբանական ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ հայերենում (այլ լեզուներում ևս այդպես է) ձայնավորների անհամասեռությունն ուժեղանում է՝ բաղաձայնների ազդեցությամբ պայմանավորված: Ընդ որում *բաղաձայն-ձայնավոր* [= ԲՁ] կապակցությունն ավելի սերտ է, քան հակառակ կապակցությունը, ուստի նախորդող բաղաձայնը ավելի ուժեղ է ազդում ձայնավորի վրա, քան հաջորդողը⁴: Դա կարելի է պատճառաբանել հետևյալ կերպ. քանի որ խոսքը արտաբերական մակարդակում ընթանում է ժամանակային հաջորդականությամբ, այսինքն՝ ԲՁ կապակցության մեջ սկզբում արտասանվում է բաղաձայնը, հետո՝ ձայնավորը, հետևաբար դեռևս բաղաձայնի արտաբերության ժամանակ արտասանական որոշ օրգաններ պատրաստվում են ձայնավորի արտասանությանը, և նախորդող բաղաձայնը «հարմարվում է» ձայնավորին: Հակառակ՝ *ձայնավոր -բաղաձայն* [= ՁԲ] կապակցության մեջ սկզբում արտասանվում է ձայնավորը, բաղաձայնի արտասանության համար արտաբերական օրգանների վերադասավորումն ուշանում է, որն էլ պատճառ է դառնում ձայնավորի և բաղաձայնի միջև կապի և ազդեցության թուլացման:

ԲՁ կապակցության սերտության մասին է վկայում այն փաստը, որ բաղաձայնները թվարկելիս հնարավոր չէ դրանք արտաբերել մեկուսացված վիճակում, այսինքն՝ արտասանել զուտ «մաքուր» բաղաձայններ. դրանք անպայմանորեն արտասանվում են որևէ ձայնավորի «հենված»: Հայերենում դա ը ձայնավորն է, ռուսերենում՝ е-ն :

³ Л.В.Бондарко, Звуковой строй современного русского языка, М. 1977, с. 56-64:

⁴ Ի դեպ, ավելի քան 3 տասնամյակ առաջ մեր կողմից կատարվել է նմանատիպ փորձառական ուսումնասիրություն մեր կողմից տեխնիկական այլ միջոցների օգտագործմամբ (օսցիլոգրաֆ, թվային վերլուծման սարք): Համակարգչային նոր ծրագրով (Praat) կատարված փորձերը տվել են նույն արդյունքները:

Արտաբերական մակարդակում բաղաձայնների ազդեցության աստիճանը կախված է այն բանից, թե ըստ տեղի որքանով են համապատասխանում, որքանով են մոտ բաղաձայնն ու ձայնավորը: Տրամաբանական է, որ շրթնային բաղաձայնները ավելի շատ ազդում են ոչ շրթնային ձայնավորների վրա, ավելի քիչ՝ շրթնայնացածների, առաջնալեզվային բաղաձայնները ավելի շատ ազդում են հետին շարքի ձայնավորների վրա, ավելի քիչ՝ առաջնաշարքայինների և այլն:

Հայերենի ոչ-շրթնային *ա, է, ի, ը* ձայնավորների վրա իրենց ազդեցությունն են թողնում շրթնայնացած բաղաձայնները: Բաղաձայնների արտասանության գրաված իրենց ակտիվ արտաբերական դիրքից շրթունքները միանգամից չէ, որ անցնում են համեմատաբար չեզոք դիրքի, դրա հետևանքով ձայնավորի սկիզբը որոշակիորեն շրթնայնանում է: Ձայնավորների բնութագրերի ուսումնասիրման համար շատ կարևոր է այն հանգամանքը, թե տվյալ ձայնավորը ինչպիսի բաղաձայններով է շրջապատված: Պարզվում է, որ բաղաձայնների մեջ ձայնի առկայության և բացակայության իրողությունը բավականին մեծ նշանակություն ունի կից ձայնավորների ձայնաբանական բնութագրերի փոփոխությունների համար: Ձայնեղ բաղաձայնների շրջապատում գտնվող ձայնավորների տևողությունը գերազանցում է խուլ շրջապատում գտնվող ձայնավորի տևողությանը: Այդ երևույթը բացատրվում է հետևյալ կերպ. խուլ բաղաձայնների շրջապատում ձայնավորը տևում է մինչև «թիրախին» հանդիպելը, իսկ ձայնեղի դեպքում ենթադրվում է, որ ձայնը կարծես շարունակվում է՝ ի հաշիվ ձայնեղի: Ինչ վերաբերում է ուժգնությանը, ապա ձայնեղ բաղաձայնների շրջապատը բարձրացնում է կից ձայնավորի ուժգնությունը, քանի որ ձայնեղներն ավելի մեծ ուժգնություն ունեն, քան խուլերը:

Մեր փորձառական ուսումնասիրության ընթացքում անդրադարձել ենք ձայնեղություն – խլություն – շնչեղություն հատկանիշների ազդեցությամբ պայմանավորված ձայնավորների կրած ձայնաբանական փոփոխություններին, մասնավորապես՝ տևողությա-

նը և ուժգնությանը, քանի որ ձայնի առկայության և բացակայության իրողությունը բաղաձայնների համար կարևոր պայման է՝ կից ձայնավորների ֆիզիկական բնութագրերի փոփոխության համար:

Մակայն մեր կողմից ուսումնասիրվող բառերում հիմնական ուշադրությունը դարձրել ենք նախորդող բաղաձայնի ազդեցությանը, քանի որ, ինչպես նշեցինք, ԲՁ կապակցությունն ավելի սերտ է: Փորձերը ցույց են տվել, որ հակառակ՝ ՁԲ կապակցության մեջ բաղաձայնի ազդեցությունն աննշան է, գործնականորեն՝ աննկատելի⁵: Այս երևույթը բացատրվում է հայերենի վանկատման առանձնահատկությամբ:

Հայերենի ձայնավորների փորձառական ուսումնասիրությունները կատարվել են Պոաստ ծրագրի շրջանակներում, ձայնագրությունները կատարվել են տնային պայմաններում, նյութը կարդացել են բանասիրական կրթությամբ մարդիկ, այսինքն՝ գրական հայերենի կրողներ, որոնք ծնվել են Երևանում:

Ուսումնասիրության առարկա ձայնավորը գտնվել է նույն բաղաձայնական շրջապատում, այսինքն՝ երկու կողմից շրջապատված է եղել նույն տիպի (ձայնեղ, խուլ կամ շնչեղ) բաղաձայններով: Ընդ որում *ա* ձայնավորը մի կողմից շրջափակելով երկշրթնային *բ, պ, փ*, մյուս կողմից՝ աստամնային *դ, տ, թ*, բաղաձայններով, ստացանք *բադ, պատ, փաթ* միավանկ բառերը, որտեղ ձայնավորը լրիվ նույն հնչյունական պայմաններում է. առաջին բառում *ա* ձայնավորը գտնվում է ձայնեղ բաղաձայնների շրջապատում, երկրորդ դեպքում՝ խուլ, երրորդում՝ շնչեղ:

Հայերենի ձայնավորների վրա ձայնեղ, խուլ և շնչեղ բաղաձայնների ազդեցությունը ուսումնասիրել ենք ոչ միայն *ա*, այլ նաև *ու* ձայնավորի համար՝ բավարար համարելով դիտարկել մեկ բաց և մեկ փակ ձայնավոր՝ նշված երեք բաղաձայնների հարաբերության մեջ: Ընտրելով *ու* ձայնավորի նույնական հնչյունական բաղա-

⁵ *А.А. Хачатрян, В.Н. Айрапетян, Экспериментальное исследование согласных фонем литературного армянского языка, Е., 1971, с. 323.*

ձայնական շրջապատը՝ ստացանք *բուդ*, *պուտ* և *փութ* բառացանկը:

Չայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայնների ազդեցությամբ պայմանավորված ձայնավորների փոփոխություններն առաջին հերթին անդրադառնում են ձայնավորի տևողության վրա:

Փորձառական ուսումնասիրության արդյունքներն ի մի բերելով՝ հանգեցինք հետևյալ եզրակացության. ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայնների շրջապատում գտնվող ձայնավորների տևողության համեմատությունը ցույց տվեց, որ ձայնավորն առավել տևական է ձայնեղ բաղաձայնների շրջապատում, պակաս տևական՝ շնչեղ խուլ շրջապատում: Այս երկուսի համեմատությամբ միջին դիրք է գրավում խուլ բաղաձայնների շրջապատը, որի դեպքում ձայնավորի տևողությունն ավելին է շնչեղ խուլ բաղաձայնների շրջապատում գտնվող ձայնավորի տևողությունից և պակաս՝ ձայնեղների կից ձայնավորի տևողությունից: Օր.՝ *ա* ձայնավորի տևողությունը *բաղ* բառում 170 միլիվայրկյան է, *պատ* բառում՝ 165, իսկ *փաթ* բառում՝ 160 միլիվայրկյան: Չայնեղ բաղաձայնների շրջապատում գտնվելիս ձայնավորի տևողությունը համեմատական կարգով ավելի մեծ է, քանի որ ձայնավորը շրջապատված է ձայնեղությամբ, և կարծում ենք, որ ձայնավորի տևողությունը մեծ է ի հաշիվ բաղաձայնի ձայնեղության. ձայնավորը կարծես թե «խլում է» բաղաձայնի ձայնից:

Խուլ բաղաձայնների շրջապատում ձայնավորը շրջափակված է խլությամբ: Պատկերավոր կարելի է ասել, որ ձայնեղի դեպքում ձայնի սահմանները բաց են, իսկ խուլի դեպքում դրանք փակվում են:

Շնչեղ խուլ բաղաձայնների շրջապատում, որտեղ ձայնավորի տևողությունը նվազագույնն է, ենթադրվում է, որ այն փոքր է շնչեղության պատճառով: Այս դեպքում խլության հետ կա նաև շնչեղություն, որոնք երկուսը միասին պատճառ են դառնում ձայնավորի տևողության կրճատման: Ըստ ձայնավորի նվազող տևողության կարելի է տալ բաղաձայնական շրջապատների հետևյալ շարքը.

ձայնեղ - խուլ - շնչեղ խուլ

Բաց և փակ ձայնավորների փորձառական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բաց ձայնավորներն արտահայտվում են ավելի ուժգին, քան փակերը: Ինչպես ձայնավորների տևողության դեպքում, ուժգնության վրա ևս որոշակի ազդեցություն է թողնում բաղաձայնական շրջապատը: Ձայնեղ բաղաձայնային շրջապատը բարձրացնում է ձայնավորի ուժգնությունը: Դա բացատրվում է նրանով, որ ձայնեղներն իրենք ավելի մեծ ուժգնություն ունեն, քան խուլերը: Ձայնավորի ուժգնությունը մեծ է նաև շնչեղ խուլ բաղաձայնների հարևանությամբ, բայց չի գերազանցում ձայնեղների շրջապատում գտնվող ձայնավորի ուժգնությանը: Ձայնավորի ուժգնության ամենափոքր արժեքները գրանցվել են խուլ շրջապատում գտնվող ձայնավորների համար: Ի տարբերություն տևողության դեպքի, որտեղ ըստ նվազող տևողության ստացվել էր ձայնեղ – խուլ - շնչեղ խուլ շարքը, ուժգնության շարքում խուլի և շնչեղ խուլի տեղերը փոխվել են: Ձայնավորները ամենաուժգինն են ձայնեղ, պակաս ուժգին՝ շնչեղ խուլ, և ամենաթույլը՝ խուլ բաղաձայնների շրջապատում: Ըստ ձայնավորի նվազող ուժգնության կարելի է տալ բաղաձայնական շրջապատների հետևյալ շարքը՝

ձայնեղ - շնչեղ խուլ - խուլ

Այն փաստը, որ շնչեղների հարևանությամբ ձայնավորների ուժգնությունն ավելին է, քան խուլերի հարևանությամբ, կարելի է բացատրել հենց բաղաձայնների շնչեղության և խլության հատկանիշների ազդեցությամբ. թափով դուրս եկող շունչը կարծես ուժ է տալիս ձայնավորին՝ միանալով վերջինիս ուժգնությանը, իսկ խլությունը սահմանափակում է ձայնավորի ուժգնությունը:

Ուժգնության պարագայում ևս ուսումնասիրել ենք հայերենի բաց *ա* և փակ *ա* ձայնավորների ուժգնության կրած փոփոխությունները ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ շրջապատներում: Նշված օրինաչափությունը գործում է երկու ձայնավորների պարագայում թե՛ շեշտակիր, թե՛ անշեշտ ձայնավորների համար:

Ключевые слова: гласные, согласные, звуковые сочетания, звонкость-глухость-аспирация, звуковое окружение, длительность, интенсивность.

Г. Г. Григорян - Влияние согласного звука на гласный в сочетаниях согласный-гласный (экспериментальное исследование). - В процессе общения человеческие звуки произносятся не по отдельности, а в звуковых сочетаниях, где составляющие звуки находятся в тесной взаимосвязи и взаимодействии. На акустическом уровне наличие/отсутствие голоса в согласном имеет большое значение для акустических характеристик гласных: длительности и интенсивности. Длительность и интенсивность гласных в окружении звонких согласных больше и интенсивнее, чем в окружении глухих.

Keywords: vowels, consonants, sound combinations, sonority-deafness-aspiration, sound environment, duration, intensity.

G. G. Grigoryan - The influence of consonant on vowel in the consonant- vowel combinations (experimental research). - During communication process the human sounds are pronounced not separately but in sound combinations where the component sounds are in close interrelation and interaction. In acoustical level the presence/absence of a voice in consonant has a great significance for acoustical characteristics of vowels: duration and intensity. Around sonant consonants the duration and intensity of vowels are longer and intensive than in voiceless environment.

**ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՁ**

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գ. Թեյյան

Բանալի բառեր: Շարահյուսական կապակցություն, համաձայնություն, խնդրառություն, առդրություն, հարաբերակցություն, ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, կապ, կապվող բառ:

Ներածական դիտողություններ: Կապակցությունը որպես լեզվաբանական իրակություն հատուկ է բաղադրվելու հատկությամբ օժտված բոլոր միավորներին՝ հնչյուններ, ձևույթներ, բառեր, նախադասության, բառակապակցության ու դարձվածքների անդամներ, նախադասություններ՝ որպես դրանց «գծային հաջորդականության, շարակարգային հարաբերակցության, իմաստային (իմաստային-կառուցվածքային) փոխհարաբերակցության արտահայտություն...»¹: Շարահյուսական մակարդակում կապակցությունը բառերի (լայն առումով՝ բառակապակցության ու նախադասության անդամների), նախադասությունների (բարդ նախադասության կազմիչների) բաղադրման ու հարաբերակցման դրսևորումների ամբողջությունն է:

Շարահյուսության ոլորտում գործառող միավորների կապակցելիական հնարավորություններն ու դրանց կապակցման օրինաչափությունները փոխալսմանավորված են այդ միավորների իմաստային, քերականական ու կառուցվածքային բնութագրիչներով, ուստի և դրանց ամբողջական քննությունը շարահյուսության հիմնական առարկան է. շարահյուսությունը բառի բուն իմաստով ուսմունք է կապակցության մասին: «Կառուցել նախադասությունը նշանակում է կյանք ներարկել բառերի ամորֆ զանգվածին՝ հաստատելով դրանց միջև շարահյուսական կապերի համակցություն,

¹ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 295:

և հակառակը, հասկանալ նախադասությունը նշանակում է քեզ համար պարզել այդ կապերի համակցությունը, որոնք միավորում են նրա մեջ մտնող բառերը »²:

Բնականաբար, արդի հայերենի շարահյուսական ավանդույթի մեջ նույնպես կարևոր տեղ են զբաղեցնում կապակցության եղանակների ու միջոցների, դրանց դրսևորումների ու փոխառնչությունների հարցերը: Եվ որոշ առումով բնական է նաև, որ շարահյուսության դասագրքերում, ձեռնարկներում, զանազան աշխատություններում շարահյուսական որոշ իրողությունների ու միավորների տարբեր մեկնաբանություններն ու գնահատումները տարբերություններ են ծնում նաև կապակցության եղանակների ու միջոցների ընդգրկման սահմանների և գործողության ոլորտների գնահատման հարցերում:

Այդ տարբերությունները որպես կանոն պայմանավորված են լինում քննության տարբեր հայեցակարգերով, ուսումնասիրողների տեսական տարբեր, երբեմն էլ անհրաժեշտ չափով չհիմնավորված պատկերացումներով, իսկ սրանք հաճախ բավարար հստակությամբ չեն լուսաբանվում վերը նշված աշխատանքներում: Ստորև ներկայացվող դիտարկումները փորձ են անդրադառնալու հենց այդ կարգի շարահյուսական մի քանի իրողությունների:

Շարահյուսագիտության, նաև հայ շարահյուսագիտության մեջ ավանդաբար առանձնացնում են կապակցության չորս կարգի դրսևորում (որ նշանակում է կապակցության ուսումնասիրության չորս հայեցակետ)՝ կապակցության տեսակ (համադասական, ստորադասական, ստորոգումային), կապակցության բնույթ (ենթակայական, ստորոգելիական, որոշային կամ վերադրային, խնդրային, պարագայական), կապակցության եղանակ (համաձայնություն, խնդրառություն կամ կառավարում, առդրություն), կապակցության միջոցներ (քերականական ձևեր, հարաբերիչ բառեր, շարադասու-

² *Л. Теньер, Основы структурного синтаксиса, М., 1988, с. 23.*

թյուն և հնչերանգ)³: Առայժմ մի կողմ թողնելով կապակցության միջոցները՝ փորձենք անդրադառնալ տարբեր տեսակի և բնույթի կապակցությունների և դրանց իրացմանը ծառայող կապակցության եղանակների հարաբերակցությանը:

1. Համաձայնություն: Ժամանակակից հայերենի քերականական աշխատություններում ընդունված է, որ համաձայնության եղանակով կապակցվում են ենթական ու ստորոգյալը և բացահայտիչն ու բացահայտյալը («կախում» պայմանական տերմինով անվանվող հարաբերության մասին խոսք կլինի ստորև): Ընդամիս լեզվաբանական գրականության մեջ համաձայնությունը համարվում է ստորադասական կապի եղանակ: Ռուսաց լեզվի քերականության հեղինակները համաձայնությունը սահմանում են հետևյալ կերպ. «Համաձայնությունը ստորադասական կապակցություն է, որն արտահայտվում է ստորադաս բառերի ձևերի նմանեցմամբ (уподоблении) գերադաս բառի ձևերին՝ սեռով, թվով և հոլովով կամ հոլովով և թվով կամ էլ միայն հոլովով և արտահայտում է բուն որոշչային հարաբերություններ՝ новый дом, кто – то чужой, дом – башня, ясли – новостройка»⁴:

Պետք է նկատել, որ ենթակայի և ստորոգյալի կապը ռուսագիտության մեջ կա՛մ համաձայնություն չի համարվում, կա՛մ այդպիսին է դիտվում վերապահությամբ: «Երբեմն որպես համաձայնություն է որակվում (ռուսերենում և այլ լեզուներում) երկկազմ նախադասության գլխավոր անդամների ձևային նմանեցումը: Մակայն համաձայնության հետ նույնացնելն այստեղ օրինաչափ չէ. քանի որ ենթակայի և ստորոգյալի կապը ստորադասական չէ, այդպիսի կապակցությունը կոչվում է համապատասխանեցում (координация)»⁵:

Հայերենագիտության մեջ համաձայնության՝ որպես կապակցության եղանակի գործողության ոլորտի հստակեցումը անմիջա-

³ Հմմտ., օրինակ, *Հ. Ա. Հարությունյան*, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջք 50-61:

⁴ Русская грамматика, М., 1980, с. 20:

⁵ Лингвистический энциклопедический словарь, М., 1990, с. 479.

բար պայմանավորված է ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի կապակցության տեսակի գնահատումով: Երկու դեպքում էլ առկա են տարբերումներ: Նախ մի փոքր հանգամանորեն՝ ենթակայի և ստորոգյալի կապակցության մեկնաբանությունների մասին:

Թեև շարահյուսության բոլոր գործող դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում երկկազմ նախադասության կառուցվածքը ներկայացվում է որպես կառուցվածքային երկու կենտրոնների, այլ կերպ ասած՝ երկու հավասարաթեք գլխավոր անդամների և դրանց շուրջը համախմբված լրացական անդամների կապակցություն, այնուամենայնիվ այս պատկերացումը մեր շարահյուսագիտության մեջ միակ ընդունվածը չէ:

Հանրահայտ է Մ. Աբեղյանի տեսությունը, որի համաձայն՝ նախադասություն կամ խոսք կազմում են դիմավոր բայերը, իսկ մյուս անդամները (կամ խոսքի մասերը), ներառյալ ենթական, դիմավոր բայի լրացումներ են, այսինքն՝ գտնվում են նրա կառավարման տիրույթում: Մ. Աբեղյանի համակարգում կախման կամ ստորադասության հարաբերությունը ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի հարաբերության դեպքում անվանվում է ներունակություն, և սա էլ, կարծում ենք, հետագայում հիմք է դառնում Աբեղյանին վերագրելու ենթակայի ոչ լրացական՝ գլխավոր անդամ համարելու տեսակետ, որն այնուամենայնիվ քերականական հայեցակետով այնքան էլ համոզիչ չի թվում: Այս առումով բավական հատկանշական են 1988 թ. «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում տպագրված՝ Ռ. Իշխանյանի և Է. Աղայանի բանավիճային հոդվածները, որոնցում հեղինակները, երկուսն էլ հիմնվելով Աբեղյանի շարահյուսական ուսմունքի վրա, հանգում են նախադասության կառուցվածքի վերլուծության հակադիր պատկերացումների: Ռ. Իշխանյանը փորձում է հիմնավորել, որ Աբեղյանի տեսության մեջ նախադասությունը ներկայացվում է որպես «միակենտրոն» միավոր՝ դիմավոր բայով արտահայտված միակ գլխավոր անդամով, մինչդեռ Է. Աղայանը նույն գրքից բերված քաղվածք-

ներից եզրակացնում է, որ «... նա (Աբեղյանը – Լ. Թ.) նախադասությունն ընդունում էր ո՛չ թե որպես միակենտրոն, այլ որպես երկկենտրոն և նույնիսկ եռակենտրոն համակարգ (ենթակա, ստորոգյալ և ստորոգում)»⁶:

Ընդունելով հանդերձ, որ ժամանակակից հայերենի քերականություններում (գոնե ուսումնակրթական ոլորտում) այժմ գերիշխողը ենթակայի և ստորոգյալի քերականական համարժեքության գաղափարն է, կարծում ենք նաև, որ հանիրավի անտեսվում կամ էլ հպանցիկ է ներկայացվում ենթակայի՝ բայի քերականական լրացում համարելու տեսակետը, որ, սովորական լինելով ընդհանուր լեզվաբանության մեջ և այսօր մեզանում էլ բավական արձագանքներ ունենալով⁷, հիմնականում շարունակում է ընկալվել որպես անընդունելի ավանդախախտություն: Սա բացատրվում է, կարծում ենք, մեր շարահյուսագիտության մեջ տասնամյակներ շարունակ իմացաբանական-տրամաբանական սկզբունքի գերակայության հանգամանքով:

Խնդիրը, ինչպես արդեն նշել ենք, նախադասության՝ որպես լեզվական հաղորդակցության հիմնական միավորի ընկալման ելակետն է և դրանով պայմանավորված՝ վերլուծության սկզբունքը: Ստեղծումների այս կարգի տարբերությունը հստակորեն ներկայացվել է դեռևս Լ. Տենիերի կողմից: «Ավանդական քերականությունը,- գրում է նա,- հենվելով տրամաբանական սկզբունքների վրա, ձգտում է բացատրել նախադասության մեջ սուբյեկտի և պրեդիկատի տրամաբանական հակադրությունը. սուբյեկտն այն է, որի մասին ինչ-որ բան է հաղորդվում, պրեդիկատը՝ այն, ինչ որ հաղորդվում է սուբյեկտի մասին...: Այս պատկերացման մեջ պետք է տեսնել ոչ այլ բան, քան այն ժամանակների՝ Արիստոտելից մինչև Պոր Բոյալ, վերապրուկը, երբ ամբողջ քերականությունը հիմնված

⁶ Է. Բ. Աղայան, Նախադասության մասին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, հ. 1, էջ 62:

⁷ Տե՛ս, օրինակ, Չ. Բ. Առայն, Предмет и основные понятия структурального синтаксиса, Е., 1968: Դ. Գյուլգասյան, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե., 2016 և այլն:

էր տրամաբանության վրա»⁸: Նախադասության կառուցվածքային կենտրոնը, ըստ Տենիերի, բայական հանգույցն է, և ենթական մեկն է կառուցվածքային առումով բայից կախման մեջ գտնվող գործորդներից (ակտանտներից): Ենթական և ստորոգյալը կառուցվածքային համարժեք կենտրոններ համարելը, ըստ Տենիերի, «նշանակում է, որ նախադասության անդամներից մեկին տրվում է անհամաչափ կարևորություն, որը չի արդարացվում զուտ լեզվաբանական որևէ փաստարկով» (ընդգծումը՝ բնագրում – Լ. Թ.)⁹:

Մեր քերականագիտության մեջ ենթակայի և ստորոգյալի ըմբռնման և ընդհանրապես նախադասության տեսության հարցերում քննության հայեցակետի կարևորությունն ընդգծվում է մասնավորապես Գ. Ջահուկյանի կողմից: Նախադասության անդամների փոխհարաբերությունները քննելիս նա անհրաժեշտ է համարում տարբերել օբյեկտիվ և սուբյեկտիվ, այլ տերմինով՝ հաղորդային և հաղորդակցային մակարդակները: Առաջին դեպքում «բայ-ստորոգյալը օբյեկտիվորեն հանդես է գալիս որպես առարկաների հարաբերության դրսևորում, և քանի որ առարկաները տվյալ նախադասության մեջ հանդես են գալիս հենց տվյալ հարաբերությամբ, ուստի և բայ-ստորոգյալը դառնում է յուրատեսակ կենտրոն...: Երկրորդ դեպքում որպես նախադասության կենտրոն հանդես է գալիս այսպես կոչված ենթական՝ մտքի այն առարկան, որը խոստովի ուշադրության կենտրոնում է, և որին վերագրվում է որևէ հատկանիշ (լայն առումով) իբրև ստորոգյալ»¹⁰:

Այսպիսով՝ «...ենթական հաղորդակցային առումով կենտրոնական անդամ է, հաղորդային առումով՝ դիմավոր բայով արտահայտված հարաբերության կողմերից մեկը, այսինքն՝ բայական արժույթի մի դրսևորումը, հետևաբար դիմավոր բայի համեմատությամբ»

⁸ *Л. Теньер*, նշվ. աշխ., էջ 118:

⁹ Նույն տեղում, էջ 119-120:

¹⁰ *Գ. Բ. Ջահուկյան*, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 333:

յամբ լրացական անդամ»¹¹: Այսուհանդերձ, նախադասության կա-
դապարային բնութագիրը ներկայացնելիս Գ. Ջահուկյանը կարծես
թե միաժամանակ հաշվի է առնում այս երկու՝ օբյեկտիվ լեզվա-
կառուցվածքային և սուբյեկտիվ (հաղորդակցային) մակարդակները
և անհրաժեշտ է համարում միացնել «ենթակայի և ստորոգյալի
քննությունը՝ նկատի առնելով, որ նրանք իրար նկատմամբ գրա-
վում են երկակի դիրք, և չի կարելի մեկը համարել գլխավոր, մյուսը՝
լրացական անդամ»¹²:

Մտացվում է այնպես, որ ավանդական քերականություններ-
րում կապակցության ստորոգումային անվանվող տեսակը կա-
պակցման եղանակի առումով երկակի դրսևորում ունի. եթե հաշվի
ենք առնում ենթակայի և ստորոգյալի հարաբերության լեզվակա-
ռուցվածքային հայեցակետը, ապա ենթական պետք է համարվի
դիմավոր բայի կողմից քերականորեն կառավարվող անդամ, սա-
կայն դրանց միջև առկա կախման յուրահատուկ բնույթը (Աբեղյանի
կողմից «ներունակություն» կոչվող), որն արտահայտվում է դիմա-
թվային համապատասխանության ձևով, հատուկ է համաձայնու-
թյանը: Այս առումով ընդունելի պիտի համարել Հ. Հարությունյանի
այն եզրահանգումը, թե «Ենթակայի և ստորոգյալի կապակցու-
թյունը այլ բնույթի կապակցություններից տարբերվում է նրանով, որ
այստեղ միաժամանակ գործում են կապակցության երկու եղանակ՝
համաձայնություն և կառավարում (միայն հոլովական)»¹³:

Համաձայնության գործողության ոլորտում դիտարկվող մյուս
հարաբերությունը բացահայտիչ- բացահայտյալ կապն է, որի մեկ-
նաբանությունը ևս տարակարծությունների առիթ է տվել: Մանրա-
մասների մեջ չխորանալով՝ նշենք, որ որոշ քերականներ բացահայ-
տիչը նախադասության ինքնուրույն լրացական անդամ չեն համա-
րում կամ այդպիսին են համարում որոշակի վերապահումներով,
իսկ բացահայտչի և բացահայտյալի՝ միևնույն քերականական

¹¹ Նույն տեղում, էջ 340:

¹² Նույն տեղում:

¹³ Հ. Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 102:

հատկանիշներով օժտված լինելը դիտում են ոչ թե որպես համաձայնության, այլ նույն գերադասի կողմից թելադրված խնդրառական կապի դրսևորում¹⁴:

Համաձայնության եղանակով անխառն ստորադասական հարաբերություն, ինչպես և ընդունված է լեզվաբանական գրականության մեջ, արտահայտվում է հատկապես որոշային (լայն առումով՝ մականվանական) հարաբերությամբ կապված եզրերի միջև: Այս իրողությունը, ինչպես հայտնի է, գործում էր հին հայերենում (թեև զգալի շեղումներով) և բնորոշ չէ արդի հայերենին (որոշ կայուն կամ քարացած ձևեր կարելի է մատնանշել՝ *մեծավ մասամբ, մեծավ ուրախությամբ, միով բանիվ, մեծի տանն* և այլն): Մերօրյա քերականական աշխատանքներում գոյականի և նրա մականուն լրացումների (որոշչի և հատկացուցչի) կապակցությունը նույնպես միանշանակ չի գնահատվում:

Այս մասին խոսք կլինի ստորև, իսկ այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ ժամանակակից հայերենում որոշչի և որոշյալի կապակցության մի առանձնահատուկ դրսևորման, որը հետազոտողների կողմից սովորաբար ընդունվել է որպես համաձայնության մի տեսակ (Մ. Աբեղյան, Վ. Առաքելյան, Մ.Ասատրյան և այլք), Ռ. Իշխանյանի կողմից՝ առդրության մի դրսևորում, իսկ Արտաշես Սարգսյանը մեր կարծիքով բավական հիմնավորված առաջարկ է անում՝ առանձնացնել այն որպես կապակցության ինքնուրույն եղանակ¹⁵: Խոսքը վերաբերում է քերականական այնպիսի կապակցությանը, որի դեպքում իմաստակառուցվածքային որոշակի դասերի մեջ խմբավորվող որոշիչները կապակցվում են հոգնակի (բազմազան, մեծ-մեծ, հարյուրավոր, տասնյակ, բոլոր և այլն) կամ եզակի (ամեն, յուրաքանչյուր, ամեն մի, որևէ, ամբողջ և այլն) որոշյալների հետ: Կապակցման այս տեսակը մի կողմից իրապես առնչ-

¹⁴ Տե՛ս, օրինակ, *Ս. Ե. Խաչատրյան*, Բացահայտչի գնահատման շուրջը // «*Բանբեր Երևանի համալսարանի*», 1979, 1, էջ 125-135: *Ս. Վ. Գյուլբուդաղյան*, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 159-172:

¹⁵ *Ս. Սարգսյան*, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցման մի եղանակի մասին // «*Լեզու և լեզվաբանություն*», 2015, հ. 1-2, էջ 35-45:

վում է համաձայնությանը, քանի որ կապակցվող եզրերը ակներևաբար համապատասխանում են թվի քերականական կարգի շրջանակում, մյուս կողմից էլ առկա է կառավարման եղանակին բնորոշ՝ եզրերից մեկի թելադրանքով մյուսի որոշակի ձևավորում (տվյալ դեպքում՝ եզակի կամ հոգնակի թվով): Միայն թե այս դեպքում, ի տարբերություն կառավարման, թելադրող եզրը ոչ թե քերականորեն գերադասն է (որոշյալը), այլ ստորադասը (որոշիչը): Այնպես որ «կախում» անվանումը, որ, հետևելով Ռ. Իշխանյանի տերմինաբանությանը, կապակցման այս եղանակի համար առաջարկում է Ա. Սարգսյանը, պետք է հասկանալ «հակառակ նշանով»: Այս նկատառումով, կարծում ենք, արժե մտածել երևույթի առավել հաջող տերմինավորման մասին:

2. Խնդրառություն և առդրություն: Շարահյուսական կապակցության եղանակներից խնդրառությունը (կառավարումը) մեզանում կարծես թե ավելի մեծ ուշադրության է արժանացել այն համակողմանիորեն և բավականաչափ հիմնավոր կերպով ուսումնասիրվել է Հ. Հարությունյանի վերը հիշատակված աշխատության մեջ: Խնդիրը տեսական բավական լայն ընդգրկում ունի. մեզ հետաքրքրում են, սակայն, մի քանի մասնավոր հարցեր, որոնք առնչվում են խնդրառության և առդրության գործողության ոլորտների՝ արդի քերականական աշխատանքներում և դասագրքերում ներկայացված տարբեր պատկերացումներին:

Կարծում ենք, որ կապակցման խնդրառության եղանակի գործողության ոլորտը հանիրավի ընդարձակվում է, եթե նրանում դիտարկվում են գոյականով և կապային կառույցներով արտահայտվող բոլոր կարգի լրացումների հարաբերությունները գերադաս (լրացյալ) անդամի հետ: Մեզանում այսօր առավել տարածված այս մոտեցմամբ գոյականական անդամի լրացումներից հատկացուցչի և գոյականով արտահայտված որոշչի կապը գերադաս անդամի հետ բոլոր դեպքերում համարվում է խնդրառական (Մ. Ասատրյան, Ռ. Իշխանյան, Ս. Գյուլբուդաղյան և այլք): Որոշիչ-որոշյալ կապակցությունը առդրությանն է հատկացվում միայն ածականով, ածա-

կանական դերանվամբ, թվականով, դերբայով, մակբայով արտահայտված որոշիչների դեպքում, իսկ հատկացուցիչ-հատկացյալի առդրական կապն ընդհանրապես մերժվում է:

Մեզ թվում է, որ կապակցության եղանակներից մեկի՝ խնդրառության այս կարգի լայն մեկնաբանությունը արդարացված չէ և որոշակիորեն հակասում է հենց խնդրառության կամ կառավարման բուն գաղափարին: Դժվար է, օրինակ, կապակցական տարբերություն տեսնել *ոսկի մատանի* և *ոսկյա մատանի* բառակապակցությունների միջև:

Եթե խնդրառության էությունը լրացական անդամի՝ գերադասի իմաստային կամ քերականական հատկանիշներով թելադրված ձևավորումն է, ապա խնդրառական կապ կարող է առկա լինել միայն բայանուն կամ ընթացային իմաստ արտահայտող գոյականների և դրանց հոլովական կամ կապային լրացումների միջև, ինչպես՝ *խոնարհում հերոսներին, այցելություն ծնողներին, փախուստ իրականությունից, մահ թշնամուն, հավատ մարդու նկատմամբ* և այլն: Իմաստային այսպիսի սահմանափակում չունեցող լրացյալ գոյականի և դրա գոյական լրացման կապը, անկախ վերջինիս հոլովական կամ կապային արտահայտությունից, առդրական է, ինչպես՝ *ուսուցիչ Հակոբյան, ոսկի մատանի, քար սիրտ, պատի ժամացույց, բրդից վերարկու, ակով մատանի* և այլն: Հարցն այդպես է ներկայացնում նաև Հ. Հարությունյանը. «Այսպիսով, կառավարումն իբրև կապակցության եղանակ գործում է ենթակայական, ստորոգելիական, խնդրային և պարագայական բնույթի հարաբերություններում, կառավարում առկա չէ որոշչային բնույթի հարաբերություններում, և գոյականի հոլովաձևերով կամ կապով և հոլովաձևով արտահայտված որոշիչները լրացյալին կապվում են հոլովական կամ հոլովակապային առդրությամբ»¹⁶: Հարկ է ընդգծել, որ «որոշչային բնույթի» հարաբերություններն ընդգրկում են նաև հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը. հատկացուցիչը, ունենալով կայուն հոլովական ձևավորում (անհոդ տրական), թելադրված է լինում ոչ

¹⁶ Հ. Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 102:

թե գերադաս գոյականի քերականական կամ իմաստային հատկությամբ, այլ գոյականի ընդհանուր խոսքիմասային նշանակությամբ, և բոլոր գոյականները (նաև գոյականաբար գործածված բառերը) կարող են ստանալ հատկացուցիչ լրացում:

Վերջինս իր իմաստով հաճախ չի էլ տարբերակվում որոշից, և հնարավոր են լինում փոխադարձ փոխակերպումներ՝ *աշակերտի տետր - աշակերտական տետր, ամռան արև - ամառային արև* և այլն: Գ. Ջահուկյանը հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը համարում է գոյականական շարույթի տարասեռ կադապարի դրսևորում, «համամակարդակային միջկադապարման տիպական օրինակ..., որ հանդես է գալիս սովորական որոշիչ-որոշյալ կապակցության փոխարեն»¹⁷: Հիշենք, որ Մ. Աբեղյանի համակարգում ևս այդ լրացումները չեն տարբերակվում և կոչվում են ընդհանուր մականուն անվամբ:

Հատկացուցչի և հատկացյալի կապակցման եղանակը երկակի մեկնաբանության առարկա կարող է դառնալ այն դեպքում, երբ այդ կապակցությունը սերում է «անցողական բայ+տրական հոլովով լրացում» կադապարից, այսինքն հատկացյալը բայանուն գոյականների իմաստային խմբին է պատկանում, ինչպես՝ *շենքի կառուցում, գրքի ընթերցում, հարցի լուծում* և այլն: Այս կարգի կապակցությունները, ըստ Հ. Հարությունյանի, կարելի է վերլուծել տարբեր տեսանկյուններից. գուտ ձևային մոտեցումով (մակերեսային կառուցվածք) դրանց բաղադրիչների միջև առկա է որոշչային հարաբերություն, և կապակցության եղանակն էլ հոլովական առդրությունն է, մինչդեռ, խորքային կառուցվածքի հաշվառումով, «...անցողական բայերին համապատասխան բայանուն գոյականները իրենց իմաստի պահանջով ենթադրում են գոյականով լրացում և առնում են միայն այնպիսի գոյականներով արտահայտված լրացումներ, որոնք բնորոշ են նաև համապատասխան բայերին, այսինքն՝ առկա է բառերի իմաստների կապակցելիությամբ պայմանավորված սահ-

¹⁷ Գ. Բ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե. 2003, էջ 22:

մանափակություն»¹⁸, ուստի և կապակցության եղանակն այս դեպքում կարելի է համարել կառավարումը:

Այսպիսով, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է ընդունել, որ որոշչային (ներառյալ հատկացուցիչը) հարաբերությամբ կապված լրացում-լրացյալների կապակցության բնորոշ եղանակը առդրությունն է:

Վերադառնալով խնդրառության եղանակին՝ կարևոր ենք համարում անդրադառնալ դրա շրջանակում գործառող մեկ այլ՝ կապի և կապվող բառի (կապի խնդրի) կապակցության մեկնաբանություններին: Կապակցության եղանակի հարցն այստեղ կարծես թե առարկություններ չի հարուցում, սակայն լիակատար համաձայնություն չկա ստորադասական կապի ուղղվածության մեկնաբանության խնդրում: Գերիշխող տեսակետն այն է, որ կապային կապակցության գերադաս՝ կառավարող (խնդրառու) եզրը կապն է, իսկ կապվող բառը (կապի խնդիրը) ստորադաս եզրն է: Գ. Ջահուկյանն այս մասին գրում է. «Ընդհանուր առմամբ կապի խնդրի հոլովաձևը պայմանավորված է կապի խնդրառությամբ, կապի գործածությունը՝ նրա խնդրի՝ նախադասության մեջ ունեցած դերով կամ այլ բառերի խնդրառությամբ, այսինքն՝ խնդրի հոլովն այս դեպքում ունի ներքին, կապը՝ արտաքին պայմանավորվածություն»¹⁹: Հ. Հարությունյանի կարծիքով էլ «Կապվող բառի քերականական ձևը պայմանավորվում է կապի պահանջով, և գոյական+կապ վերլուծական շարահյուսությամբ կապը հանդես է գալիս որպես քերականորեն գերադաս բառ»²⁰:

Կապային լրացումների ձևավորման և կիրառության նման մեկնաբանությունը, կարծում ենք, առավել ընդունելի է, սակայն լեզվաբանության մեջ արտահայտվել է նաև այն տեսակետը, ըստ որի՝ նյութական իմաստից գուրկ խոսքի մասը՝ կապը, չի կարող քերականական գերիշխանություն ունենալ նյութական իմաստով

¹⁸ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 240:

¹⁹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 324:

²⁰ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 288:

օժտված խոսքի մասի նկատմամբ: Այս մոտեցումը մեզանում առավել հետևողանորեն ներկայացվել է Ս. Աբրահամյանի կողմից: «Այն հանգամանքը,-գրում է նա,-որ կապն առանց կապվող բառի չի գործածվում, և դրանք միշտ հանդես են գալիս միաժամանակ, ոչ թե կապի գերադաս լինելու և նրա խնդրատության ապացույց է, այլ ճիշտ հակառակը, կապի ստորադաս, սպասարկու դերի արտահայտություն է, պայմանավորված է այն բանով, որ կապը կարող է գործածվել միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է այս կամ այն բառի քերականական հարաբերությունն արտահայտել գերադաս անդամի (մեծ մասամբ ստորոգյալի, մասամբ այլ անդամների) նկատմամբ»²¹: Այս հիմնավորմամբ էլ նա փաստորեն մերժում է «կապի խնդրատություն», «կապի խնդիր» հասկացությունները (թեև որոշ վերապահությամբ ընդունում է «կապի հոլովատությունը»):

Այս դիտարկումներն, անշուշտ, կարելի է շարունակել: Մասնագիտական տարբեր մեկնաբանություններ ու գնահատումներ բնականորեն առկա են առհասարակ հայերենի շարահյուսական կառուցվածքի նկարագրության, մասնավորապես, ինչպես վերևում էլ փորձեցինք ներկայացնել, շարահյուսական միավորների կապակցական առանձնահատկությունների, դրանց կապակցման տեսակների, բնույթի ու եղանակների փոխառնչությունների հարցերում, և դրանց լուսաբանումը, կարծում ենք, օգտակար կարող է լինել և՛ գիտական, և՛ հատկապես ուսումնամեթոդական նկատառումներով:

Եզրակացություններ: 1. Արդի հայերենի շարահյուսությանը նվիրված մասնագիտական գրականության մեջ շարահյուսական կապակցության եղանակների (համաձայնություն, խնդրատություն,

²¹ Ս. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 343:

առդրություն, «կախում») հարաբերակցության, այսինքն՝ դրանց գործողության ոլորտների բաշխվածության հարցը միասնական մեկնաբանության չի արժանացել: Դա պայմանավորված է կապակցվող միավորների բնույթի, դրանց միջև առկա քերականական հարաբերության տարբեր գնահատումներով:

2. Սույն հոդվածը այդ կարգի մի քանի կապակցությունների (ենթակա-ստորոգյալ, բացահայտիչ-բացահայտյալ, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, կապ-կապվող բառ) կապակցման եղանակների մեկնաբանության տարբերությունները ներկայացնելու և դրանք մասնագիտորեն գնահատելու մի փորձ է:

Ключевые слова: синтаксическая связь, согласование, управление, примыкание, соотношения, подлежащее, сказуемое, определение, предлог /послелог /.

Л. Г. Телян - К вопросу о соотношении синтаксических единиц и видов синтаксической связи. - В специальной литературе, посвященной синтаксису современного армянского языка, нет единого подхода к интерпретации вопроса соотношений видов синтаксической связи / согласование, управление, примыкание, «зависимость»/, т. е. распределения сфер их действия. Это обусловлено разными оценками характера соединяющихся единиц и особенностей их синтаксической связи.

Настоящая статья – опыт представления различий в интерпретации нескольких таких конструкций / подлежащее-сказуемое, определение-определяемое, предложно – послеложная конструкция/.

Keywords: syntactic connection, agreement, control, adjacency, relations, subject, predicate, definition, preposition/afterword.

L. G. Telyan - To the question of the relation between syntactic units and types of syntactic connection. - In the special literature devoted to the syntax of the modern Armenian language, there is no unified approach to the interpretation of the issue of the ratio of the types of syntactic connection (agreement, control, adjacency, "dependence"), i.e. the distribution of their spheres of action. This is due to different assessments of the nature of the connecting units and the peculiarities of their syntactic connection.

The present article is an experience in presenting the differences in the interpretation of several such constructions (subject-proposal, definitional-definitive, prepositional-postpositional construction).

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ. СООБЩЕНИЯ. REPORTS.

ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Վ. Պապիկյան

Հիմնարարներ: Հատկական փոխառություններ, առարկայաթեմատիկ խումբ, բառիմաստի փոփոխություն, իրանական լեզուներ, իմաստափոխություն, պատմաբան, իրույթ:

Հայտնի է, որ փոխառությունները հետևանք են ժողովուրդների միջև տարբեր՝ հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ փոխհարաբերությունների: Ինչպես ժողովուրդները, այնպես էլ լեզուները փոխադարձաբար ազդում են միմյանց վրա: Հատկապես շատ են լինում փոխառությունները, երբ մի ժողովուրդ գտնվում է մյուսի քաղաքական տիրապետության տակ: Նոր, անծանոթ հասկացության համար բառը փոխառվում է՝ մինչև սեփական միջոցներով տվյալ բառի համարժեքի ստեղծումը: Հաճախ էլ բառն արմատանում է փոխառու լեզվում և նույնիսկ համարժեք ստեղծվելու դեպքում էլ շարունակում է իր գոյությունը, քանի որ գործում է սովորության ուժը, բարեհունչ լինելը, ոճականորեն չեզոք լինելը: Հաճախ փոխառյալ բառը և հայերենում ստեղծված համարժեքը կարող են գործածվել զուգահեռաբար՝ մինչև դրանցից որևէ մեկի հաղթանակը:

Փոխառությունների մեջ առանձնանում է մի խումբ, որն անվանվում է հատկական փոխառություններ (էկզոտիզմներ), այլև տարաշխարհիկ բառեր, օտար բառեր)¹: Սրանք ցույց են տալիս այս

¹ Այս տերմինը շրջանառության մեջ է դրել Էդ. Աղայանը: Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 169: Կարծում ենք՝ բառը պատճառաբանված է և լիովին բացահայտում է հիմքում ընկած հասկացությունը, այն է՝ որևէ մեկին, բանին հատուկ: Տե՛ս նաև Ֆ. Խղայան, Ժամանակա-

կամ այն ժողովրդին, երկրին հատուկ երևույթներ, իրեր՝ առնչվող պատմությանը, աշխարհագրությանը, սովորույթներին: Սովորաբար դրանք գործածվում են, երբ խոսքը վերաբերում է տվյալ ժողովրդին բնորոշ իրույթներին (ռեալիաներ): Հիմնականում հանդիպում են թարգմանական գրականության մեջ, մամուլում կամ տվյալ ժողովրդին առնչվող գործերում՝ պատմական երկ, դասագիրք և այլն: Ի տարբերություն սովորական փոխառությունների, որ փոխառու լեզուն վերցնում է այլ լեզվից՝ նոր առարկան, հասկացությունը արտահայտելու համար, հատկական փոխառությունները, արտացոլելով օտար երկրին, մշակույթին հատուկ երևույթ, հիմնականում անթարգմանելի են և չունեն հոմանիշներ: Դրանք պատկանում են բառապաշարի ոչ գործուն շերտին, դրանց միջոցով որոշակիորեն արտահայտվում են նաև հեղինակի հուզական-զգացական վերաբերմունքը տվյալ առարկայի, երևույթի նկատմամբ, ինչպես նաև պատմական ժամանակաշրջանի, միջավայրի, իրադարձության մասին պատկերացումները: Երբեմն հեղինակը կամ թարգմանիչը փակագծերում կամ տողատակում բացատրում է ընթերցողին անծանոթ բառը, հմմտ. «Եկավ կաշառված պրիստավը իր *յասավուլներով* (ոստիկան), հավաքեց ըմբոստներին, բարկացավ, ոտները գետին զարկեց և քաշեց նրանց մտրակի տակ» (*Ավ. Բասհակյան*, «Համբերանքի չիբուխը»), կամ՝ «Անկյունում *բաշլուղն* է մարդասպանի, Մտրակն ու թամբը և սև *յափունջին*»²:

Հատկական փոխառությունները կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, առարկայական-թեմատիկ խմբե-

կից հայոց լեզու, Ե., 2009, էջ 193: *Նույնի*՝ Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., 1976, էջ 104:

² Տե՛ս *Մ. Լերմոնտով*, Իզմայիլ բեյ // «*Երկերի ժողովածու*», հ. 1., 1965, էջ 355 (ռուս. թարգմ.՝ Մ. Խերանյանի): *Բաշլրղ / բաշլուղ* «հաստ կտորից գլխի ծածկոց՝ վեղարի նման, սուր, երկար ծայրերով կամ ականջներով, որով կարելի է փաթաթել գլուխը և ծայրերը փաթաթել վզին», *յափնջի / յափունջի՝ այծենակաճ* «1. այծամազից պատրաստված կաճ՝ թաղիք, 2. թաղիքից պատրաստված հագուստ»:

րի, բառիմաստի փոփոխության, հաճախականության, ժամանակային հատկանիշի և այլն:

Մույն հոդվածում մեր նպատակն է դիտարկել իրանական ծագման որոշ հատկական փոխառություններ՝ դասակարգելով դրանք և փորձելով ցույց տալ դրանց պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները:

Ինչպես հայտնի է, հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից: Տևական ժամանակաշրջանում հարևանությունը, մշակութային, առևտրական և քաղաքական սերտ առնչությունները ունեցել են իրենց ազդեցությունը լեզվի վրա: Հայերենի 1400-ից ավելի իրանական փոխառությունները, որ կատարվել են և՛ գրավոր, և՛ բանավոր ճանապարհով, վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին՝ բնություն, գույներ, երկրագործություն, գիտություն, արվեստ, վաճառականություն և այլն: Հատկապես շատ են միջին պարսկերենից (մ.թ.ա. 4-րդ դարից մինչև մ.թ. 10-րդ դ.) կատարված փոխառությունները:

Տարբեր աղբյուրներից՝ բառարաններից, մամուլից, գրականությունից, հեռուստատեղից մեր հավաքած իրանական ծագման հատկական փոխառությունները հնարավորություն են տվել դրանք դասակարգելու հետևյալ խմբերում³:

1. Պետական-կառավարման մարմիններ. *բդեշխ* պարսկ. bitaxš. «1.պատմ. հին Հայաստանում՝ 4 մեծ նախարարությունների պետեր սահմանազուխների վրա, որոնք բոլոր նախարարներից ավագ էին և ավելի անկախ (Աղձնյաց, Գուգարաց, Նորշիրական, Վրաց, 2. հյուպատոս», *միրզա* պրսկ. mirzā, mirzāde՝ «1. իշխանածին, թագավորագն, 2. ազնվական, 3. հարգական տիտղոս՝ կրթված մարդուն դիմելիս», *շահ*՝ պրսկ. šāh՝ «շահ՝ միապետի տիտղոս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, մասնավորապես՝ Իրանում», *սարդար*, պրսկ. sardār՝ «գորագլուխ»՝ «1.պարսկական զորքի զորավար, 2. պարսից շահի կողմից նշանակված կուսակալ Երևանի

³Հոդվածում բառերի բացատրությունները տրված են ըստ գրականության ցանկում ներկայացված բառարանների:

նահանգում պարսկական տիրապետության ժամանակ», *սեպուհ*, միջ. պրսկ. *vispuhr*, ավ. *vīsōpuθra*՝ «տան որդի»՝ «1. պատմ. հին Հայաստանում՝ նախարարական տոհմից սերած ազնվական», *վզուրկ / վզրուկ*, պրսկ. *buzurg*, միջ. պրսկ. *vuzurg* «մեծ», «*մեծ՝ պատվանուն* հին Պարսկաստանում⁴» (Միհրներսեհի տիտղոսը միջին պարսկերեն, որ թարգմանվել է հայերեն *մեծ՝ Միհրներսեհի մեծ հազարապետ*) (ՀՄԲ), *փադիշահ*, պրսկ. «պատմ. Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների միապետները և նրանց տրվող տիտղոսները», *ֆառաշ՝* պարսկ. *farraš*՝ «պալատի ստորին պաշտոնյա»⁵:

2. Հագուստ- զարդարանք. *չադրա*, պրսկ. *chador*՝ «հագուստ, որով տնից դուրս գալիս մահմեդական կանայք պարուրվում են ոտքից զուլխ՝ բաց թողնելով միայն աչքերը», *սուրմա*, պրսկ. *surme*, «ծարիր՝ աչքերը, հոնքերը ներկելու համար»⁶:

3. Զինվոր-զորք. *Ամիրսպասալար*, պրսկ. *Amīr sipāhsālār* «մեծ սպարապետ», *դուշման*. պրսկ. < միջ. պրսկ. *dušman* «թշնամի»՝ *մոջահեդ*: Այս բառը «թշնամի» իմաստին զուգահեռ ստացել է նոր՝ «հավատի զինվոր» իմաստը՝ կապված ռուս-աֆղանական պատերազմի հետ⁷, *շահիդ*⁸ պրսկ. բառացի՝ «վկա» (կրոն.) «մահմեդական-

⁴ «Միհրներսեհ *Վզուրկ* հրամատար Երան եւ Աներան Հայոց մեծաց ողջուն շատ...», Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 24 (քննական բնագիր Ե. Տեր-Մինայանի աշխատասիրությամբ): Պետք է նշել, որ *հրամատար*-ը *հրամանատար* բառի հնագույն ձևն է միջ. պարսկ. *framātār* բառից, որ հետագայում դարձել է *հրամանատար*՝ «հրաման տվող» իմաստով (ՀՄԲ): ՆՀԲ-ն *հրամատար* գլխաբառի բացատրությունը հղում է *հրամանատար*-ին (ՆՀԲ, 2, 133):

⁵ Օր.՝ «Էսքան մեծամեծ մարդիկ՝ խաներ, բեկեր, ադեք, *ֆառաշ*, մուլա, ախունդ, էս ի՞նչ են էստեղ կանգնել, հավաքվել...» (*Խ. Աբուլյան*, «Վերք Հայաստանի»):

⁶ Օր.՝ «Սև մետաքսե ամպերի նրբին ծվենների պես /գրկեց ամեն մի չադրա պայծառ մի լուսին...» (*Գ. Մարյան*, «Բալլադներ, պոեմներ»): «Արևակ» կորպորացիայի www.eanc.net /EANC/search /?interface_language=am-hg:

⁷ Խորհրդային շրջանում *դուշման* անվանում էին աֆղան մոջահեդ զինվորներին: («Արևակ» արևելահայերենի կորպորատում բառի ուղիղ ձևն ունի 113 համատեքստ, 63 տեքստ):

⁸ *Շահիդ, մոջահեդ* բառերի մասին տե՛ս *Ս. Պապիկյան*, Հատկական փոխառությունների քննություն // «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 2021, թիվ 11, էջ 316:

ների մոտ՝ հանուն Ալլահի իրեն գոհաբերելու ընդունակ անձ»։ Այժմ բառն ընկալվում է նաև որպես հայրենիքի ազատության նվիրյալ, նահատակ, մահապարտ⁹, *թալիբան*, տաջկ. tolib < պրսկ. taleb «ուսանող» < արաբ. taleb «փնտրող, հայցող»՝ «մահմեդական կրոնական դպրոցի՝ մեդրեսեի ուսանող»¹⁰, *մատյան*¹¹ (*մատեան գունդ*, *մատենիկ* գունդ՝ միայն այս կապակցության մեջ)՝ միջ. պրսկ. Mātyān «պատմ. Մասանյան Պարսկաստանում՝ ընտիր սպառազինված հեծելազոր՝ բաղկացած տասը հազար հեծյալներից»։ Անվանում էին նաև Անմահների գունդ. մահացած յուրաքանչյուր զինվորին փոխարինում էր նորը, այստեղից էլ՝ անվանումը (բառը դուրս է եկել գործածությունից, հանդիպում է հայ մատենագիրների երկերում՝ Եղիշե¹², Փ.Բուզանդ), *մոջահեդ*, modžahād՝ «հավատի զինվոր»։ Բառը ավելի ուշ առնչվում է ռուս-աֆղանական պատերազմի ժամանակ հավատի համար կովոդ աֆղանցի և ոչ աֆղանցի մահմեդականներին, որոնք գոհվում էին հանուն հավատի։ Այժմ ավելի շատ ընկալվում է «աֆղանական ընդդիմության զինվոր» իմաստով։ Կարելի է ասել, որ բառը վերաիմաստավորվել է. ունի սահմանափակ գործածություն և առավելապես հանդիպում է մամուլում։ Այս բառը որոշակի հոմանիշային հարաբերության մեջ է *դուշման* բառի հետ։

4. Կացարան – բնակավայր. *խանակա*, պրսկ. *խանե* «տուն», *գա* «վայր»՝ «Մերձավոր Արևելքում, Միջին Ասիայում՝ հյուրատուն՝ բաղկացած մզկիթից և խուցերից», *քարվանսարա*. պրսկ.

⁹ Օր.՝ «Համենայն դեպս կարելի է չկասկածել, թե ում դեմ կգործի իրանական «մահապարտների գումարտակը», որի կազմի մեջ ընդգրկված է ... հիսունվեց հազար իսլամական ռազմիկ, իսկ ավելի պարզ ասած՝ շահիդ» [«Ազգ» (շաբաթաթերթ), 2007. 03. 02]:

¹⁰ Մահմեդական կրոնական-քաղաքական շարժում, որ ձևավորել են ուսանողները XX դ. վերջում, XXI դ. գրավել է իշխանությունը Աֆղանստանում:

¹¹ *Մատյան* բառը հայերենում հանդես է գալիս եռանդամ համանունական շարքով՝ 1. *Գիրք*: 2. *Էզ ձի*, *մատակ*: 3. *Մատյան գունդ*՝ Մասանյան Պարսկաստանի հեծելազնդի անվանումը (ԱՀԲԲ):

¹² «...և այսպես *Մատյան գունդն* ամրացրեց ինչպես մի հզոր աշտարակ և կամ ինչպես մի անմատչելի բերդ...», Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե., 1971, էջ 111:

kārbānsaray «1. իջևան ճանապարհների վրա կամ քաղաքում, 2. ընդարձակ շինություն՝ ներսի բակով, խանութներով»:

5. Ընդհանուր բառեր. *գահնամակ*¹³, պարսկ. gahnāma «պատմ. Պաշտոնական գրություն, նախարարական գահերի օրինադրություն, նախարարների աստիճանացուցակ» (Ջահուկյան, ՀՄԲ), *շահսեյ-վախսեյ* «շահ Հուսեյն, վախ Հուսեյն» ողբից «1. շիա մահմեդականների մոլեռանդ ողբահանդես՝ նվիրված Հուսեյն (Հուսեյն) իմամի հիշատակին, 2. այդ տոնին ուղեկցող ձայնարկություն», *դերվիշ*, պրսկ. «*չբավոր, մուրացկան*» «1. մահմեդական թափառական կրոնավոր, 2. փխբ. անհասկացող, բթամիտ մարդ, 3. փխբ. թափառական մարդ» (ԱՀԲԲ), *նարգիլե*, պրսկ. nargile «արևելյան երկրներում՝ ծխելու սարք, որի մեջ ծուխը անցնում է ջրով լի խողովակով, մաքրվում, ապա երկար ծխափողով անցնում ծխողին»¹⁴, *նարդի /նարտի*, պրսկ. nard «սանսկրիտnard՝ «քվե, զառ» «1. զառերով և քարերով երկու հոգով խաղացվող խաղ, 2. այդ խաղի տախտակը, քարերը և զառերը»: Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում՝ *նարդի շիկացնել*, *նարդի տալ* (Ղրբ.)՝ *նարդի խաղալ*:

Սեգահ /Սեգյահ «արևելյան դասական մուղամ». «Արդեն սուլեցին գործարանները՝ մեկը զիլ և ուրախ, մյուսը խոպոտ, երրորդը՝ երկարածոր, ինչպես տխուր սեգյահ» (Ա. Բակունց, Մթնաձոր):

Եզրակացություններ:

Տարբեր աղբյուրներից մեր հավաքած իրանական ծագման հատկական փոխառությունները հնարավորություն են տալիս դրանք դասակարգելու տարբեր խմբերում՝ 1. պետական-կառավարման, 2. հագուստ-զարդարանք, 3. զինվոր-զորք, 4. կացարան-բնակավայր, 5. ընդհանուր բառեր:

¹³ Նույն տեղում, էջ 221-222: Ներկայացված է հայ նախարարական տների ցուցակը՝ գահնամակը, որը գրքի թարգմանիչ Ե. Տեր-Մինասյանը վերցրել է Ն. Ադոնցի «Արմենիա в эпоху Юстиниана» գրքից (СПб., 1908, с.249-250):

¹⁴ Հայերենի բարբառներում գործածական է *նարգիլե*-ին համարժեք *դայլան* (ղելյան) բառը (ՀԼԲԲ): Բառի համար որպես նախընտրելի ձև Էդ. Աղայանը նշում է *զլզակ*-ը (ԱՀԲԲ):

Քննությունից պարզվում է հետևյալը.

1. դրանց մի մասը պատմաբաներ են, որոնք պատմական զարգացման ընթացքում դուրս են եկել գործածությունից, սակայն պահպանված են գրականության մեջ, բառարաններում. գործածվում են ըստ անհրաժեշտության՝ *ամիրսպասալար, գահնամակ, բղեշխ, մատյան (մատեան, մատենիկ) գունդ, սարդար, վզուրկ/վզուրկ, փաղիշահ, ֆառաշ* և այլն,

2. կան միջնորդավորված փոխառություններ՝ *թալիբան,*

3. ենթարկվել են իմաստափոխության՝ *դերվիշ, դուշման, շահիդ, մոջահեդ* և այլն:

4. մի քանիսի գործածությունը սահմանափակ է՝ *խանակա, շախսեյ-վախսեյ, քարվանսարա* և այլն:

5. իրանական հին կրոնին՝ զրադաշտականությանը վերաբերող բառերը նույնպես հատկական փոխառություններ են՝ *աթաշ, բարսմունք, բոզպայիտ, գաթ, գոմեզ/գումեզ, դեն, դենիմագդեզ, կեշտ/քեշ. Համակդեն* և այլն¹⁵:

Գրականություն

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 (ԱՀԲԲ):

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

Աճառեան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951:

Եղիշեի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե. 1957 (քննական բնագիր՝ Ե. Տեր-Մինասյանի աշխատասիրությամբ):

Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012 (ՀԼԲԲ):

Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, Ե., 2011:

Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի , հհ. 1-2, Վենետիկ, 1837 (ՆՀԲ):

¹⁵ Իրանական ծագման կրոնական բնույթի հատկական փոխառություններին կանդրադառնանք առանձին հոդվածով:

Չահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, (ՀՄԲ):

Реформатский А. А., Введение в языковедение, М., 1967:

Словарь иностранных слов, М., 1949:

Словарь литературоведческих терминов, М., 1974:

Ожегов С. Словарь русского языка, М., 1970:

Ключевые слова: экзотизм, тематическая группа, иранские языки, изменение значения, историзм, реалии.

С. В. Папикян - Исследование экзотизмов иранского происхождения. -

В статье предпринята попытка классификации некоторых экзотизмов иранского происхождения. Это слова, характерные для чужих реалий, которые в большинстве своем непереводаемы. Материал, собранный из разных источников, разделен на следующие группы: 1. государственно-управленческие, 2. одежда-украшения, 3. военно-войсковые, места обитания-поселения, 4. общие слова. Исследование показало, что это в основном историзмы, некоторые из которых претерпели изменение значения, а некоторые имеют ограниченное употребление.

Keywords: Exotism, [thematic group](#), Iranian languages, change in meaning, historism, realia.

S. V. Papikyan- Examination of exotisms of Iranian origin.-

The article attempts to classify some exoticisms of Iranian origin. These are words typical for foreign realia, which are mostly untranslatable. The material collected from different sources is categorized into the following groups: 1. state-government, 2. clothing-ornament, 3. soldier-troop, lodging-dwelling, 4. common words. The examination reveals that they are mostly historicisms, some have undergone a change in meaning and some have limited usage.

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա.Ե. Պետրոսյան

Հիմնաբառեր: Հնդեվրոպական լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, խուռաուրարտական լեզուներ, հայ-ուրարտական համընկումներ, ծիսական տերմիններ, անձնանուններ¹:

1. Դրաւջ «կուռքի պատկեր, արձան»

Այս արմատից ունենք մի շարք բառեր՝ *դրաւջեալ* «քանդակեալ պատկեր, արձան կոոց», *դրաւջեմ* «տաշելով և քերելով քանդակել. առաւել՝ զարձանս կոոց», *դրաւջագործութիւն* «արձանագործություն»²: Հ. Աճառյանն այս բառը թողնում է չստուգաբանված, իսկ Գ. Ջահուկյանն այն նույնացնում է համահունչ *դրաւջ* «դրոշակի» հետ, այդ երկուսի համար կանխադրելով «դրոշ, դրոշակ. մի գորամաս. կոարձան, կուռք» իմաստները³: Այս արմատների նույնացումը խնդրահարույց է. «կուռքե դրոշից» մինչև «քանդակել» և «հեթանոսական աստծու արձան» նշանակությունների թռիչքը այնքան էլ հեշտ չէ պատկերացնել: Սրանց՝ տարբեր արմատներ լինելը կարող է վկայել նաև վրացական նյութը, հմմտ. վրաց. *դրոշի* «կուռք», որից տարբեր է այլ վերջավորությամբ *դրոշա* «դրոշակ» բառը (ըստ Աճառյանի՝ համեմատաբար ուշ փոխառություններ են հայերենից, հմմտ. հին *աւ-*ի փոխարեն *-n-* ձայնավորը)⁴:

Դրաւջ «դրոշակ» բառն իրանական ծագում ունի՝ հմմտ. ավեստ. *drafsā*, պահլավ. *drafs*, պրսկ. *dirafs* «դրոշակ», ապա և սանսկրիտ նույնիմաստ *drapša*, լիտվ. *drāpanos* «սպիտակեղեն»,

¹ Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Հ. Մարտիրոսյանին գրականության տրամադրման և խորհրդատվության համար:

² Գ. Աւետիքեան, *ԻՎ. Միրմէլեան, Մ. Աւգերեան*, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 645 (այսուհետև՝ ՆՀԲ):

³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 697 (այսուհետև՝ ՀԱԲ): Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 206-207:

⁴ ՀԱԲ, հ. Ա, էջ 698:

Ֆրանս. drap «կտավ» և drapeau «դրոշակ» ևն⁵: «Դրոշակ» իմաստով իրանական բառի փոխառությունն ուրարտերենում, ինչպես կտեսնենք, շատ կասկածելի է: Աճառյանը հիշում է, որ, ըստ մի կարծիքի, հնում դրոշակը ոչ թե կտորից է եղել, այլ մի ուրիշ բան՝ ասենք, ձողի վրա դրված քանդակ: Այո, այդպիսի «դրոշներ», որոնք հնագիտության մեջ կոչվում են գերմանական *շտանդարտ* տերմինով, մեզանում վկայված են նախաուրարտական ժամանակներից: Բայց, ինչպես ասվեց, *դրաշ*-ը ստուգաբանորեն կապված է իրանական լեզուների, ապա և նրանց մերձավոր ազգակից սանսկրիտի «դրոշակ», և այլ հնդեվրոպական լեզուներում էլ «կտավ» և «կտորից պատրաստված իր» նշանակությունների հետ, և չէր կարող հնում «արձան» իմաստն ունենալ, որից և հետագայում երկրորդաբար միայն զարգանար «կտորե դրոշակ» իմաստը:

Ուրարտական արձանագրություններում *diruši(e)* բառը հանդիպում է միայն երկրի աստվածներին և նրանց մատուցվող զոհաբերությունների կարգը ներկայացնող «Մեերի դռան» արձանագրության մեջ⁶: Ա. Մորդումանը, որը փոձել է հայերեն կարդալ ուրարտական արձանագրությունները, այն նույնացրել է հայ. *դրոշ*-ին՝ նկատի ունենալով բառի «կտորք, արձան» (գերմ. Götzenbild «կտորքի պատկեր») իմաստը⁷: Երբ արձանագրությունների լեզուն հայերեն լինելու տեսակետը մերժվեց, այս մեկնաբանությունը մոռացության տրվեց առաջատար ուրարտագետների կողմից, որոնք սկսեցին նոր, միանգամայն վարկածային իմաստներ փնտրել *diruši*-ի համար՝ «ծերություն / հասունություն» (Ֆ. Քյոնիգ), «կատարելություն» (Հ. Կարագյոզյան), «ողորմածություն» (Բ. Դյակոնով)⁸: Հ. Աճառյանը *դրոշ* «դրոշակ» բառի ստուգաբանության մեջ հիշում, բայց չի ընդու-

⁵ Նույն տեղում, էջ 697:

⁶ Տե՛ս, օրինակ *H.B. Арутюнян*, Корпус урартских клинообразных надписей, Е., 2001 с. 45, 46 (այսուհետև՝ КУКН),.

⁷ *A. Mordtmann*, Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend, Leipzig, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Bd. 26, 1872, S. 504.

⁸ *Ս.Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 93, ծան. 23:

նում նրա կապը ուրարտ. *diruši*-ի հետ (մինչդեռ Մորդոմանը, ինչպես տեսանք, նկատի է ունեցել դրոշի «կուռքի արձան» իմաստը): Իսկ Ս. Հմայակյանը, գրում է, որ, քանի որ հայտնի են ուրարտական դրոշների (իրականում՝ ձողի վրա հաստատված ինչ-որ քառանկյուն առարկաների, հավանաբար՝ շտանդարտների) պատկերներ, և որ Խալդի աստծու շտանդարտը հիշվում է Սարգոն II-ի արձանագրության մեջ, ուրեմն, Ուրարտում եղել է «Խալդի աստծու դրոշ» (դրոշակ իմաստով) հասկացությունը, որին էլ պիտի մատուցվեին հիշվող գոհաբերություններ⁹: Սեպագրում *f* և *o* հնչյունների համար նշաններ չկան, և նրանք հաղորդվել են, համապատասխանաբար, որպես *af* և *no*: Ըստ այդմ՝ իրանական *drafša*-ն, կամ նրանից ծագող հայ. **դրաւշա*-ն, սեպագրում կարող էին «տառադարձվել» որպես *dirapša / dirabša* (սեպագիր *ab* և *ap* նշանները համընկնում են), գուցե և *dirauša*, բայց ոչ *diruši* (հետո, պետք է բացատրվի, թե ինչ ճանապարհով պիտի իրանական *drafša*-ն հայտնվեր ուրարտերենում / գուցե հայերենի միջնորդությամբ¹⁰, և ինչո՞ւ բառի երկու *w* ձայնավորները պիտի դառնային *no / o* և ի): Նշենք նաև, որ Հմայակյանի մեկնաբանությունը ուրարտագիտության մեջ ընդունելություն չի գտել:

«Միերի դռան» արձանագրության մեջ հատուկ շարք են կազմում այլատեսակ «սրբությունները», որոնց, ինչպես աստվածներին, հատուկ գոհաբերություններ են արվել¹⁰: Դրանք հաճախ եռյակներ կազմում, օրինակ, երեք մեծ աստվածների «դարպասները» (սրանք պաշտամունքային հատուկ կառույց / տաճարներ են), նրանց գորքերը, կամ գերագույն Խալդի աստծու եռյակ հատկանիշներն ու ատրիբուտները: Սեպագիր *diruši*-ին հանդես է գալիս այդպիսի մի եռյակի կազմում. *Haldini iniriase*, *Haldini alsuise*, *Haldini diruši* «Խալդիի աստվածայնությունը, Խալդիի մեծությունը և Խալդիի *diruši*-ն» որոնցից յուրաքանչյուրին պետք է գոհաբերվի մեկ ցուլ և երկու խոյ: Կարծում ենք, որ խոսքն այստեղ վերաբերում է Խալդիի արձանին:

⁹ Նույն տեղում, էջ 28-29:

¹⁰ Նույն տեղում, էջ 24-32:

Խալդիին, թեև համարվել է անտեսանելի աստված, բայց ունեցել է պատկերներ¹¹: Ինչպես նշում է Ի. Դյակոնովը, հինարևելյան աստվածը, որպես օրենք ունենում էր միայն մեկ տուն՝ իր հարազատ քաղաքում: Խալդիի տունն էր նրա պաշտամունքի կենտրոն Մուծածիրը, որտեղ և նա, իհարկե, ունեցել է իր արձանը¹²: Եվ հավանաբար հենց այդ արձանի մասին է խոսում Ասորեստանի արքա Սարգոն Երկրորդը Խալդիի գլխավոր տաճարը կործանելու և նրա հսկայական հարստությունը ավարառելը նկարագրելիս՝ հիշելով ոչ միայն արքայի ընտանիքը, այլև «Խալդիային՝ նրա աստծուն և Բագմաշտուին» (նրա կնոջը), գերեվարելու մասին¹³: Եվ հավանաբար հենց այդ արձանն է հիշատակվել «Միերի դռան» արձանագրության մեջ որպես *Haldini diruši*:

Դրաւշ «կուռք, աստծու արձան» բառի համար դժվար է հայերեն ստուգաբանություն գտնել: Կարելի է ենթադրել, որ այն, վրաց. նույնիմաստ դրոշիի հետ, փոխառվել է ուրարտ. *diruši*-ից կամ այդ երեքն էլ ծագում են մեկ ընդհանուր աղբյուրից: Իհարկե, այստեղ որոշակի անհամապատասխանություն կա. ուրարտ. *diruši*-ն հայերենում կարող էր տալ *դրոշ*, և ոչ *դրաւշ*, ուստի, պետք է կարծել, որ **դրոշ* «կուռքը» հետագայում է բաղարկվել և ձևափոխվել *դրաւշ* «դրոշակ» բառի ազդեցությամբ¹⁴:

¹¹ Ե. Գրեկյան, Ուրարտուի պետական դիցարանը // «Բիսինիլի-Ուրարտու. աստվածներ, տաճարներ, պաշտամունք», Ե., 2017, էջ 26: Ս. Պետրոսյան, Հայկական լեռնաշխարհի հնագույն դիցարանների մեծ աստվածները և նրանց վիպական ժառանգները // *Նույն տեղում*, էջ 177-179: Ի միջի այլոց, անդրաշխարհի հունական աստված Հադեսը, որի անունը ստուգաբանվում է ուղղակի որպես «Անտեսանելի», արվեստում ունեցել է արձան և պատկերագրություն (*R. S. Beekes, Etymological Dictionary of Greek, Leiden, Boston, 2010, p. 34*).

¹² Ի. Մ. Дьяконов, К вопросу о символе Халди // "Древний Восток", IV, Ереван, 1983, с. 191.

¹³ Ի. Մ. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту // "Вестник древней истории, 1951, 2, с. 333.

¹⁴ *Դրաւշ* «կուռք» բառը հանդիպում է Պլատոնի թարգմանության մեջ, որը թվագրվում է VI դարով (տե՛ս *Ս. Ս. Արևշատյան, Պլատոնի երկերի հայերեն թարգմանելու ժամանակը // «Բանբեր Մատենադարանի», 10, 1971, 7-20*). այսինքն՝ մինչև հայերենում *am > o* անցումը (VII դ.):

Այդպես մտածելու հնարավորություն է տալիս երկու հանգամանք. 1. վրաց. *ղրոշի* «կուռք, աստծու արձան» բառը, որը կարող է դիտվել որպես ոչ թե փոխառություն հայերենից, այլ ընդհակառակը, ուրարտ. *diruši*-ի հին ձևը և 2. *ղրաւշ*-ի որոշակի համադրելիությունը *ղրոշմ* «նշան, կնիք» բառի հետ (հմմտ. հատկապես *ղրաւշեմ* «տաշելով և քերելով քանդակել», *ղրաւշուած* «քանդակ, փորված, քանդակում, փորագրություն» և համադրելի իմաստներով *ղրոշմեմ* «նշանագրել, արձանագրել, փորագրել»): Բառավերջի *ւ*-ի համար կարելի է հիշել խուռական *-me/-momi* ածանցը, որը շատ չի փոխում բառի իմաստը (հմմտ. օրինակ ուրարտ. *surra*, խուռ. *surame / suramm* «ստրուկ»)՝¹⁵: Ըստ այդմ՝ իրոք պետք կարծել, որ եղել է ծագումով խուռաուրարտական, *ղրոշմ*-ին ազգակից *ղրոշ* «արձան, կուռք» բառը, որը հետագայում, *ղրաւշ* «որոշակի» ազդեցությամբ ձևափոխվել է *ղրաւշ*-ի¹⁶:

2. *Կոթող* «հուշարձան, արձան, սյուն, բուրգ»

Արդեն ՆՀԲ-ն համեմատել է այս բառը վրաց. *godoli* «աշտարակի» բառի հետ¹⁷, իսկ Գ. Ա. Ղափանցյանը, համադրելով այդ երկուսը բաբելոնյան *kudurru* «արձանագիր սահմանաքար» բառի հետ, ավելացնում է՝ «ուրարտերենում կա անհասկանալի մի բառ՝ *quduša(ni)*, որը գուցե նույն նշանակությունն ունի»¹⁸:

Այս հարցականով առաջարկած ստուգաբանական կապը անհայտ իմաստով ուրարտերեն բառի հետ ներկայումս հնարավոր է ճշգրտել. ակկադ. *kudurru*-ները («սահման, սահմանագիծ») մի տեսակ քարե վավերագրեր էին, սահմանաքարեր, որոնց վրա արձանագրվում էին Բաբելոնի ենթակա իշխանավորներին տրվող հողային հատկացումները կասիտական արքայատոհմի դարաշրջա-

¹⁵ *М. Л. Хачикян*, Хурритский и урартский языки, Ереван 1985, с. 48.

¹⁶ Տե՛ս այս նույն թեմայով լույս տեսած մեր հոդվածը, որ այստեղ չի հիշատակում հեղինակը (*ծանոթ. խմբ.*):

¹⁷ ՆՀԲ, 1, էջ 1108:

¹⁸ *Г. А. Кананцян*, К происхождению грузинского национального имени kharthveli // “Историко-лингвистические работы”, II, Ереван, 1975, с. 57 (հոդվածն առաջին անգամ հրատարակվել է 1939 թ.). նույնը համառոտ տե՛ս և *Գ. Ա. Ղափանցյան*, Անտիպ գործեր, Ե., 2008, էջ 25:

նում (մ.թ.ա. XVI-XII դդ., այսինքն՝ Ուրարտուի ձևավորումից 3-7 դար առաջ): Իսկ ուրարտ. *qudulanu*-ն ներկայումս մեկնաբանվում է որպես «ինչ-որ կառույց», «(մեծ) տաճար»¹⁹: Բառավերջի *-ni*-ն ուրարտական վերջավորություն է, և բառի արմատն է *qudula*: Ուրարտ. սեպագիր *q*-ին հայերենում կանոնավոր կերպով համապատասխանում է *կ*-ն, *l*-ին՝ *ղ*-ն, իսկ *-ni*-ին՝ հիմնականում *ո*-ն (և միայն հազվադեպ՝ *ու*-ն)²⁰: Հաշվի առնելով հայերենում վերջին ձայնավորի անկումը, որը տեղի է ունեցել մ.թ. առաջին դարերում, ուրարտ. բառի առավել հավանական համապատասխանությունը հայերենում պիտի լիներ *կողող*: Ի միջի այլոց, վրաց. *qողოღი* «աշտարակ» բառը, որը միանգամայն համապատասխանում է *կողողի* «բուրգ» (որը հնում հենց «աշտարակ» է նշանակել)²¹ իմաստին, Աճառյանը հիշում է որպես փոխառություն հայերենից²²: Ն. Հարությունյանը նշում է, որ ուրարտ. բառը հատկապես պետք է նշանակեր «մեծ տաճար», այսինքն՝ նկատի է առնվում ուրարտական ճարտարապետության առանձնահատուկ *susi* տաճարները²³, որոնք նվիրված էին գերագույն աստված Խալդիին: Հատկանշական է, որ Մենուա արքայի մի երկլեզու արձանագրության մեջ ասուրերեն տեքստում ուրարտ. *susi*-ին որպես համարժեք հանդես է գալիս *isitu* «աշտարակ» բառը, որը բնորոշում է *susi* տաճարն իբրև «աշտարակ-տաճար»²⁴: Այս առանձնահատուկ «աշտարակ» իմաստը թույլ է տալիս հիշյալ երեք բառերը ծագամբ կապված համարել միմյանց հետ:

Սակայն, չնայած մոտ հնչողությանը և իմաստներին, նրանք որոշակիորեն տարբերվում են իրարից, որը որոշ պարզաբանումներ է պահանջում: Այս տարբերությունները հնարավոր է բացա-

¹⁹ КУКН, с. 459.

²⁰ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 430-431:

²¹ ՆՀԲ, էջ 514:

²² ՀԱԲ, հ. Բ, Ե, 1972, էջ 615: [Ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» (*ծանոթ. խմբագրի*):

²³ КУКН, с. 459. հմմտ. Ե. Գրեկյան, Պաշտամունքային կառույցները Բիայնիլի-Ուրարտում // «Բիայնիլի-Ուրարտու», էջ 87:

²⁴ Ե. Գրեկյան, նշվ. աշխ., էջ 93:

տրել՝ ենթադրելով, որ՝ 1) այդ երեքն էլ ի վերջո ծագում են մեկ աղբյուրից, միայն փոխառվել են տարբեր լեզուներից կամ բարբառներից, 2) խուռերենի և անատոլիական լեզուների բաղաձայնական համակարգերը տարբեր էին հայերենի և վրացերենի եռաստիճան համակարգերից և փոխառություններում կարող էին միարժեք չարտացոլվել²⁵, և 3) փոխառյալ բառը ձևաձվել՝ է բաղարկվելով նման հնչող մի բառի հետ: Հայերենի համար շատ հարմար է այդ առումով *կոթ* բառը, որն ունի նաև կոթողը շատ հիշեցնող *կոթղ* տարբերակը²⁶: Գ. Ջահուկյանն անհավանական է համարում *կոթ* բառի հնդեվրոպական ծագումը և կապը *կոթող*-ի հետ: Հ. Մարտիրոսյանը, հիշելով բարբառային *կոթող* «ցողունի կտրելուց հետո մնացած ստորին մասը» և *կոթողքով* «ուժեղ, հաղթանդամ, թիկնավետ (մարդ)»²⁷ գտնում է, որ այդ կապը միանգամայն հնարավոր է (անձնական հաղորդում)²⁸: Ինչևէ, Սյունիքից հայտնի է *Անգեղակոթ* տեղանունը, որտեղ *Անգեղ*-ը հնագույն հայոց մեծ աստծու անուն է, որը կերպարով և գործառույթներով համապատասխանել է ուրարտական Խալդիին²⁹: Այս տեղանվան նախնական հիմքը կարելի է պատկերացնել որպես **Անգեղակոթող* «Անգեղ աստծու տաճար», որն Անգեղի պաշտամունքի մոռացումից հետո վերաիմաստավորվել է որպես *Անգեղակոթ*. հմմտ. նույն շրջանի *Բոնակոթ* տեղանունը (որտեղ *կոթ*-ը միանգամայն հասկանալի է՝ «բռնելու կոթ»),

²⁵ Խուռական և ուրարտական բաղաձայնների վերաբերյալ տե՛ս *М.Л. Хачикян*, Указ. соч., с. 35-44. G. Wilhelm, Hurrian; Urartian, Ancient Languages of Asia Minor, Cambridge, 2008, 81-123: Պետք է հաշվի առնել նաև, որ հայ-ուրարտական համապատասխանություններում բաղաձայնները այնքան էլ ճշգրիտ չեն համապատասխանում իրար, տե՛ս *И. М. Дьяконов*, Материалы к фонетике урартского языка // “Вопросы грамматики и истории восточных языков, М., 1958, с. 27-52:

²⁶ ՀԱԲ, հ Ա, էջ 614:

²⁷ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 351:

²⁸ Այնուամենայնիվ, մտում է անհավանական՝ *-ող* բաղադրիչի և առհասարակ՝ իմաստային կապի նկատառումով (*ծանոթ. խմբ.*):

²⁹ А. Петросян, К реконструкции имени и образа одного великого бога в древнейшей армянской традиции // “Вопросы ономастики”, 1, 2019, с. 7-18: *Ս. Պետրոսյան*, Հայկական լեռնաշխարհի հնագույն դիցարանների մեծ աստվածները, էջ 169-183:

որի ազդեցությամբ կարող էր տեղի ունենալ այդ ձևափոխությունը³⁰:

3. Lubšusini (մի անձնանուն)

Այս բառը անձնանուն է, որ երեք անգամ հիշվում է Բաստամից (Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք, Իրանում) հայտնաբերված ուրարտական մի նամակում: Անձը ներկայացվում է որպես պաշտոնյա՝ ԼՄԷ.GAL «ամրոցի/պալատի մարդ»: Սա այդ անվան՝ Ն. Հարությունյանի կողմից ճշտված ընթերցումն է³¹: Տեքստերի առաջին հրատարակիչ Մ. Սավլինին այն ընթերցում էր որպես Lubšuiani:

Տիտ տարրը ուրարտական անվանաբանության մեջ հանդիպում է մի քանի անգամ: Բացի Lubšusini-ից, որպես անվան առաջին մաս՝ Šinuiardi դիցանվան և Šinalibi անձնանվան, իսկ որպես երկրորդ մաս՝ Diušini անձնանվան մեջ: Ուրարտ. ֆ-ի հայկական համապատասխանությունը միարժեք է. այն միշտ համապատասխանում է հայ. ծ-ին (հմմտ ուրարտ. ֆue – հայ. *ծով*, Aršania – *Արածանի*, Tuarašini – *Տուարածատափ*, Šuluqu – *Շղուկ*, Šupani – *Շոփք* և այլն): Եվ հիշյալ անունների ստուգաբանության բոլոր փորձերում էլ ուրարտ. ֆիտ-ը համադրվել է հայ. *ծին*- «ծնունդ, ծագում. ծնել, սերել» արմատի հետ (հնդեվրոպական *ǵenH₁-)³²:

³⁰ Այս անվան մեկ այլ մեկնաբանություն տե՛ս նույն տեղում, էջ 173:

³¹ *Н. В. Арутюнян, Новые данные в урартских письмах из Бастама // Древний Восток, 5, с. 85-86, նաև КУКН, с. 485.*

³² Գ. Բ. Ջահուկյանը Šinuiardi դիցանունը ստուգաբանում է հայ. *ծին-ն*- (հե. *ǵ'enH₁ *ǵ'enos- ածանցյալից) + հայ. *արդ*- «ձև, կարգ», կամ ուրարտ. «ուժ, իշխանություն» («աստված/աստվածուհի»³). Գ. Բ. Ջահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում // «Պատմա-բանասիրական հանդես» 1, 1986, էջ 50: *Նույնի*, Հայերենը և ուրարտերենը // Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, էջ 151: Šinalibi-ի երկրորդ մասը կարող էր լինել անուն կամ նշանակել մի լավ, դրական բան (օր.՝ հե. *h₂elbho- «սպիտակ», *h₂elbhi- «գարի»), հմմտ. հուն. նույնարմատ gen-ով սկսվող մի շարք այլ անուններ. Gennadios, Geneas, Genithios, Geneidas, Genthios, Genippos, Geneia, Gennaios, Gennidasևն (*P. Fraser, E. Mattheus* (ed.), *A lexicon of Greek personal names*, Vol. IIIB, Oxford, 2000, p.90-91). տե՛ս *Ս. Պետրոսյան*, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Ե., 2017, էջ 192:

Lubšušini-ի ստուգաբանության համար առավել կարևոր է Էթիունի ցեղային համադաշնության արքա Diušini-ի անունը: Ըստ մեր վարկածի՝ հենց Էթիունին է եղել հայոց օրրանը՝ «նախնական Հայաստանը» մ.թ.ա. II-ի հազարամյակներում³³, և այդ արքայի անունն էլ կառուցվածքով և իմաստով համապատասխանում է հնդեվրոպական («երկնքի») աստված + *ճին*՝ անվանաբանական կաղապարին՝ հմմտ. հուն. Diogenēs, Theogenēs, թրակ. (հունական և լատինական աղբյուրներում ավանդված) Diuzeni, Diuzenus, ապա և՛ հինդ. deva-jana՝ «աստվածների տոհմ», devaja՝ «աստծուց ծնված», որը ցույց է տալիս այդ կաղապարի նաև հնդիրանական կապերը³⁴:

Հիշյալ ձևերի մեծ մասի առաջին բաղադրիչն է *dieu- («լուսավոր») երկինք, օր/ցերեկ» նշանակող արմատը, որի հայերեն ժառանգն է *տիւ* «ցերեկ, օրվա լուսավոր մասը» բառը: Այս արմատից է

³³ *Ս. Պետրոսյան*, նշվ. աշխ., էջ 181-199:

³⁴ *Դիուճինի*-ի այս ստուգաբանությունը տե՛ս *Ս. Պետրոսյան*, Նախահայերենի կրողների տեղայնացման հարցի շուրջը // «Երիտասարդ լեզվաբանների 4-րդ կոնֆերանս. զեկուցումների դրույթներ», Ե., 1984, էջ 33: *Նույնի*՝ Հայ ժողովրդի ծագման խնդիրը, էջ 131: Հուն. Դիոգենեսը երբեմն համադրում են հին կելտական Divogenos անվան հետ, բայց դա սովորաբար մերժվում է (այդ անվան վերաբերյալ տե՛ս J. MacCulloch, The Religion of the Ancient Celts, Auckland, 2009, p. 450): Քանի որ հայոց ծագումը սովորաբար կապվել է լեռնաշխարհի արևմտյան տարածքների հետ, *Դիուճինի*, չնայած իր ակնհայտ հայկական տեսքին, զարմանալիորեն այլ ծագում է վերագրվել: Ըստ Գ. Ա. Ղափանցյանի՝ այդ անունը «կարծես թե» իրանական է (հմմտ. իրան. dēva «չար ոգի»), «թեև այն ավել շուտ մոտ է հայ. դիւ-ճին-ին» (Գ. Ա. Կապանյան, Историко-лингвистические работы, т. II, с. 77), իսկ Ս. Պետրոսյանը և Գ. Ջահուկյանն այն թրակյան են համարել (*Ս. Պետրոսյան*, Հին թրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, 8, էջ 32-33. Գ. Ջահուկյան, Ուրարտերենը և հայերենը, էջ 162): Սակայն իրանական չար ոգու հետ կապը անձնանվան համար համոզիչ չէ, իսկ ուրարտ. *š-*ն համապատասխանում է միայն հայ. *ժ-*ին՝ հնդեվրոպական քմայնացած *g'-*ի միայն հայկական արտացոլմանը, որը մատնանշում է անվան հայկական ծագումը: Հնդեվրոպական **g-*-ի թրակյան արտացոլումը այլ թրակյան բառերի ու անունների հունական և լատինական տառադարձություններում *ζ* և *z* է, հմմտ. թրակ. *aiz-* «այծ», *bzas* «բուծ, այծ», *arzas* «արծ-, սպիտակ» և հենց *zenis*, *zen*, **genh1-* արմատից): Եթե թրակյան հիշյալ անվան մեջ լինել *ժ* հնչյունը, ապա հունարենում և լատիներենում այն պետք է արտացոլվեր որպես *Diuserni*, *Diusernes*, այսինքն՝ *s-*ով, հմմտ., օրինակ, *Փոփ*-ի և *Արածանի*-ի հուն. *Sophēnē* և *Arsanias* ձևերը:

կազմվել և հնդեվրոպական լուսավոր երկնքի հայր աստծու անունը, հմմտ. հուն. Ζευς, սեռ. Dios (այս արմատը որոշ լեզուներում ուղղակի «աստված» նշանակությունն ունի): Եվ Դիոզենես հունարեն նշանակում է «Ջևսածին, Ջևսի ծնունդ», որի ստուգաբանական զուգահեռը հայերենում պիտի լիներ *Տիւ + ծին*: Ընդհանրապես, ուրարտ. Ժ-ի հայերեն համապատասխանությունը այնքան էլ միարժեք չէ. հմմտ. օրինակ Diauhi – Տայք համապատասխանությունը: Հունական մյուս բերված անունը՝ Theogenēs-ը նշանակում է «աստծուց ծնված», հմմտ. հուն. theos «աստված», որի հայերեն համապատասխանությունն է *դի* (հոգնակի՝ *դիք*, սեռ. *դից*, հնդեվրոպական *dhēis-ից) «աստված» բառը: Եվ հավանաբար հենց Թեոզենեսի հայկական զուգահեռն է Diosini-ն: Հունարենում կան նույն կաղապարով ստեղծված այլ անուններ, օրինակ, *Աթենոզենես*, *Հերմոզենես* (Աթենաս և Հերմես դիցանուններից), իսկ հայերենում՝ *ծին* վերջավորությամբ բազմաթիվ բարդություններ՝ *նսկեծին* (Անահիտ դիցուհու մակդիրն է), *արքայածին*, *ծիրանածին*. «սրանք նշանակում են «արքայի՝ արքայական ծիրանի կրող մարդու որդի», ապա՝ քրիստոնեական *աստվածածին* և այլն:

Մրանց համաբանությամբ Lubšusini-ն (սեպագիր Lu-ub-šu-si-ni) կարող է մեկնաբանվել որպես Lubšu + *ծին*: Ուրարտական սեպագրում *ni*-ով սովորաբար հաղորդվել է *o*, հազվադեպ՝ *ni* հնչյունը, իսկ *b*-ով՝ երբեմն հաղորդվել են *v* և *w* հնչյունները (հմմտ. Biaina – Վան և abili – *աւել*- համապատասխանությունները), իսկ բառավերջի *i*-ն հաղորդել է *u*-ն: Ըստ այդմ՝ անվան հնարավոր ընթերցումը կարող է լինել Lo-ow-so-ci-nə, հայ. Լո-օւ-սո-ծի-նը, այսինքն՝ այն կարող է ներկայացնել *լուսածին* բառի հին՝ *lousocin ձևի ուրարտական հաղորդումը: *Luju* բառը ծագում է հնդեվրոպական *louko-ից, *louso- > *լոյս*, սեռ. *լուսոյ* զարգացմամբ: Հենց հնագույն հայերեն louso-ի արտացոլումը պիտի լիներ ուրարտ. lu-ub-šu-ն: Այդպիսի հիմքերը, մտնելով բարդության մեջ, պահպանում են հիմքային -o- ձայնավորը, որը, ըստ Գ. Ջահուկյանի, հին հայերենում փոխարինվել է -u- հոդակապով: Սակայն բազում այդպիսի

բարդություններ վաղնջահայերենում *-ա*-ի փոխարեն *-օ*- են ունեցել, այդ թվում նաև *լոյս*-ով կազմված ձևերը՝ *լուսաբեր*, *լուսալի(ր)*, *լուսամուտ*, *լուսատու* (սրանց մեջ հիշվում է նաև հունարեն զուգահեռ ունեցող *այլածին* բառը = հուն. *allogenos*): Եվ միայն *ընդոծին* և *Ձորոփոր* ձևերում է պահպանվել *-օ*-ն (ընդ որում, *ընդածին* և *Ձորափոր* զուգահեռ ձևերով)³⁵:

Լուսածին բառը Հայկազյան բառարանում ներկայացվում է քրիստոնեական իմաստավորմամբ՝ «լույսի ծնող, սուրբ աստվածածին», սակայն արիաիկ նշանակությունը կարող էր լինել «լույսից ծնված» (հմմտ. *արքայածին*, *ծիրանածին*), և *Լուսածին* անունը կլիներ հնդեվրոպական **dieu-* + *ցեռի*-ի «լուսավոր երկնքից (և նրա աստծուց) ծնվածի» հուն. Դիոգենեսի հայկական զուգահեռի մի փոխակերպված տարբերակը («լույսի աստծու ծնունդ» > «լույսի ծնունդ»):

Ключевые слова: индоевропейское языкознание, история армянского языка, хуррито-урартские языки, армяно-урартские соответствия, ритуальные термины, личные имена.

А. Е. Петросян – Этимологии. - 1. Арм. *drawš* «статуя бога» сопоставляется с урарт. *diruši*, обозначающего, видимо, статую верховного бога Халди. 2. Арм. *ko'to* «монумент, башня» соответствует урарт. *qudula-ni* «храм, башня», которым обозначались специфические башенные храмы Халди. 3. Урартское личное имя *Lubšušini* этимологизируется как древнеарм. *Lusaci*n «светородный» / «рожденный светом».

Keywords: Indo-European linguistics, history of the Armenian language, Hurro-Urartian languages, Armeno-Urartian correspondences, ritual terms, personal names.

³⁵ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Ե., 1987, էջ 248, 360:

A. E. Petrosyan, Etymologies.- 1. Arm. drawš "statue of a god" is compared with Urt. diruši, apparently denoting the statue of the supreme god Haldi. 2. Arm. kot'oł "monument, tower" corresponds to Urt. qudula-ni "temple, tower", which denoted the specific tower temples of Haldi. 3. Urt. personal name Lubšušini is etymologized as Arm. lusacin "luminous" / "born of light".

Մերի Սարգսյան, Լեզվաբանության տեսության հարցեր, Երևան, «Տիր» հրատ., 2021, 166 էջ:

Սույն աշխատության մեջ քննության են առնվում լեզվի բնույթի, մակարդակների, նշանայնության, լեզու և խոսք, լեզու և մտածողություն, լեզու և հասարակություն փոխհարաբերությունների, լեզվաբանության կառուցվածքի, բաժինների, լեզվաբանական գիտակարգերի և մեթոդների առանցքային հարցեր, վերջում անդրադարձ է կատարվում նաև համացանցային լեզվին, որը համեմատաբար ուսումնասիրության նոր բնագավառ է:

«Առաջաբան»-ում հեղինակը ներկայացնում է աշխատանքի նպատակն ու կարևորությունը, հիշատակում առաջիններից մեկը լեզվաբանության տեսական հարցերով զբաղվող Վ. ֆոն Հումբոլդտի ներդրման, ժամանակակից լեզվաբանության վրա Ֆ. դր Սոսյուրի թողած մեծ ազդեցության և ի վերջո այս բնագավառում հայ մեծանուն լեզվաբան Գ. Ջահուկյանի վաստակի մասին:

Ըստ հեղինակի՝ աշխատությունը միտված է «Լեզվաբանության ներածություն» և «Լեզվաբանության հիմունքներ» դասընթացների հարցերի շրջանակն ընդլայնելուն: Եվ իրոք, աշխատանքում որոշ հարցեր ներկայացվում են նորովի, առավել համապարփակ, բարձրացվում են վիճահարույց խնդիրների կանոնակարգման և հստակեցման, լեզվաբանական մեթոդների զարգացման, մշակման և կիրառման հարցեր, մատնանշվում են լեզվաբանության արդիական խնդիրները, որոշ դեպքերում նախանշվում դրանց առանձնահատկություններն ու լուծման ուղիները:

Ակնհայտ է, որ աշխատանքում առավելապես ներկայացվում և պաշտպանվում են ակադ. Գ. Ջահուկյանի տեսակետներն ու մոտեցումները: Օրինակ, ի հեճուկս այն լեզվաբանների, որոնք լեզուն դիտարկում են որպես հարաբերությունների ինքնին գոյություն ունեցող սահմանափակ համակարգ, Գ. Ջահուկյանը համոզված է, որ լեզվի էությունը բացատրելու համար պետք է ելնել աշխարհի

նյութական ամբողջությունից՝ հարելով գործառական լեզվաբանությանը, որն առաջնային է համարում լեզվի հաղորդակցական գործառույթը: Այս առումով Մ. Մարգսյանը գրում է. «...միանգամայն համոզիչ է Ջահուկյանի փաստարկը, որ արտահայտության և բովանդակության պլանում միայն միավորների հակադրությամբ չի կարելի հասկանալ լեզվի բնույթը՝ առանց նկատի ունենալու նյութական աշխարհի իրերի հարաբերությունները»: Լեզու և խոսք հասկացությունների փոխհարաբերությունների բացահայտման առնչությամբ նույնպես ապավինում է Ջահուկյանի մոտեցմանը, որով վերանայվում է Մոսյորի ժամանակներից լեզվաբանության մեջ ընդհանրացած մոտեցումը: Ըստ Ջահուկյանի՝ լեզու հասկացությունը պետք է ըմբռնել հետևյալ երեք առումներով՝ մարդկային լեզու, խմբի լեզու և անհատի լեզու: Վերջինից էլ բխում է խոսքը: Լեզուն և խոսքը տարբերակվում են խոսքի անմիջականության, ապա և լեզվի ծավալայնության և խոսքի գծայնության հատկանիշներով: Նաև ասվում է, որ լեզուն հարաբերակից է գիտակցությանը, իսկ խոսքը՝ մտածողությանը: Սակայն միաժամանակ չի մոռացվում նաև այն, որ լեզվի և խոսքի ըմբռնման ջահուկյանական մոտեցումը մասնակիորեն իր զուգահեռն ունի Սմիռնիցկու ուսումնասիրություններում:

Այսպիսով, հեղինակը նախ ներկայացնում է աշխատանքի տիրույթում շոշափված լեզվաբանական առանցքային հարցերի վերաբերյալ նախնական պատկերացումներն ու դիտարկումները, ապա կատարում արդիական մոտեցումների վերլուծություն՝ հիմքում հատկապես ունենալով ջահուկյանական խիստ ուշագրավ և համոզիչ ըմբռնումները, տեղ-տեղ արտահայտելով իր դիրքորոշումը:

Լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցը պարզաբանելիս նշվում է, որ լեզվաբանության պատմության նորագույն շրջանում այն բազմակողմանի քննության է ենթարկվում մի նոր գիտակարգի՝ հոգելեզվաբանության մեջ: Քննության են առնվում մտածողության խոսքային և ոչ խոսքային տեսակները, պատկերա-

վոր, տեխնիկական և տրամաբանական մտածողության տիպերը: Դարձյալ ներկայացվում են ջահուկյանական մոտեցումները՝ համապատասխան գծապատկերով:

«Գիտության մեջ սովորույթի դերը», «Տերմինաբանական հակասությունները», «Անհիմն և կամայական եզրահանգումները», «Լեզվի տարբերակայնության անտեսումը», «Ընդհանուր և ոչ ընդհանուր լեզվաբանության խնդիրների տարբերակումը» վերնագրերի ներքո համապատասխան հարցերի քննությունը վկայում է լեզվաբանի շրջահայացության, նշված ոլորտի կարևորագույն հարցերը գիտակցելու, վերհանելու և առանձին դեպքերում իր մոտեցումներն առաջարկելու ունակության մասին:

Մ. Սարգսյանը իրավացիորեն նկատում է, որ լեզվաբանական ուսումնասիրություններում հաճախ չեն տարբերակվում որոշ տերմիններ՝ կիրառվելով որպես հոմանիշներ, ինչպես օրինակ՝ *միտք*, *մտածողություն* և *գիտակցություն*: Հստակ սահմանազատված չեն նաև *մեթոդ*, *մեթոդիկա* և *մեթոդաբանություն* հասկացությունների իմաստները: Ուստի և տվյալ հասկացությունները սահմանազատելու, հնարավորինս սպառիչ բնութագրություն տալու փորձ է կատարվում՝ մեծ մասամբ ելնելով ակադ. Գ. Ջահուկյանի մոտեցումներից:

Անդրադարձ է կատարվում ընդհանրական և մասնավոր մեթոդներին: Ներկայացվում են այն հինգ հատկանիշները, որոնց հիման վրա, ըստ Գ. Ջահուկյանի, կարելի է դասակարգել բուն լեզվաբանական մեթոդները:

Աշխատության հեղինակը լեզվաբանական կադապարի մասին խոսելիս գրում է, որ նշված հասկացությունն ի հայտ է եկել կառուցվածքային լեզվաբանության մեջ, սակայն գիտական շրջանառության մեջ դրվել XX դ. 60-70-ական թթ.՝ մաթեմատիկական լեզվաբանության առաջացմամբ և կիրեռնետիկայի մեթոդների կիրառմամբ: Այնուհետև նշում է, որ առաջինը ամերիկացի լեզվաբան Է. Սեպիրն է առաջ քաշել լեզվի կադապարման խնդիրը, ապա անդրադառնում է ամերիկացի մեկ այլ լեզվաբանի՝ Լ. Բլումֆիլդի

առաջ քաշած նկարագրական լեզվաբանության հետազոտական մեթոդներին: Ի վերջո ներկայացվում է Յու. Դ. Ապրեսյանի՝ կաղապարների դասակարգումը երեք խմբի՝ մարդու խոսքային գործունեության կաղապար, լեզվաբանական հետազոտության կաղապար և անդրկաղապար: Նաև հիշատակվում է, որ հայ լեզվաբանության մեջ կաղապարի հասկացությունը տարբեր աշխատություններում հիմնական քննության է ենթարկել Գ. Ջահուկյանը՝ առաջ քաշելով համընդհանուր լեզվաբանական կաղապարի հասկացությունը, որը ոչ միայն նպաստում է հնարավոր և գոյություն ունեցող լեզուների ուսումնասիրությանը, այլև ծառայում է որպես անդրկաղապար: Միաժամանակ նշվում է, որ կաղապարման մասնավոր հարցերով զբաղվել են հետագա ուսումնասիրողները:

Ուշագրավ է հատկապես այն, որ աշխատության վերջում անդրադարձ է կատարվում համացանցային լեզվին: Ասվում է, որ այն մի կողմից՝ գրավոր խոսք է, մյուս կողմից՝ բանավոր, քանի որ բանավոր խոսքին հատուկ հատկանիշներ է դրսևորում: Համացանցային հայերենի ուսումնասիրությունը, ինչպես նկատում է հեղինակը, դեռևս սկզբնավորման փուլում է: Մասնավորապես նշվում է Ա. Քամայանի՝ համացանցային հայերենի բառապաշարի առանձնահատկություններին նվիրված աշխատանքը: Մ. Սարգսյանը նկատում է, որ հետազոտողները գրեթե չեն անդրադառնում համացանցային լեզվի կամ խոսքի բնութագրմանը: Հետևաբար այն վերլուծում է երկու առումներով՝ «Համացանցային լեզուն որպես լեզվական տարբերակ» և «Համացանցային լեզուն որպես խոսքի դրսևորում» վերնագրերի ներքո: Ըստ Մ. Սարգսյանի՝ համացանցային խոսքն ունի բանավորի բոլոր առանձնահատկությունները, մասնավորապես որ ուղեկցող միջոցներ՝ *մեմեր*, *ժպիտիկներ*, *գիֆե* և այլն, ևս կան: Սակայն, ի տարբերություն բանավոր խոսքի, տարածաժամանակային սահմանափակում չունի, ընկալվում է տեսողությամբ, ուստի և մոտենում է գրավոր խոսքին: Ի վերջո եզրակացնում է, որ այն միջանկյալ դիրք է գրավում գրական լեզվի և խոսակցականի, գրավոր և բանավոր խոսքերի միջև: Հետևաբար

առաջարկվում է առանձնացնել խոսքի երեք դրսևորում՝ գրավոր, բանավոր և համացանցային՝ ներկայացվելով համապատասխան գծապատկերով:

Հիրավի անժխտելի է այսպիսի աշխատանքի կարևորությունը: Այն կարող է օգտակար լինել բանասիրական ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև առհասարակ ընդհանուր և հայ լեզվաբանությամբ զբաղվողների համար:

*Վ. Մ. Խաչատրյան
Բանասիր. գիտ. թեկնածու*

Նազիկ Հովհաննիսյան, Նույնանիշների` XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., ՀՀ ԳԱԱ Լի հրատ., 2022, 264 էջ:

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նկատելի աշխատանք է ծավալում իր աշխատակիցների գիտական արտադրանքի հրապարակման գործում: Այս անգամ հրապարակի վրա են ընդհանուր և համեմատական լեզվաբանությանը, հայոց լեզվի պատմությանը վերաբերող մենագրական աշխատանքներ:

Լույս է տեսել լեզվի պատմաբան Ն. Գ. Հովհաննիսյանի մենագրությունը՝ նվիրված հայ միջնադարյան (այն է՝ XVII դ.) ձեռագիր բառարանների մեջ տեղ գտած նույնանիշների (և հարակից միավորների) գիտական ուսումնասիրությանը¹:

Զարմանալ կարելի է հեղինակի հետազոտական աշխատանքի ամենատես մանրամասնության վրա. ասում են, թե ամենալավը լավի թշնամին է, այս դեպքում՝ ընդհակառակը, բարեկամն է, որովհետև ամենալավի ձգտումը, որ հանդես է բերել հեղինակը, ավարտվել է աներկբա հաջողությամբ:

Հրապարակի վրա է հայ ձեռագիր մատյանների լեզվի մի ուրույն թեմայի քննություն, որն այնքան կարևոր է մեր օրերի լեզվաբանության համար. առհասարակ հայ ձեռագրերի լեզվական քննությունը մեզանում գրեթե բացակայում է: Այդ ձեռագրերում կա բավականին հարուստ նյութ հին գրական լեզվի զարգացման ընթացքի, մանավանդ բարբառների վերաբերյալ: Դա նկատում ենք նաև այս աշխատության օրինակով: Ն. Գ. Հովհաննիսյանի սույն աշխատությունը յուրովի լրացնում է մինչև հիմա ինչ-որ չափով կատարվածը:

¹ *Նազիկ Հովհաննիսյան, Նույնանիշների` XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., ՀՀ ԳԱԱ Լի հրատ., 2022, 264 էջ:*

Աշխատությունը, անհրաժեշտ ենք համարում հիշել, երկար տարիների մանրամասն և մանրակրկիտ հետազոտության արդյունք է՝ նյութի առանձնացման և վերլուծության, հարակից տեղեկությունների և գործածությունների մատնանշման և ճշգրտման, շարադրանքի կառուցիկության տեսանկյունից, որը լիովին խրախուսելի է:

Գիրքն ունի հետաքրքիր կառուցվածք՝ գլուխների փոխարեն մասեր են՝ առանձին վերնագրերով, որոնք վերաբերում են ձեռագիր բառարանների տեսակներին և կազմությանը, նույնանիշ բառերի շարքերին, այդ շարքերի ձևակազմական և բառակազմական առանձնահատկություններին, բառային տարբերակներին, բառիմաստային փոփոխություններին և նրբերանգներին, ընդ որում առանձին ուշադրության առարկա են նորակազմ բառերը, փոխառյալ բառերը և օտար բառ (բառարմատ)-բաղադրիչով կազմությունները, հարադրությունները. մենք ըստ էության մեր ձևակերպումներով թվարկեցինք գրքի այդ վերնագրերը, որոնք էլ ստույգ գաղափար են տալիս նրանում քննության ընդգրկման և կատարողականի մասին. կատարողականը ներկայանում է մանրամասնությամբ, այս կամ այն հարցի քննությանն առչվող գրավոր աղբյուրների և գիտական գրականության անասելիորեն բարեխիղճ օգտագործմամբ:

Գիրքն ունի անգլերեն սեղմ ամփոփում, օգտագործված գրականության ցանկ և «հապավումներ» (իմա՝ համառոտագրություններ): Գրականության ցանկը (էջ 244-26) պարունակում է տեսական աշխատություններ, բառարաններ, «առցանց... հարթակի միջոցով վկայվող աշխատություններ և բառարաններ», համաբարբառներ, էլեկտրոնային կայքեր և հղումներ:

Սույն մենագրությունը, որքան էլ այս կամ այն հարցի մեկնաբանության կամ վերլուծության դեպքում, ձևակերպումների և տերմինաբանության գործածության առումով կարող են լինել առարկություններ, այնուամենայնիվ գիտական մի նպաստ է հայ լեզվաբանության, մանավանդ հայոց լեզվի պատմության բնագավառում,

այն էլ հին գրավոր աղբյուրների բառապաշարի մի ուրույն ոլորտի հաջողված քննությամբ:

Ողջունելի է նման աշխատության երևան գալը արդի հայերենագիտության անդաստանում:

Ն. Մ. Միմոնյան. Ստուգաբանական և բառաքննական դիտարկումներ, Ե., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2022, 77 էջ:

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող, ք. գ. թ. Ն. Մ. Միմոնյանի մենագրությունը: Այն ամփոփում է հեղինակի երկար տարիների ուսումնասիրությունների մի մասը, որ տպագրվել է ոչ թղթային տեսքով (էլեկտրոնային կայք էջով):

Աշխատության մեջ տարբեր վերնագրերով քննվում են հայերենի *գանգատիմ, խարել / խարխափել, վայթել / վաթել / վոթել, գուղձն* և *տիլալ / տիլո* բառերը, ինչպես նաև առանձին ուշադրության առարկա են գրաբարի *յ-* նախամասնիկով, հայերենի հնդեվրոպական ծագման *գ-* նախամասնիկով բայերը, հայերեն բառերի իմաստային (թեմատիկ) մի քանի խմբի բայեր, որոնք արտահայտում են «զգայական ընկալումներ», «միտք և մտածողություն», այլև հնդեվրոպական ծագման հոմանիշ բառեր են:

Հայերեն հիշյալ բառերի և բառիմաստային միավորների նոր, առանձին-առանձին քննությունը հետաքրքիր է ամենից առաջ հեղինակի ստուգաբանական հետազոտության զինանոցի տեսանկյունից՝ ամբողջովին հենված դասական (ավանդական) համեմատաբանության ձեռքբերումների վրա. հեղինակն այս դեպքում վերջինների ամենահետևողական շարունակողն ու զարգացնողն է:

Հիշյալ միավորների ստուգաբանական (նաև՝ բառաքննական) վերլուծությունը այսպես թե այնպես գալիս է յուրովի լրացնելու նախորդ ուսումնասիրողների աշխատություններում այդպես էլ վերջ-

նական ու անվերապահ լուծում չստացածը, որը գիտության առաջընթացի տեսանկյունից, բնականաբար, կարևոր է և իր կարելիության մեջ՝ կիրառելի:

Ն. Մ. Սիմոնյանի աշխատանքում տեսական մեծ ուշադրություն է դարձվել «արմատական տարբերակներով կազմված կրկնավոր բայերին»: Առհասարակ հայերենում տարբերակայնության դրսևորումը, կարծում ենք, ավելին է, քան նրան նվիրված համեմատական ուսումնասիրությունը՝ թե՛ նախկինում և թե՛ ներկայում, իսկ հեղինակի արածն այս թեմայի մեջ ինչ-որ չափով կարող է լրացում լինել:

Սպասելի էր աշխատության գիտական ապարատի ավելի ամբողջական տեսք՝ ներածական-տեսական սկիզբ, եզրակացություններ, գիտական գրականության ցանկ, թեև շարադանքում համապատասխան գրականությանը հղելու առիթը մեծ է:

Հայ լեզվաբանության պատմության ներկայիս շրջանում համեմատական-ստուգաբանական, ինչպես նաև համեմատական-տիպաբանական հետազոտության մտահոգիչ բաց կա, որ պիտի լրացվի հայերենի նման հնագույն տվյալներ ունեցող մի լեզվի դեպքում, իսկ Ն. Մ. Սիմոնյանի սույն աշխատությունը թեկուզ մի նշույլի չափ փարատում է այդ մտահոգությունը:

Մ. Ա. Սարգսյան, Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ, Ե., «Տիր» հրատ., 2021, 100 էջ:

Արդի ընդհանուր լեզվաբանությունը մի քանի տասնամյակ է, ինչ թևակոխել է տեսական հետաքրքրությունների նոր փուլ՝ պայմանավորված ներկայիս հաղորդակցման միջոցների (համակարգիչ, բջջային հեռախոսակապ և այլն)՝ մարդկային գործունեություն մուտք գործելու հանգամանքով: Նման կապի միջոցի տեխնիկական և լեզվահաղորդակցական հայեցակերպով ուսումնասիրությամբ, որքան հայտնի է, զբաղվում են աշխարհի գրեթե բոլոր գիտական-տեխնիկական հաստատություններում: Բավականին ուրախալի է այն, որ Հայաստանում ևս, այս դեպքում ակադեմիական լեզվաբա-

նական գիտության միջավայրում ունենում ենք մասնագիտացողներ այդ ուղղությամբ:

Այդպես, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը իր գիտական-պլանային գործունեության կարևոր ոլորտ է համարում նման ծրագրավորմամբ ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելը:

Եվ ահա հրապարակի վրա է երիտասարդ լեզվաբան, ք. գ. թ., դոցենտ Մ. Ա. Սարգսյանի ուշագրավ աշխատությունը՝ իբրև առաջին, նախակարապետ ձեռնարկ հայերենի էլեկտրոնային համակարգի տեխնիկական «գործունեության» առումով: Այս դեպքում հեղինակի բուն նպատակն եղել ըստ նման համակարգի միջոցով լեզվական բնագրի («տեքստի») սրբագրման խնդիրը: Աշխատանքն ամբողջությամբ նորություն է հայ լեզվաբանության մեջ, ընդ որում ոչ միայն տեսական-ճանաչողական հարցադրումների, այլև բուն երևույթի երևան գալու տեսանկյունից: Ուստի գնահատելի է այս աշխատանքի երևան գալը ժամանակակից գիտության զարգացման համար:

Գրքի տարբեր բաժիններում քննվում են բուն խնդրին վերաբերող նորություն հանդիսացող ձևակերպումներ հարցեր՝ էլեկտրոնային սրբագրման համակարգերը՝ որպես տեխնիկական նոր լուծումներ, օտար լեզվով, հայերենով սրբագրման համակարգեր, Armspell անունով սրբագրական համակարգի կազմության սկզբունքները և առանձնահատկությունները, այդ համակարգի շտեմարանի առանձնահատկությունները, այլև ուղեցույց՝ համակարգի կիրառության:

Այս թվարկումից երևում է, որ գործ ունենք, այսպես կոչված, ընդհանուր-տեխնիկական լեզվաբանության հետ, որ պայմանավորված նոր ժամանակների արտաքին հաղորդակցական հանգամանքներով՝ հումանիտար գիտական նոր-նոր հունի մեջ մտնող ոլորտ է:

Աշխատության վերջում կա անգլերեն ամփոփում, որն այս դեպքում խիստ անհրաժեշտ է՝ ընդհանուր հասանելիության առու-

մով: Բերվում է հինգ տասնյակ անուն գրչականություն՝ հայերեն (հեղինակի լույս ընծայած հոդվածների), օտար լեզուներով (ընդ որում՝ նաև համացանցի մեջ եղած):

Վ. Գ. Հ.

10/02/2022

Սույն թվականի փետրվարի 10-ին ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ականավոր լեզվաբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդ. Աթայանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով:

Բացման խոսքով հանդես եկավ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը՝ ողջունելով մասնակիցներին և մաղթելով հետաքրքիր ու արդյունավետ քննարկումներ:

Գիտաժողովին մասնակցում էին հյուրեր գիտակրթական տարբեր հաստատություններից, Էդ. Աթայանի աշակերտներ, ասպիրանտներ, այդ ոլորտի հայտնի լեզվաբաններ (բ.գ.դ., պրոֆ. Ա. Բարլեզիզյանը, բ.գ.թ., դոց. Ն. Հակոբջանյանը, բ.գ.թ. Ա. Սուվարյանը, դասախոս Ս. Գալստյանը և ուրիշներ): Ներկա էր Աթայանի այրին՝ տիկ. Ջեմմա Բեջանյանը, որ ներկաներին նվիրեց Աթայանի՝

վերջերս լույս տեսած գրքի օրինակներ:

Անվանի լեզվաբան-փիլիսոփայի կյանքին և գիտական գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ բ. գ. թ. դոց. Մ. Ա. Սարգսյանը: Աթայանի լեզվափիլիսոփայական տեսության մի քանի կողմերի անդրադարձավ բ. գ. թ., դոց. Գ. Գյուլգաստյանը:

Այնուհետև եղան այլ զեկուցումներ, որոնցով հանդես եկան բ. գ. թ. Ա. Ս. Գալստյանը, բ. գ. թ. Տ. Դալայանը, բ. գ. թ. Ս. Հարությունյանը, որոնք լավեցին մեծ հետաքրքրությամբ: Ջեկուցողները տարբեր կողմերից անդրադարձան Էդ. Աթայան գիտնականի, փիլիսոփայի, լեզվաբանի, դասախոսի և կրթության կազմակերպչի կերպարին

Ամփոփելով համաժողովի արդյունքները՝ Վ. Գ. Համբարձումյանը նշեց. «գիտաժողովը յուրօրինակ հարգանքի տուրք է՝ ևս մեկ անգամ վերհիշելու, մեծարելու մեծ գիտնականին, ներկայացնելու նրա գիտական ժառանգության հիմնական բնագավառները՝ լեզվաբանություն, նշանագիտություն, փիլիսոփայություն և այլն»:

Հանդիպումը անցավ ջերմ քարեկամական մթնոլորտում՝ քննարկում, հետաքրքիր ելույթներ, դիտարկումներ, հուշեր:

[Մեկուկես շաբաթ անց ցավալի գույժ եղավ «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի խմբագրական կազմի անդամ. պրոֆ. Արամ Կարապետի Բարլեզիզյանի երկրային կյանքի ավարտի մասին՝ մեծ կորուստ հայ լեզվաբանության, մեզանում հայ-ֆրանսիական լեզվական առնչությունների լավագույն հետազոտողի]:

23/02/2022

1999 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի նստաշրջանի որոշմամբ ընդունված Մայրենի լեզվի միջազգային օրը, որն աշխարհում նշվում է որպես մայրենի լեզուների իրավունքների ճանաչման և գործածության աջակցման օր, Հայաստանում նշվում է 2005 թ. ի վեր:

Հայոց լեզվի հիմնախնդիրներին էր նվիրված ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի նախաձեռնած «Մայրենիի ուսումնասիրության և ուսուց-

ման արդի խնդիրներ» խորագրով միջազգային առցանց գիտաժողովը, որ հրավիրվել էր Մայրենի լեզվի միջազգային օրը՝ փետրվարի 21-ին: Մասնակցում էին ոչ միայն Հայաստանի Հանրապետության և Արցախի, այլև աշխարհի մեկ տասնյակից ավելի երկրների լեզվաբան-հայագետներ և գործիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ք. գ. դ. Վ. Կատվալյանը:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության անունից օրհնության խոսք հղեց գերաշնորհ Տ. Շահան արք. Սարգիսյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Մուվարյանը, պետական-քաղաքական գործիչ, ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանը, ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ, ք.գ.թ. Դ. Գյուրջինյանը, ԳՊՀ ռեկտոր, իրավ. գ. դ. պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Սորբոնի համալսարանի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտի հայագիտությո-

յան ամբիոնի վարիչ, պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ա. Տոնապետյան-Դեմոպուլոսը (Ֆրանսիա) իր ելույթում տեղեկացրեց, որ ինստիտուտում կարողացել են հիմնել «Հայագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսական դրամաշնորհային ծրագիր, որի առարկայական ցանկը ներառում է արևմտահայերենը, հայ գրականությունը, սփյուռքագիտությունը:

Միլանի համալսարանի պրոֆ. Անդրեա-Սկալան (Իտալիա) ներկայացրեց Ֆլորենցիայի Բարբառը՝ որպես ժամանակակից իտալերենի կազմավորման հիմք, անդրադարձավ բարբառների գերակայությանը, գրական լեզուբարբառ առնչություններին՝ մանրամասն դիտարկելով մարզային իտալերեն և ստանդարտ իտալերեն հարաբերակցությունները:

Ս. Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի Կենտրոնական Ասիայի և Կովկասի ամբիոնի ավագ դասախոս, «Մեր գործը» դաշնային թերթի խմբագիր Դոնարա Մկրտչյանը (ՌԴ) խոսեց Պետերբուրգի համալսարանում գրաբարի, հայ գրականության դասավանդման, հայագիտա-

կան և հայերենագիտական միջազգային գիտաժողովների կազմակերպման մասին՝ որպես հայ ինքնության պահպանման գրավականներ, նաև առաջարկեց հոդվածներ ներկայացնել իր խմբագրած թերթին:

«Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարյանը (Լիբանան) իր ելույթում կարևորեց նման հանդիպումները՝ հայագիտության ոլորտի տարաբնույթ խնդիրները վերհանելու և համահայկական ներուժը համախմբելու տեսանկյունից:

Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան Լ. Մարգարյանը անդրադարձավ լեզվաքաղաքականության արդիական հարցերի:

Լ. Ապաճեանը (Սիրիա) նըշեց, որ Սիրիայի հայ համայնքի կրթամշակութային խնդիրները էապես տարբերվում են մյուս համայնքների խնդիրներից. հայկական դպրոցների գործունեության կազմակերպումը տեղի է ունենում հայկական եկեղեցիների, ազգային կուսակցությունների, հասարակական, մշակութային, հայրենակցական, բարեգործական կազմակերպությունների և միությունների միջոց-

ներով ու ջանքերով: Շեշտեց, որ կրթական կյանքի կարևոր խնդիրներից են դասագրքերը, ուսուցիչների վերապատրաստումը և սերնդափոխությունը, ծրագրերը, մեթոդական ուղեցույցները:

Ա. Պուլուզյանը (Լիբանան) ներկայացրեց Լիբանանում Համազգային հայ կրթական և մշակութային միության հովանավորությամբ գործող դպրոցներից մեկի խնդիրները, ծրագրերը: Նշեց, որ հիմնական խնդիրը հայերենի ուսուցիչ գտնելն է, քանի որ աշխատավարձը չնչին է, ուշադրություն հրավիրեց նաև դասագրքերի և ուսումնական ծրագրերի, մանկական նոր գրականության պակասի խնդիրներին: Տեղեկացրեց, որ փորձել են ստեղծել մայրենիի առցանց դպրոց 3-99 տարեկանների համար, դասավանդում են հայերենի քերականություն, գրականություն, պատմություն, մշակույթ:

Ա. Պազգալյանը (Կանադա) նշեց Մոնրեալում հայերենի ուսուցման խնդիրների մասին: Երկրում 40 հազար հայ կա, սակայն հայկական դրպրոց է հաճախում ընդամենը 3 հազար երեխա, կանադահայ երիտասարդության լեզվա-

մտածողությունը ցավալիորեն արդեն հայերեն չէ:

Գդանսկի հայագիտական հետազոտությունների ինստիտուտից Հ. Մադաքյանը (Լեհաստան) նշեց, որ լեհահայ համայնքում խնդիրները գրեթե նույնն են, ինչ սփյուռքի մյուս համայնքներում: Մայրենին նահանջ է ապրում, ամենօրյա դպրոցներ չկան, կան միայն մեկօրյա դպրոցներ: Ընտանիքներում ևս մայրենին նահանջում է, քանի որ ծնողները ևս խոսում են օտար լեզվով:

Կրասնոդարի Հովհ. Թումանյանի անվան հայկական մշակութային-լուսավորչական կենտրոնի տնօրեն Ե. Հարությունյանը (ՌԴ) խոսեց աշխարհի ամենաստվար հայ համայնքի՝ Կարսնոդարի մոտ մեկ միլիոնանոց համայնքի մասին, որտեղ, այդուհանդերձ, ամենօրյա դպրոցներ գրեթե չկան, կան մեկօրյա կամ երկօրյա: Կան մշակութային միություններ, որոնք փորձում են պահել հայկականությունը: Հիմնական խընդիրը դասագրքերն են: Անհրաժեշտություն կա ստեղծել այնպիսի գրքեր, որոնք ռուսախոս երեխայի համար խրթին չլինեն և նպաստեն նրա՝

երբևէ հայրենիք վերադառնալուն:

Շահեկան ելույթներ ունեցան նաև ՀՊՄՀ բանասիրության ֆակուլտետի դեկան, բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյանը, ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ. Թ. Ասոյանը, Ֆրանսիայի Լը Ռենսի Դպրոցասեր վարժարանի ուսուցչուհի Ն. Պարուճյանը, բ. գ. թ. Հ. Զաքարյանը և այլք:

Ավելի քան չորս ժամ տևած առցանց գիտաժողովում ելույթ ունեցողների և մասնակիցների ներկայանալի կազմը մեկ կարևոր և նվիրական խնդրի շուրջ էր համախմբված, այն է՝ թե՛ մայր հայրենիքում, թե՛ Արցախում և թե՛ սփյուռքում հայոց լեզվի ուսուցման և նրա հետ սերտորեն շաղկապված հայապահպանության հարցը:

Իրենց ամփոփիչ ելույթներում Յու. Սուվարյանը, Հ. Հակոբյանը և Վ. Կատվալյանը գոհունակություն հայտնեցին համաժողովի ընթացքի, հնչած դիտարկումների, առաջարկությունների և ծրագրերի վերաբերյալ, արձանագրեցին, որ համաժողովը հեռանկարներ բացեց համահայկական նոր միջոցառումների անցկացման, ծրագրերի իրականացման և արդյունավետ գործակ-

ցության համար: Նշվեց, որ մտքերի փոխանակությամբ հագեցած համաժողովը Մայրենիի օրը իսկապես վերածեց տոնի:

Ա. Վարդանյան
Բանասիր. գիտ. թեկնածու

04/03/2022

Մեծանուն հայերենագետ Հ. Աճառյանի բարբառագիտական հիմնարար աշխատանքները նրա գիտական հսկայածավալ ժառանգության պատկառելի մասն են կազմում: Դրանց թվին են պատկանում նաև 1920-30-ական թթ. սահմանափակ տպաքանակով ապակետիպ եղանակով հրատարակված աշխատանքները՝ «Քննություն Նոր-Չուղայի բարբառի», «Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի», «Քննություն Ագուլիսի բարբառի», «Քննություն Մարաղայի բարբառի» և այլն, որոնք գրված են միանգամայն նույն սկզբունքներով ու եղանակով՝ հնչունաբանություն, խոսքի մասեր, բնագիր, բառարան՝ գրաբար-հայերեն, որը դարձել է օրինակ հետագա նման ուսումնասիրությունների համար:

Ինչ խոսք, արժեքավոր այդ աշխատությունների նոր հրա-

տարակույթունը հայ բարբառագիտության համար կարեւոր նշանակություն կարող է ունենալ. հիշյալ բարբառների նկարագրությունը, դրանց վերաբերյալ լեզվաբանի դիտարկումները և բերած նյութը, հասանելի դառնալով մասնագիտական ավելի լայն շրջանակներին, իրենց նպաստը կբերեն հայ բարբառների տարբեր հարցերի նորովի մեկնաբանությանը:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նախաձեռնել է մեծ բարբառագետի հիշյալ աշխատանքների վերահրատարակումը: 1925 թ. Երևանում հիսուն օրինակով լույս տեսած «Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի» աշխատանքը վերահրատարակվում է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ՝ հրատարակչական, կարելի է ասել, փայլուն աշխատանքով:

08/04/2022

Ս.թ. ապրիլի 8-ին ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը և Արցախի պե-

տական համալսարանի ռեկտոր Ա. Սարգսյանը կնքեցին Պայմանագիր երկու հաստատությունների համագործակցության մասին, որով նախատեսվում է կրթական, գիտահետազոտական ծրագրերի համատեղ մշակում և իրականացում, գիտական սեմինարների, քննարկումների, գիտաժողովների կազմակերպում, Արցախի համալսարանի և լեզվի ինստիտուտի կառուցվածքային տորաբաժանումների գործակցության խթանում:

18/04/2022

«Շիրակի մարզի բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակներում մի խումբ բարբառագետներ ապրիլի 16-ին եղան Շիրակի մարզի Լանջիկ և Քարաբերդ գյուղերում: Բարբառագետներին մարզի բնակիչները պատրաստակամությամբ ընդունեցին:

Նրանք հնարավորություն ունեցան գրառելու ծրագրի հետաքրքրող հարցերի պատասխանները տեղի հնարակներից: Ցեղասպանությունից վերապրածների երրորդ սերնդի խոսքում ակնառու է տեղի խոսվածքների ազդեցությունը:

Լանջիկի համայնքապետարանում հավաքվածների խոր-

հրդով այցելեցինք Ալաշկերտի բարբառին տիրապետող տարեցներին՝ նրանցից քաղելու մեզ անհրաժեշտ տեղեկություններ:

27/04/2022

ՀՀ Շիրակի մարզի բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակներում 23.04.2022 թ. ուսումնասիրություն կատարեցինք նաև մարզի Մարալիկ, Քարակապ, Սառնաղբյուր համայնքներում:

Բնակիչների հայտնած արժեքավոր տեղեկությունները փաստում են, որ դեռ 1828 թ. Էրզրումից, Բասենից և Ալաշկերտից գաղթածների խոսվածքները մասամբ պահպանել են իրենց բարբառային հատկանիշները՝ իրենց մեջ ներառելով նաև նոր միջավայրում այլ խոսվածքների մի շարք հատկանիշներ:

Կարելի է ասել, որ միջբարբառային խոսվածքների առկայությունն այս դեպքում նույնպես ակնհայտ է: Սակայն արշավախմբի աշխատակիցների կողմից ընտրված հատկանիշների հարցումներին ի պատասխան՝ բարբառախոսները ներկայացնում էին նաև

իրենց մեծերից լսած բառեր և բառաձևեր, քերականական և հնչյունական օրինաչափությունների մասին որոշակի իրողություններ:

Այլ կերպ ասած՝ արտագնա աշխատանքով բարբառագետները աստիճանաբար պարզում են բարբառային վիճակը ՀՀ Շիրակի մարզի տարբեր բնակավայրերում:

06/05/2022

Ս.թ. մայիսի 5-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար, որը վարում էր INALCO (Արևելյան լեզուների և քաղաքակրթության հիմնարկ) համալսարանի ասպիրանտ Մամուե Չաքմաքճյանը (գիտական ղեկավար՝ Բ. Գ. Դ., պրոֆ. Ա. Տոնապետյան, հետազոտության մասնակիցանդամ՝ Հ. Տեովլեթյան), որը համառոտ պատմեց համալսարանի մասին, ուր իր ուրույն տեղն ունի հայագիտությունը:

Լեզվի ինստիտուտի տնօրինության և արևմտահայերենի բաժնի աջակցությամբ շուրջ մեկ ամիս Ս. Չաքմաքճյանը հետազոտություն է իրականացրել իր ատենախո-

սության՝ «Հայերենի խոսքի ավտոմատ ճանաչում. Հնչյունաբանական և հնչույթաբանական խնդիրներ» վերաբերյալ:

Կատարվել է հայերենի հնչերանգի և շեշտի փորձարկում, ձայնագրվել է 20 մասնակից (10 արևելահայ, 10 սիրիահայ), որոնց տվյալները հետագայում պետք է օգտագործվեն երկտարբերակ համակարգ (արևելահայերեն-արևմտահայերեն) ստեղծելու համար:

Ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը, կարևորելով միջազգային գիտական կապերը, պատրաստակամություն հայտնեց շարունակելու երկու հաստատությունների միջև համագործակցությունը:

Հանդիպումը անցավ ջերմ մթնոլորտում, ծավալվեց քննարկում, եղան հետաքրքիր առաջարկներ:

14/06/2022

Ս.թ. հունիսի 14-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ հերթական սեմինար-զեկուցումը՝ «Մրցակից լեզվական միտումների դերը լեզվի համաժամանակյա գործառության և տարածամանակյա փոփոխության մեջ» թեմայով:

Զեկուցեց ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող, Բ. Գ. Թ. Ս. Ավետյանը: Նա նշեց, որ մրցակից (հակադիր) լեզվական միտումները, որոնք բոլորն էլ բխում են առավել արդյունավետ հաղորդակցման պահանջից, կարևոր դեր են խաղում լեզվի համաժամանակյա գործառության և տարածամանակյա փոփոխությունների մեջ: Ըստ այդմ՝ նայած, թե որ լեզվում, կամ տվյալ լեզվի տարածամանակային որ տարբերակում այդ միտումներից որ մեկն է տիրապետող դառնում, ըստ այդմ էլ պայմանավորված է լինում այս կամ այն լեզվական փոփոխության ուղղվածությունը: Երբեմն էլ տվյալ լեզվական օրինաչափությունը ձևավորվում է ոչ թե մեկ, այլ մի շարք միտումների և գործոնների գործողության արդյունքում:

Վերջում տեղի ունեցավ հետաքրքիր և արդյունավետ քննարկում:

17/06/2022

2022թ. հունիսի 16-ին և 17-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Ջահուկյանական ընթերցումներ» ամենամ-

յա հայերենագիտական գիտաժողովը: Ջեկուցումներով հանդես եկան ն՝ լեզվի ինստիտուտի գիտաշխատողները, նուսումնագիտական տարբեր հաստատությունների՝ ՀՀԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, «Տաթև» ԳԿՀ-ի, Արցախի պետական համալսարանի և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցներ:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը: Նա կարևորեց գիտաժողովների դերը գիտության զարգացման, գիտական ձեռքբերումների հանրայնացման դիտանկյունից: Այնուհետև ներկաներին փոխանցվեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յու. Սուվարյանի ողջույնի խոսքը:

Գիտաժողովում հնչած զեկուցումներն աչքի ընկան թեմատիկ բազմազանությամբ: Դիտարկումները վերաբերում էին հայերենի տարբեր փուլերին և դրսևորումներին, լեզվական ընդհանրական հարցերի: ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ. Հովհաննիսյանը (ՀՀ ԳԱԱ ԼԻ) խոսեց Արցախի բարբառի

թվական անունների մասին: Բ. գ. դ. Վ. Կատվայանը ներկայացրեց հայերենի բարբառներում պահպանված հինհայերենյան իրողություններ: Բ. գ. թ. Ն. Խաչատրյանի (ՀՀ ԳԱԱ ԼԻ) զեկուցումը վերաբերում էր Համշենի բարբառի բառաբարդմանը, բ. գ. թ. Ն. Կիրակոսյանի (Մատենադարան) և Լ. Մարգարյանի (Արցախ, ԱՐՊՀ) զեկուցումներն առնչվում էին Արցախի տեղանուններին:

Բ. գ. թ. Ն. Սիմոնյանը (ԼԻ), բ. գ. թ. Ն. Ջաքարյանը («Տաթև» ԳԿՀ) և բ. գ. թ. Տ. Դալայանը (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) անդրադարձան ստուգաբանական հարցերի: Իմաստաբանության թեմայով էին Ա. Ամիրխանյանի (ՀՀԳԱԱ ՀԱԻ), Ս. Գրիգորյանի (ԼԻ), բ. գ. թ. Ն. Թադևվոսյանի (ԼԻ) զեկուցումները: Հ. Մարաշյանի (ԼԻ) և Մ. Ֆելեքյանի (ԵՊՀ) զեկուցումները վերաբերում էին արևմտահայերենի նորաբանություններին: Բ. գ. թ. Ս. Տիոյանը (ԼԻ) և Ա. Ֆիշենկճյանը (ՀՀ ԳԱԱ ՊԻ) խոսեցին արևմտահայերենում հատուկ անունների տառադարձման, ապա նաև վերաբերականների մեկնաբանման հարցերի շուրջ: Բ. գ. թ. Ֆ. Հակոբյանը (ԼԻ) ներկայացրեց գրաբարի էլեկտրոնային կոր-

պուսի ստեղծման նպատակը և խնդիրները, Բ. Գ. Թ. Ս. Հովհաննիսյանը (ԼԻ)՝ երկլեզվության խնդիրը: Բ. Բ. Դ., պրոֆ. Լ. Գ. Բրուտյանը (ԵՊՀ) անդրադարձավ լեզվական հաճոյախոսություններին միջմշակութային հաղորդակցման համատեքստում, Բ. Գ. Թ. Գ. Գրիգորյանը (ԼԻ) ներկայացրեց չժխտական նախաձեռնումը դիպլոմատիային նորակազմություններ, Բ. Գ. Թ. Վ. Ներսիսյանը (ՀՊՄՀ) անդրադարձավ աժանցման և աժանցավոր բառերի քննությանը Ս. Աբեղյանի աշխատություններում:

Ձեռագիր քերականության մի «լուծմունքի» (ԺԵ դար) ուսումնասիրության արդյունքների շուրջ արտահայտվեց Բ. Գ. Թ. Ս. Սիրունյանը (Մատենադարան): Ն. Հովհաննիսյանը «Մեր լեզուն, խոսքը և տրամաբանությունը» զեկուցմամբ անդրադարձավ հայերեն սպորտի մի շարք օտարաբան և անտրամաբանական լեզվական կառույցների, լեզվամտածողական շեղումների: Դասական հայերենում և որոշիչ հոդի գործածության տիպաբանական որոշ յուրահատկությունների շուրջ Բանախոսեց Բ. Գ. Թ. Ս. Ավետյանը (ԵՊՀ):

Գիտաժողովի ընթացքում եղան տարբեր բնույթի հարցեր, մասնակի քննարկումներ, բանավեճ:

Ամփոփելով գիտական երկօրյա համաժողովը՝ Վ. Կատվայանը նշեց, որ հնչած զեկուցումները վկայեցին կատարված հետազոտական զգալի աշխատանքի մասին, և ներկայացված արդյունքները անշուշտ իրենց նպաստը կրեն հայերենագիտության հետագա զարգացմանը:

22/06/2022

Կարնո բարբառը կենդանի, գործուն է և որպես հաղորդակցման միջոց է ծառայում Գյումրիում, Շիրակի մարզի բազմաթիվ բնակավայրերում: Մեզ հետաքրքրող բարբառային իրողությունների մասին տեղեկություններ քաղեցինք գյումրեցի Հ. Մելքոնյանից, որը քաղաքում ճանաչված արհեստավոր-թիթեղագործ է:

Մարզի ամենաբարձրադիր գյուղը Լեռնակերտն է, ուր այցելեցինք 88-ամյա Մ. Հովհաննիսյանին: Նա լավ հիշողություն ուներ և պատասխանեց մեզ հետաքրքրող բոլոր հարցերին:

Հայրենյաց գյուղում մեր 93-ամյա բարբառախոս Լիա մայրիկին (նախնիները գաղթել են Կարսից 1828թ.) օգնում էր վերհիշել որդին՝ Գ. Սարոյանը: Հատկապես հետաքրքիր էր Հովհ. Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի սկզբի մասի թարգմանությունը Կարսի խոսվածքով: Պարզեիպարգ երևում էր, որ Կարսի խոսվածքը *-ու՛մ* ճյուղի բարբառային հատկանիշներ ունի՝ *բէրը՛մ է, զարգը՛մ է, լալը՛մ է, տալը՛մ է* և այլն:

Հոռոմ գյուղում նույնպես Կարսից գաղթածների 3-րդ սերնդի ներկայացուցիչների հետ աշխատեցինք: Զ. Փարվանյանը մեզ տվեց արժեքավոր տեղեկություններ իրենց խոսվածքին հատուկ բառակազմական միջոցների մասին:

Մեծ եղեռնից հետո Զորավար Անդրանիկի գործի հետևից Շիրակի դաշտում ապաստանած մշեցիների մի քանի տասնյակ ընտանիքներ իրենց համար գյուղատեղի են ընտրել Ախուրյան գետի Ախուրիկ վտակի երկու ափերը: Այդ ժամանակաշրջանում՝ 1922-1923 թթ. է կազմավորվել բացառապես գաղթականներով բնակեցված Ոսկեհասկ գյուղը: Այդ գյուղում աստիճանաբար

բնակություն էին հաստատել նաև Կարսի մարզի տարբեր գյուղերից բռնագաղթածների՝ նորանոր գերդաստաններ՝ փաստորեն առանձնանալով և գետի տարբեր ափերին առանձին թաղեր հիմնելով: Այդ կերպ մեկուսանալն էր պատճառը, որ տասնամյակներ շարունակ տարիքով մարդիկ անխառն էին պահել իրենց մայրենի խոսվածքները:

Կարսի Փարկիտ գյուղից գաղթածների 4-րդ սերնդի ներկայացուցիչ Վ. Սարգսյանը՝ Էլբակի Ժորժիկի որդին, վստահեցնում էր, որ ինքն անխաթար ներկայացնում է իր ծնողների խոսվածքը: Նրա կինը՝ Ս. Սարգսյանը, մշեցիների թաղում է ծնվել, բայց կարսեցիների թաղ հարս գալով՝ շատ լավ պահել էր իր պապի՝ Մշո Հացիկ գյուղից գաղթած Մեսրոպի մայրենի խոսվածքը:

Ոսկեհասկում տեղեկություններ հավաքեցինք նաև Վարդանի ու Սոֆյայի դուստր Շ. Մուրադյանից: Բարբառին իրողություններին քաջատեղյակ էր Առափի գյուղում ծնված և Ոսկեհասկի դպրոցում աշխատող ուսուցչուհի Է. Նիկոյանը:

Մշո Բոստաբյանդ գյուղի խոսվածքով զանազան տեղե-

կություններ հայտնեց 80-ամ-
յա Լ. Պետրոսյանը:

Պեմզաշեն և Տուֆաշեն գյու-
ղերում մեր բարբառախոսնե-
րը 1828թ. Ալաշկերտից գաղ-
թածների սերունդներն էին:
Նրանց խոսքում ակնհայտ էր
Կարնո բարբառի ազդեցությ-
ունը:

Մեր աշխատանքը շատ շա-
հեց Արթիկ քաղաքում հար-
գանք վայելող Դավայան ըն-
տանիքի անդամների պատ-
րաստակամությունից: 93-ամ-
յա Շ. Դավայանը հիանալի հի-
շողություն ուներ, լավ էր տի-
րապետում Կարնո բարբառին
և անգամ ուղղում էր իր գա-
վակների խոսքում հանդիպող
փոքրիկ անճշտությունները:

Եվ նման գործնական աշ-
խատանքով կարողացանք եռ-
օրյա այցելության շրջանակ-
ներում քաղել մեզ անհրա-
ժեշտ բազմաթիվ տեղեկությ-
ուններ, որ առկա են Շիրակի
մարզի խոսվածքներում: Առ-
ջևում դեռ շատ անելիքներ
կան՝ պարզելու այս յուրօրի-
նակ մարզի բարբառային հա-
մապատկերը:

Ջ. Բառնասյան

Բանասիր. գիտ. թեկնածու

27/06/2022

ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կո-
միտեի ֆինանսավորմամբ ի-

րականացվող 20TTSH-063
«Հայերենի դերը և ուսուցման
խնդիրները բազմալեզու մի-
ջավայրում» գիտական թեմա-
յի ուսումնասիրության շրջա-
նակներում ՀՀ ԳԱԱ Հ. Աճառ-
յանի անվան լեզվի ինստի-
տուտի ավագ գիտաշխատող,
բ. գ. թ., դոց. Մ. Սարգսյանը
(թեմայի ղեկավար) և գիտաշ-
խատող, բ. գ. թ. Ս. Միքայելյա-
նը (թեմայի կատարող) ս. թ.
հունիսի 23-28-ը աշխատան-
քային այցով գործուղվել են
Լեհաստանի Կրակով քաղաք:
«Հայերենի դերը և ուսուցման
խնդիրները բազմալեզու մի-
ջավայրում» նախագծի նպա-
տակն է ներկայացնել բազմա-
լեզու միջավայրում՝ մասնա-
վորապես Լեհաստանի հայ-
կական համայնքի օրինակով,
հայերենի լեզվավիճակը, զար-
գացման միտումները, ինչպես
նաև հայերենը որպես երկ-
րորդ լեզու կամ օտար լեզու՝
դասավանդելու խնդիրները՝
որպես կիրառական լեզվաբա-
նության ուսումնասիրության
առարկա:

Գիտաշխատակիցները Լե-
հաստանում ապրող լեզվա-
կան հանրույթի շրջանում ի-
րականացնում են հանրալեզ-
վաբանական քննություն, հա-
վաքում անհրաժեշտ տեղե-
կություններ տեղում գործա-

ռող լեզուների վերաբերյալ, քննում տարբեր համայնքների լեզվակիրների խոսքի ընդհանրությունների և տարբերությունների, փոխներթափանցումների և փոխազդեցությունների հետևանք հանդիսացող հատկանիշները, անհարկի օտարաբանությունների և նորաբանությունների անհրաժեշտությունը, հայերենի վրա օտար լեզուների դրական և բացասական ազդեցությունը:

Այցի ընթացքում նախատեսված են եղել նաև մի շարք հանդիպումներ հայկական համայնքի գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, դպրոցների, համալսարանական աշխատակիցների հետ, ինչպես նաև դասախոսություններ՝ նվիրված հայերենի դասավանդման արդի հիմնախնդիրներին:

30/06/2022

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ., դոց. Մ. Սարգսյանը և գիտաշխատող, բ. գ. թ. Ս. Միքայելյանը ս.թ. հունիսի 23-28-ը Լեհաստանի Կրակով քաղաք գործուղման շրջանակներում

եղան Կրակովի «Հայ մշակութային ընկերություն» հյուր, հանդիպեցին լեհ հայագետ և իրանագետ Անդժեյ Պիսովիչին:

Ինստիտուտի գիտաշխատակիցները հայագետի հետ քննարկեցին ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացվող 20TTSH-063 «Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում» գիտական թեմային առնչվող հարցեր, ինչպես օրինակ՝ լեհահայ համայնքի ձևավորման, Լեհաստանում հայկական միությունների սկզբնավորման, հայերենի ուսուցման, հայկական մշակույթի պահպանման, լեհահայերի խոսակցական լեզվի առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Հարգարժան պրոֆեսորը մեծ պատրաստակամությամբ գիտաշխատակիցներին տրամադրեց արխիվային նյութեր, լուսանկարներ, անհրաժեշտ տվյալներ, օգնեց բացահայտել լեհահայերին և լեհահայերենը:

Դեռևս ուսանողական տարիներից Ա. Պիսովիչը հետաքրքրվել է արևելյան լեզուներով: Չնայած արտաքին հանգամանքների հարուցած դժվարություններին՝ մեծ համա-

ռությամբ կարողացել է կրթաթոշակներ հայթայթել և ուղևորվել Պարսկաստան, Հայաստան՝ սովորելու պարսկերեն և հայերեն: 1960-ական թթ. սկզբին արևելահայերեն է սովորել Երևանի համալսարանում, այնուհետև՝ մի քանի տարի անց՝ Ֆրանսիայում սովորել է գրաբար և արևմտահայերեն: 1970-ական թթ. դեկտեմբերի 31-ին Յազեկյան համալսարանի իրանագիտության բաժինը՝ պրոֆեսորը դասավանդել է պարսկերենի քերականություն, սակայն իր համառ ջանքերի շնորհիվ կարողացել է հայերենի ուսուցումը ներառել կրթական գործընթացում՝ որպես երկրորդ լեզվի ուսուցում և օժանդակ միջոց իրանագիտական բաժնի ուսումնառության համար:

Ավելի ուշ՝ 1991 թ. պրոֆ. Պիսովիչը Հոլանդիայի Լեյդենի համալսարանում որպես հրավիրյալ դասախոս դասավանդել է հայ բարբառագիտություն՝ անգլերենի միջնորդությամբ: Հայերենի բարբառների նկատմամբ հետաքրքրությունը ևս առաջացել էր ուսանողական տարիներին. Ա. Պիսովիչը Հայաստանում ուսանելու տարիներին ակադ. Գ. Սևակից հանձնարարություն էր ստացել ուսումնասի-

րելու Փարսի գյուղի բարբառը:

Լինելով ազգությամբ լեհ՝ պրոֆ. Պիսովիչը մեծ նվիրումով դասավանդել և տարածել է հայերենը, իր ուսանողների մեջ արթնացրել հետաքրքրություն հայերենի և Հայաստանի նկատմամբ:

Հայագետ Պիսովիչի աշխատությունները տարբեր լեզուներով են: Նրա ուսումնասիրությունների շրջանակում են ժամանակակից գրական հայերենը իր երկու տարբերակներով, հայ բարբառագիտությունը, հայատառ լեհերեն վավերագրությունը: Մեծ հայագետը աննկարագրելի աշխատանք է կատարում ցայսօր՝ հայկական մշակույթը տարածելու հարցում: Նրա թարգմանությամբ լույս են տեսել Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Պարույր Սևակի ստեղծագործությունները: Նրա աշխատասիրությամբ և ծանոթագրություններով Լեհաստանում լեհերեն հրատարակվել են Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»:

28/06/2022

2022 թ. հունիսի 28-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում հանդիսավորությամբ նշվեց ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Գուրգենի Համբարձումյանի ծննդյան 75-ամյակը:

Շնորհավորական խոսքով հանդես եկավ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը: «Դուք մեր ինստիտուտի նվիրյալներից եք, մարդ, և անհատականություն, որը տարիներ շարունակ անձնվեր աշխատանքով նպաստել է գիտական մտքի առաջընթացին: Ձեր երկու տասնյակից ավելի մենագրությունները, հարյուրից ավելի գիտական հոդվածները՝ լույս տեսած հայերեն և այլ լեզուներով, լուրջ ներդրում են հայերենագիտության ոլորտում», - նշեց տնօրենը:

Ինստիտուտի կոլեկտիվը ի սրտե շնորհավորում է հոբելյարին և մաղթում քաջառողջություն, արևշատություն և ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ:

09/07/2022

Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» ծրագրի շրջանակում ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագետների խումբը, ըստ նախատեված պլանի, հուլիսի 5-ից 8-ը բարբառագիտական հետազոտություններ իրականացրեց Շիրակի մարզի Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Մարալանջ, Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս, Նոր Կյանք, Վարդաքար և Հառիճ գյուղերում: Բարբառակիրների հետ անկաշկանդ գրույցների, հարցումների և տեսաձայնագրման շնորհիվ հավաքվեց ուսումնասիրության համար անհրաժեշտ բավականաչափ նյութ:

Բնակչության բարյացակամ և բարեհաճ վերաբերմունքը, ինչպես նաև խմբին իրենց աջակցությունը բերած շատ շիրակցիներ, տեղական իշխանության ներկայացուցիչներ մեծապես նպաստեցին աշխատանքների հաջող ընթացքին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

90-րդ տարեդարձ
Մ. Ա. Սարգսյան, Հայ լեզվափիլիսոփայության անվանի
ներկայացուցիչը 3

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ս. Գ. Հովհաննիսյան, Անհատական լեզվաշխարհի շերտա-
յին դրսևորումները (ըստ Էդ. Աթայանի՝ մարդկության
կյանքի մակրոփուլերի տեսության) 11
Հ. Հ. Մեսրոպյան, «Մահ» հասկացության բարբառային
բառաշերտի ընդհանուր բնութագիրը..... 21
Է. Զ. Միրզոյան, Արևմտահայերենի և թուրքերենի լեզվա-
կան առնչությունների շուրջ 33

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ա. Ս. Գալստյան, Արդի հայերենի նորակազմ բառերի իմաս-
տային-կառուցվածքային վերլուծության հարցեր..... 48
Գ. Գ. Գրիգորյան, Բաղադային ազդեցությունը ձայնավորի
վրա բաղադային-ձայնավոր կապակցություններում (փորձա-
ռական հետազոտություն)..... 56
Լ. Գ. Թելյան, Շարահյուսական միավորների և կապակցու-
թյան եղանակների հարաբերակցության շուրջ 63

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Վ. Պապիկյան, Իրանական ծագման հատկական փոխա-
ռությունների քննություն..... 77
Ա. Ե. Պետրոսյան, Ստուգաբանություններ 85

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մ. Սարգսյան, Լեզվաբանության տեսության հարցեր, Երևան,
«Տիր» հրատ., 2021, 166 էջ (հեղ.՝ Վ. Մ. Խաչատրյան)..... 97

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... 102

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ..... 108

СОДЕРЖАНИЕ

К 90 - л е т и ю. *М. А. Саркисян*, Известный представитель армянской лингвистической философии - 3. **Статьи:** *С. Г. Оганесян* - Проявления слоев индивидуального языкового мира (по теории Э. Атаяна о макро этапах человеческой жизни) - 11. *А. О. Месропян*. Общее описание диалектной лексики связанной с понятием «смерть» - 21. *Э. З. Мирзоян*. Взаимодействие западноармянского и турецкого языков.- 33. **Дискуссии и обсуждения:** *А. С. Галстян*, Вопросы семантико-структурного анализа новых слов в современном армянском языке - 48. *Г. Г. Григорян* - Влияние согласного звука на гласный в сочетаниях согласный-гласный (экспериментальное исследование) - 56. *Л. Г. Телян*, К вопросу о соотношении синтаксических единиц и видов синтаксической связи - 63. **Сообщения:** *С. В. Папикян*, Исследование экзотизмов иранского происхождения - 77. *А. Е. Петросян*, Этимологии – 85. **Рецензия** – 97. **Книжное обозрение** - 102. **Научная жизнь** - 108.

CONTENTS

On the 90-th anniversary. *N. A. Sargsyan*. A famous researcher of Armenian philosophical linguistics. – 3. **Articles:** *S. G. Hovhannisyan* - Layered Manifestations of the Individual Language World (According to E. Atayan's Theory of Macro-stages of Human Life) – 11. *H. H. Mesropyan*. General description of the dialect vocabulary associated with the concept of "death".-21. *E.Z. Mirzoyan*. Interaction of western armenian and turkish languages. – 33. **Discussion:** *A. S. Galstyan*, Issues of semantic-structural analysis of new words in the modern Armenian language - 48. *G. G. Grigoryan* - The influence of consonant on vowel in the consonant- vowel combinations (experimental research) – 56. *L. G. Telyan*. To the question of the relation between syntactic units and types of syntactic connection. - 63. **Reports.** *S. V. Papikyan*, Examination of exotisms of Iranian origin – 77. *A. E. Petrosyan*, Etymologies - 85. **Review** - 97. **Book reviews** - 1012. **Science News** – 108.

Ի Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ lezu.lezvabanutyun@gmail.com

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал- 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- TimesNewRoman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: lezu.lezvabanutyun@gmail.com

A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics»magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: lezu.lezvabanutyun@gmail.com